

# ՄՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՅԻ



## ՉՈՐՍ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ



Ս. Էջմիածին 1997

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>


Հոգեւոր Գրադարան

ՄՏԵՓԱՆՈՍ ՄԻՒՆԵՑԻ

Է-Ը դար



**ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ ՉՈՐԻՑ  
ԱՎԵՏԱՐԱՆԱՑՆ**



*Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական  
Դաստիարակության և Քարոզչության Կենտրոն*

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ԿԱՄՐՁԱԶՈՐԻ ՎԱՆՔ 1155

ԵՐԵՎԱՆ 1994

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ

ՉՈՐՍ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՌՈՏ  
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՄԱՆԱԻ  
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա  
ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ  
1997

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>



## ՀԱՅՈՑ ԻՄԱՍՏԱՍԵՐ ԵՎ ՍՅՈՒՆՅԱՑ

### ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ՝

### ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏԾՈՒ ԶՈՐՍ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ

### ՀԱՄԱՌՈՏ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

### ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ

Ա

«Գիրք սզգաբանության Հիսուս Քրիստոսի՝ Դավթի որդու» (Մատթ. Ա 1):

Գիրք լինելության են ասում հերձվածողները, նրանք, ովքեր ասում են, թե Քրիստոս՝ Աստծու Որդին, գոյակցութեամբ մշտնջենավորակից չէր Հորը, այլ ստեղծված է և սկիզբ է առել Մարիամից: Իսկ մենք այդպես չենք [ասում], այլ գիրք լինելության ենք ասում Լինելությանը, Նրան, Ով մեր փրկության Համար մարդ եղավ և ամեն ինչով մեզ նմանվեց, բացի մեղքերից:

«Հուդան ծնեց Փարեսին և Զարային՝ Թամարից, Աբրահամը ծնեց Իսահակին՝ Սաուայից, Իսահակը ծնեց Հակոբին՝ Ռեբեկայից, Հակոբը ծնեց Հուդային՝ Լիայից» (Մատթ. Ա 2-3):

...Բայց մյուսների մայրերի մասին լուեց և [միայն] Թամարին հիշելով՝ ասաց, թե Հուդան ծնեց Փարեսին՝ Թամարից: Վերը նշվածը այս

խնդրի վերաբերյալ ասում ենք, թե Աբրահամին հիշատակելիս հիշեց նաև Սաուային, քանի որ Աբրահամը և Սաուան մի մարմին էին, և Իսահակն ու Ռեբեկան նույնպես մի մարմին էին, իսկ Հուդան և Թամարը մի մարմին չէին, քանի որ Թամարին այս Հուդան պոռնիկ Համարեց:

Այդ պատճառով Ավետարանիչը հիշեց Թամարին նույնպես և Բերսաբեին, Ռահաբ պոռնիկին և Հուլի Մովաբացուն, որպեսզի ցույց տա, որ [Աստված Իր] բազում և անքննելի մարդասիրությունից [մղված] արժան է Համարում պոռնիկների իսկ որդի կոչվել և պոռնիկներին ու օտարագրվածներին մայր է անվանում:

«Հովրամը ծնեց Ոգիային, Ոգիան ծնեց Հովաթամին» (Մատթ. Ա 8):

Զորորդ Թագավորության [գրքում] գրված է. Հովրամը ծնեց այս Ոքոզիային, որի վախճանվելով Հովրամ Թագավորի դուստրը՝ Ոքոզիայի քույր Հովասաբեթը, փախցրեց [Ոքոզիայի որդի] Հովասին, որը և Թագավորեց, որից հետո [Թագավորեց] նրա որդի Ամասիան, նրան Հաջորդեց իր որդի Ազարիան (տե՛ս Դ Թագ. Ը, Թ, ԺԱ): Արդ Հարց կա կապված այդ երեք Թագավորների անունների հետ:

«Ահա կույսը պիտի հղիանա և որդի պիտի ծնի, և նրան պիտի կոչեն Էմմանուել» (Մատթ. Ա 23):

Թարգմանիչները «ասղամա» բառը եբրայերենից Թարգմանեցին կույս, իսկ Ակյուղան ու Սիմաքոսը՝ օրիորդ կամ մանկամարդ, իսկ Երկրորդ Օրենքում «աղաղամայ» բառը Թարգմանեցին կույս [հետևյալ խոսքում]։ «Եթե քաղաքում մի տղամարդ Հանդիպի մարդու հետ նշանված կույս աղջկա և այլն» (Բ Օրենք ԻԲ 23):

Բ

«Որովհետև Նրա ասողը տեսանք արևելքում» (Մատթ. Բ 2):

Ինչպես այն մեծ աստղերը, որոնք գիտավորներ են կոչվում, իրենց երևումով նոր բաներ են խորհրդանշում, [այնպես էլ այս] աստղը, առավելագույնս հրաշափառ երևաց Փրկչի ծնվելու ժամանակ, կամ էլ նույնիսկ մի հրեշտակ երևաց՝ աստղի նմանութեամբ:

«Իսկ նրանք ասացին. «Հրեաստանի Բեթղեհեմ...» (Մատթ. Բ 5):

Բեթղեհեմ [բառը] հացի տուն է թարգմանվում, ուր ծնվեց Կենդանի Հացը, որ երկնքից իջավ և աշխարհին կենդանություն է տալիս:

*«Եվ դու, Բեթղեհեմ, Հուդայի՝ երկիր, Հուդայի առաջնորդների և իշխանների մեջ ոչնչով ավելի փոքր չես, քանզի քեզնից մի իշխան պիտի ելնի, որ պիտի հովվի Իսրայելին» (Մատթ. Բ 6):*

Միքիա մարգարեն այսպես է ասում. «Եվ դու, Բեթղեհեմ, Եփրատ-թալի տուն, սակավամարդ կլինես Հուդայի երկրի հազարավորների մեջ, քեզնից պիտի ելնի ինձ համար Իսրայելի մի իշխան, և Նրա ծագումն աշխարհի սկզբի օրերից է» (Միք. Ե 2):

Արդ քննելի է, արդյոք ինչո՞ւ Ավետարանիչը նույնությամբ չգրեց [բառերը], ինչպես կային մարգարեի մոտ, այլ փոխեց: Կարծիքներ կան, թե այս վկայությունը տրվել է եբրայերեն [տեքստից] և ոչ ըստ Յոթանասնից թարգմանության:

*«Եվ բանալով իրենց գանձատուփերը՝ Նրան նվերներ մատուցեցին՝ ոսկի, կնդրուկ և գմուռս» (Մատթ. Բ 11):*

Ոսկի էին մատուցում՝ իմանալով, որ թագավոր է, կնդրուկ, քանզի Աստված է, գմուռս՝ խորհրդանշելով մահը, որը ընդունելու էր մեր փրկության համար:

*«Եվ երազի մեջ հրաման առնելով...» (Մատթ. Բ 12):*

Ումի՞ց են հրաման ստացել՝ գրված չէ: Հայտնի է, որ Տերն Ինքն է հրամայել: Հրաման են ստացել ետ չդառնալ Հրեաստանի անխաղաղ ճանապարհով:

*«Որպեսզի կատարվի Տիրոջ կողմից ասվածը, թե Եգիպտոսից պիտի կանչեմ իմ որդուն» (Մատթ. Բ 15):*

Ըստ Յոթանասնից [[թարգմանության] Ովսեի մարգարեությունում այսպես է գրված. «[Քանի դեռ] մանուկ էր [Իսրայելը], ես սիրեցի Նրան և Եգիպտոսից կանչեցի Նրա որդիներին» (Ովսե. ԺԱ 1), իսկ Ակյուղասը [գրում է]. «Ժամանակը լրանալով՝ ընկավ Իսրայելի թագավորը. սիրեցի Նրան և Եգիպտոսից կանչեցի իմ որդուն»:

Քանի որ Մատթեոսը եբրայերենով գրեց այս ավետարանը, և նա,

ով թարգմանել է, վկայությունն ըստ եբրայերենի է տվել:

*«Մարդ ուղարկելով՝ կոտորեց Բեթղեհեմում գտնվող բոլոր մանուկներին» (Մատթ. Բ 16):*

Ովքեր կամովին մահանում են Քրիստոսի անվան համար, կատարյալ են, իսկ այս դեպքում Նրա համար և Նրա փոխարեն այն մանուկներն էին [նահատակվում], ովքեր ունեին Քրիստոսի նույն հասակը և ծննդյան նույն վայրը:

*«Ռամայում մի ձայն լսելի եղավ, ողբ, լաց ու սաստիկ կոծ. Ռաբելը լալիս էր իր զավակների վրա և չէր ուզում մխիթարվել, քանի որ նրանք այլևս չկային» (Մատթ. Բ 17-18):*

Եբրայերեն [տեքստում] այսպես է. «Բարձունքում մի ձայն լսելի եղավ, լալիս են որդիների [համար], քանի որ [նրանք] չկային» (Երեմ. ԼԱ 15): [Լալիս և կոծում] են նրանք, ովքեր հարության խորհուրդը չեն գիտակցում, իսկ ովքեր սովորեցին Քրիստոսից, թե Իրենով պիտի հարություն առնեն, այնպիսիք չեն լալիս ու կոծում:

*«Որպեսզի կատարվի մարգարեի միջոցով ասվածը, թե՛ Նագովրեցի պիտի կոչվի» (Մատթ. Բ 23):*

Այստեղ «Նագովրեցի» բառը մեկնաբանվում է որպես սուրբ, և մարգարեներից շատերը այսպես ասացին Քրիստոսի վերաբերյալ:

## Գ

*«Այն օրերին Հովհաննես Մկրտիչը գալիս է» (Մատթ. Գ 1):*

Հովսեփոս պատմիչը իր պատմության տասնութերորդ գլխում վկայում է Հովհաննեսի մասին: Եվ Հովհաննեսը, քարոզելով հրեաների անապատում, ասում էր. «Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. Գ 2):

Արդ, ինձ թվում է, թե այստեղ Հրեաստանն է անապատ անվանում կամ էլ ամբողջ երկիրը, որ չեղված էր աստվածապաշտությունից, ինչպես իսկ վրա է բերում:

*«Երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. Գ 2):*

Մոտեցել էր Քրիստոսի գալուստը: Առանց Հովհաննեսի և նրա

նմանի չի պատրաստվի Քրիստոսի ճանապարհը, իսկ անապատ ճանապարհով Աստծու խոսքը չի գնա դեպի Հոգիները, և [նրանք], ում չավիրները ուղիղ չեն, չեն կարող ընդունել ճշմարտին՝ Քրիստոսին:

*«Անապատում կանչողի ձայնն է, պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը և ուղղեցե՛ք նրա շավիղները» (Մատթ. Գ 3):*

Ձայնը Հովհաննեսինն է, կանչողը՝ Քրիստոս: Երկիրը դեռևս չեղված էր աստվածաշտուծյունից: Քանի որ ինչպես ձայնի միջոցով խոսքն ու կանչն ենք ըմբռնում, նույնպես և Հովհաննեսի միջոցով ըմբռնում ենք Աստծու խոսքը և կյանքի կանչը:

*«Անապատում կանչողի ձայնը» (Մատթ. Գ 3):*

Հոգիներով, ուր անապատ է մարդկային զբաղմունքների և խռովությունների պատճառով ու Աստծուց մեկուսի, Համաձայն սաղմոսերգուի խոսքի. «Եղա, ինչպես մեկուսի ճնճողով տանիքում» (Սաղմ. ՃԱ 7): Հովհաննեսը ձայնով մեկ գոչում էր, թեպետև երևելիների նման չէր աղաղակում, ինչպես Քրիստոսի Համար է ասվում. «Կանգնած աղաղակում էր», ինչպես նաև Մովսեսի Համար էր ասում Աստված. «Ինչո՞ւ ես կանչում ինձ» (Ելք ԺԴ 15): Նաև Դավիթն է ասում. «Իմ ձայնով ես Տիրոջը դիմեցի» (Սաղմ. ՀԶ 2):

*«Եվ ինքը՝ Հովհաննեսը, քարոզում էր, նա ուխտի մագից զգեստ ուներ և կաշվե գոտի՝ իր մեջքին, իսկ նրա կերակուրն էր մորեխ ու վայրի մեղր» (Մատթ. Գ 4):*

Ուղտի մագ էր Հագել՝ վերացնելու Համար նրանց կուրուծյունը, ուլքեր կուլ էին տալիս ուղտերին (տե՛ս Մատթ. ԻԳ 24) և մերկացել էին Գառից՝ Քրիստոսի զգեստից: Եվ ինչպես Հակոբը Հովսեփի վրա ողբալու ժամանակ մագեղեն քուրձ էր կապել մեջքին (տե՛ս Ծննդ. ԼԵ 34), նույնպես և Հովհաննեսը՝ մորթիով, որ կապված էր մեջքին, ողբում էր Իսրայելի մեջքի պտուղը և նրանց Հոգիների ամլուծյան մեռելուծյունը, ինչպես Եղիան ողբում էր ժողովրդի վրա:

Իսկ «մորեխով կերակուրել» ասում է՝ ցույց տալով նրանց Հոգու կերակուրը, թե վեմի վրա հիմնված չէին, այլ օղագնաց և շարժուն էին, ինչպես մորեխը: Նաև ուտում էր վայրի մեղր, այլ ոչ ընտանի,

խորհրդանշելով նրանց ամբարշտուծյան վայրագուծյունը, որ թողած ընտանի բարեպաշտուծյան քաղցրուծյունը՝ վայրագուծյամբ [էին սնվում], որը չէր գործադրված մովսեական և մարգարեական վարդապետուծյունից՝ ընտանի անխայթ մեղուների կողմից, այլ արտաքին պիծառների, ինչը միառժամանակ քաղցր էր թվում քիմքին, իսկ քիչ հետո ավելի էր դառնանում, քան լեղին, որովհետև Հովհաննեսի գործը ողբալն էր ու [ժողովրդին] կոչ անելը կոծի ու [սգի]:

Ինչպես ասում էին մանուկները. «[Զեզ Համար] ողբ երգեցինք, լբայց դուք լաց] ու կոծ չարեցիք» (Մատթ. ԺԱ 17) ակնարկելով Հովհաննեսի գալուստն ու վարքը:

*«Խոստովանելով իրենց մեղքերը» (Մատթ. Գ 6):*

Ուլքեր խոստովանում են մկրտուծյան ժամանակ, արձակվում են իրենց մեղքերից, որովհետև, արդարև, իրենք իրենց են մեղադրում, [ըստ խոսքի]. «Եվ դու նախ խոստովանի՛ր քո մեղքերը, որպեսզի արդարացվես» (Եսայի ԽԳ 28): «Մեղքերս քեզ ցույց կտամ, և իմ Հանցանքները չեմ թաքցնի» (Սաղմ. ԼԱ 5, Եսայի ԽԳ 26):

*«Տեսնելով սաղուկեցիներից և փարիսեցիներից շատերին, որ գալիս էին նրա մոտ մկրտվելու, ասաց նրանց. «Իժերի՛ ծնունդներ, ո՞վ ձեզ սովորեցրեց փախչել վերահաս բարկուծյունից» (Մատթ. Գ 7):*

[Այսպես ասաց] աներևույթ թշնամուն և նրա սպասավորներին, քանզի նրանք են իժերի որդիներ և ծնունդներ, ուլքեր ընթանում են նրա վարդապետուծյան հետ և վարժվում: Արդ, Հովհաննեսը տեսնելով, որ իրեն մոտենում են թյուր և կամակոր մտքերով՝ չխոստովանելով իրենց մեղքերը, նրանց իժերի ծնունդներ և որդիներ անվանեց: «Որտեղի՞ց իմացաք, ղասում է, մթե բարկուծյուն է գալու և Հարկ է փախչել բարկուծյունից, ինչո՞ւ եք մեղքերի խոստովանուծյուն ցուցադրում, որը, սակայն դուք չեք խոստովանում»:

*«Արդ ապաշխարուծյանը արժանի պտուղ տվեք» (Մատթ. Գ 8):*

Եվ մի [տվեք] միայն տերև, ինչպես թզենին, որն անիծում է Քրիստոս (տե՛ս Մատթ. ԻԱ 18-20), ինչը ցույց էր տալիս, թե պտուղ է բերում, բայց բերում էր միայն տերև:

«Եվ մի՛ հավակնեք ասել դուք ձեզ, թե Աբրահամը մեր հայրն է. ասում եմ ձեզ, որ Աստված կարող է այս քարերից էլ Աբրահամի որդիներ դուրս բերել» (Մատթ. Գ 9):

[Այսպես ասաց նրանց], ովքեր ըստ մարմնի պարծենում էին Աբրահամով: [Սրանով] մարգարեանում է նրանց քարանալն ու լուծարվելը և Հեթանոսների կոչումն ու քարեղեն սրտի փոխարեն Հոգեղեն մարմին ստանալը, ովքեր անզգամների նման քարերին և փայտերին էին ծառայում:

«Արդ, ահավասիկ կացինը ծառերի արմատին է դրված» (Մատթ. Գ 10):

Եվ ո՞վ է կացնավորը, որ կտրում է անհավատությունը. [սա] Քրիստոսի խոսքի մասին է ասվում, [որ] ազդող և հատող է, քան ամենայն երկայրի սուր, որով կտրվեցին իմանալի ծառի ոստերը, որոնք հնազանդվեցին Նրա վարդապետությունը, որպեսզի պատվաստվեն գեղեցիկ ձիթենու վրա (տե՛ս Ովսե. ԺԴ 7):

«Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարություն համար» (Մատթ. Գ 11):

Իմ մկրտությունը մարմնական է, նման է սրբողի Հոգուն: Իսկ որ ասաց՝ ապաշխարություն համար, հայտարարեց, թե օգուտ է տալիս նրանց, ովքեր բարի կամքով և ուղիղ մտքով են մոտենում [մկրտությունը], և դատապարտում է նրանց, ովքեր դժկամությամբ են մկրտվում:

«Ինձանից հետո գալիս է ավելի հզորը, քան ես, որի կոշիկները արժանի չեն ոտքերից հանելու» (Մատթ Գ 11):

Ինձանից հետո գալու է Նա, որի երկու կոշիկների, այսինքն՝ մարմնանալու և դժոխք իջնելու [իմաստը] արժանի չեմ մեկնելու, կամ իմ մտքով իմանալու Հին ու Նոր Կտակարանների իմաստն ու գորությունը:

«Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և Հրով» (Մատթ. Գ 11):

Որպեսզի ոչ միայն մեղքերի թողություն չնորհվի, այլև [մեղքերի] լիակատար ջնջում և ոչնչացում: Ջրի [միջոցով] թողություն [տալը Սուրբ] Հոգով է լինում, [իսկ մեղքերի լիակատար] ոչնչացումը՝ իմանալի հրով:

«Որի քամհարը իր ձեռքում է, և կմաքրի իր կալը» (Մատթ. Գ 12):

Քամհարը Քրիստոսի գորությունն է, ցորենի՝ արդարների և հարդի՝ մեղավորների, ընտրողն ու գատողողը: Կալը երկիրն է, ինչպես և գրված է «Դատավորներ» գրքում, Գեղեոնի բուրդը կալի մեջ դնելու պատումում, որը՝ կալը, նախապես չոր էր, [այսինքն՝ ուներ] աստվածպաշտություն [պակաս], բացի գեղմից՝ Իսրայելի ժողովրդից: Իսկ Հաջորդ օրը հակառակն է նշանակում. չորությունը՝ բրդի վրա, և խոնավությունը՝ ամբողջ կալի (տե՛ս Դատ. Զ 36-40):

Արդ, քամհարով՝ իր ազդու խոսքով, վարդապետություն կամակատարներին՝ հավատացյալներին, [առանձնացնում է] իր կալում, իսկ անհավատ ապստամբներին պիտի այրի անչեջ հրով:

«Իսկ Հովհաննեսը ընդդիմացավ նրան և ասաց. «Ի՛նձ պետք է քեզ նից մկրտվել, և Դու ի՞նձ մոտ ես գալիս» (Մատթ. Գ 14):

Հովհաննեսը գիտեր, որ հարկ է իրեն մկրտվել Աստծու Գառից, Ով վերցնում է աշխարհի մեղքը (Հովհ. Ա 29):

«Հիսուս պատասխանեց և ասաց նրան. «Թո՛ւյլ տուր հիմա, որովհետեւ այսպես վայել է մեզ կատարել Աստծու բովանդակ արդարությունը» (Մատթ. Գ 15):

Քանի որ ոչ թե կարիք ունեմ [այն] արդարություն, որը ապաշխարությունից է, և դրա համար եմ մկրտվում, որպեսզի մեղքերի թողություն լինի, այլ այսպես հարկ է ինձ ու քեզ կատարել ամբողջ արդարությունը: Քանի որ ես, որ անմեղ եմ, կարծում եմ, [որ] կարիք ունեմ մկրտություն, [սպա] որքան ևս առավել՝ մեղավորները, ովքեր մկրտության ժամանակ խոստովանելով [իրենց] մեղքերը՝ թողություն պիտի գտնեն:

## Դ

«Այնժամ Հիսուս անապատ տարվեց Հոգուց՝ սատանայից փորձվելու: Եվ քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմ պահեց, սպա քաղց զգաց» (Մատթ. Դ 1-2):

Հովհաննես ավետարանիչը փորձություն մասին չգրեց, քանի որ աստվածաբանում էր՝ ասելով. «Սկզբից էր Բանը, և Բանն Աստծու մոտ

էր, և Բանն Աստված էր» (Հովհ. Ա 1): Եվ որովհետև Աստծուն և Լույսին, ըստ աստվածութեան, անհնարին է փորձել, այլ միայն ըստ մարդեղութեան, որն առավ մեր փրկութեան համար, այս պատճառով էլ Հովհաննեսը լռեց:

Իսկ Մատթեոսը, գրելով ծննդեան մասին ըստ մարդեղութեան և Հովհաննեսից մկրտվելու մասին, ինչպես և այլ մարդիկ, գրեց նաև ըստ մարմնի՝ սատանայից փորձվելը: Սատանան ուրիշներին փորձում է առանց մեծ ջանքերի, իսկ Քրիստոսին՝ այսպես [փորձեց], որովհետև եթե [ծով] պահելուց չքաղցեր, փորձութունը չէր սկսվի, իսկ երբ քաղցեց, կարծեց, թե սոսկ մարդ է և դրա համար մոտենալով՝ փորձում էր Նրան:

*«Եվ փորձիչը՝ սատանան, մոտենալով նրան՝ ասաց. «Եթե Աստու Որդին ես, ասա՛, որ այս քարերը հաց լինեն» (Մատթ. Դ 3):*

Արդյո՞ք բանասերկուն լսեց ձայնը, որ ասաց. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որին հավանեցի» (Հովհ. Ա 1): [Երկնային] ձայնին թերահավատալով՝ այժմ ասում է, եթե, արդարև, ճշմարիտ էր ձայնը, որ Դու Աստու Որդի ես, ասա՛, որ այս քարերը հաց լինեն:

*«Իսկ Նա պատասխանելով ասաց. «Գրված է՝ միայն Հացով չի սպլի մարդ, այլ ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստու բերանից» (Մատթ. Դ 4):*

[Այս մասին] գրված է «Երկրորդ Օրենքի» գրքում (տե՛ս Բ Օր. Ը 3), որը մեզ սովորեցնում է, որ ոչ միայն [զրկանքներով] և մարմնի չարչարանքներով ենք փորձվում, այլև քաղցր խոսքերով: Եթե դու սուտ ես կարծում այդպիսի խոսքերով կամ հացով հոգիների սպրելը, [ապա մենք՝ ոչ], և միայն Աստու [խոսքը] իբրև կերակուր ունենալով՝ [սատանա՛], քո կերակուրների կարիքը չունենք: Ինչպես և պարզ է դառնում Քրիստոսի պատասխանից, եթե փորձութեան ենթարկվող մարդը չի կերակրվում Աստու խոսքով, չի կարող փրկվել:

*«Այնժամ սատանան Նրան տարավ սուրբ քաղաքը և կանգնեցրեց Նրան [տաճարի] աշտարակի վրա ու ասաց Նրան. «Եթե Աստու Որդին ես, քեզ ցա՛ճ նետիր...» (Մատթ. Դ 5-6):*

Բանասերկուի ասած «Քեզ ցա՛ճ նետիր» խոսքով Քրիստոս չէր կարող իրեն [ցած] նետել, որովհետև ով իրեն նետում է տաճարից կամ տաճարի

չինությունից, ինքն իրեն պարտապան [է դարձնում] բանասերկուն: Միգուցե այսպիսի [դեպք] տեսնես, որ աստվածային վարդապետութեան դեմ մեղանչած [մեկը կամենա] իրեն ցած նետել Աստու տաճարից: Սակայն Քրիստոս, [Ով] կատարելապես անմեղ է, ինչո՞ւ իրեն ցած նետի տաճարի չինությունից:

*«Որովհետև գրված է, թե իր հրեշտակներին պատվիրված է Քո մասին, և ձեռքերի վրա պիտի վերցնեն Քեզ» (Մատթ. Դ 6):*

Գրված է սաղմոսների գրքում, մանավանդ, արդարների վերաբերյալ. «Քանզի չես վախենա կեսօրին դեի գայթակղությունից և ոչ էլ ցերեկվա պացող նետից» (Սաղմ. Դ 6): Եվ [Քրիստոս], հրեշտակների Արարիչ լինելով, հրեշտակների օգնութեան կարիքը չի գգում: Բայց եթե [այս ամենը] Քրիստոսի մասին ասվեց, ապա ինչո՞ւ չասաց նաև Հաջորդող խոսքը, թե [Դու] կքայլես իժերի ու քարերի վրայով, և [տոքով] կկոխես առյուծին ու վիշապին (տե՛ս Սաղմ. Դ 13): Որովհետև այդ ամենն իր՝ [սատանայի] մասին էր, դրա համար [էլ] լռեց:

*«Դարձյալ նրան ասաց. «Քո Տեր Աստու պիտի չփորձես» (Մատթ. Դ 7, Բ Օրենք 2 16):*

Երկրորդ օրենքում գրված է, թե բարեպաշտ մարդիկ իրենք իրենց չեն մեռցնում: Արդ, ասելով, թե՛ «Քո Տեր Աստու պիտի չփորձես», թվում է, թե [վախենում է, որ եթե] աշտարակից ընկնի, պիտի արձակի հոգին: Խնդիրը դժվարանում է նրանով, որ Նա, Ով քայլում էր ծովի ալիքների վրայով առանց սուզվելու, և դեռ նույնիսկ սաստում էր [փոթորիկը], այժմ օդի վրայով քայլելուն [անտեղյակ լինել] նշանակում է չիմանալ ավետարանվածը, և այդ այդպես է:

Իսկ ինչպես ինձ է թվում, ամենավերջին անմտություն է կարծել, թե Քրիստոս զգալի մարմնով գնում է սատանայի ետևից, բարձրանում է տաճարի աշտարակի վրա, և այնուհետև՝ լեռ և լեռան [վրայից] տեսնում բոլոր թագավորութայնները: Արդյոք ո՞ր տեսանելի լեռն է ելնում, և կամ ինչպե՞ս էին Նրան ցույց տրվում երկրի բոլոր թագավորութայնները, թեկուզև լեռան գագաթը հասներ մինչև երկնքում կախված լուսնի գունդը: Բայց որպես ավետարանիչն է ասում, թե Քրիստոս կանգնած էր տաճարում և աղաղակում էր (տե՛ս Հովհ. է 28),



և ինչպես «Քրիստոսի աղաղակելը» մարդկային մտքով ըմբռնել, Հե-տին Հիմարություն է, նույնպես և «բարձրանալը» կամ աստանայի կող-մից Նրան տաճարի տեսանելի «աշտարակ» կամ «լեռ բարձրացնելը» և միաժամանակ երկրի բոլոր թագավորությունները Նրան ցույց տալը:

Ապա, ուրեմն, մեկը կկարծի՝ ասելով՝ միգուցե ավետարանիչը ու-զում է ասել աստանայի՝ Հիսուսին վեր բարձրացնելը [պետք է Հասկանալ այնպես], ինչպես մարդուն դեպի գիտությունների բարձունքները [վեր Հանելը], մինչև Նրա գիտենալը, այն ամենի, որի Համար ասաց. «Որդին չգիտե, այլ միայն Հայրը» (Մատթ. ԻԴ 36), քանզի դեռևս փառավոր-ված չէր, այլ տակավին ավելի փոքր էր, քան Հրեշտակները՝ Համաձայն Պողոսի ասածի (տե՛ս Եբբ. Բ 7): Արդ՝ [Որդին], Հասնելու Համար այնպի-սի գիտության, որի Համար ասվեց, թե միայն Հայրը գիտե, որովհետև [Որդին] դեռևս փառավորված չէր, և դեռևս Հոր [կողմից] թշնամիներն իբրև Նրա ոտքերի պատվանդան չէին դրված (տե՛ս Սաղմ. ձԹ 1):

Ավետարանիչն ասաց, թե «անապատ ելավ», [այն է՛] ցանկացավ իմանալ այն, ինչը տակավին մարդկորեն չգիտեր, այլ Աստծու բերա-նից էր դուրս գալիս Նրա իմացությունը, ուստի և աստանայից լսելով. «Թե Աստծու Որդի ես, ինչպես և ասաց երկնային ձայնը, -հրամայիր այս իմացությանը, որպեսզի Քեզ կերակրի», որով անհնարին է կերակր-վել, բացի Աստծու Որդուց, ինչպես անկարելի է մարմնին կերակրվել քարով: Որին պատասխանում էր՝ ասելով. «Ես, որ մարդացել եմ, ոչ մի-այն այդ Հացով եմ կերակրվում, այլև ամեն խոսքով, որ ելնում է Աստ-ծու բերանից» (տե՛ս Ղուկ. Դ 3-4):

Եվ ինձ՝ որպես մարդու, թվում է՝ անհնար է այդպես կարծելը՝ աշ-տարակ և ամենաբարձր լեռ բարձրանալը: Եվ այդպես կարծելով՝ կարելի է կարծել նաև. առաջին՝ ոչ միայն իմանալի կերակուրների ցանկանալը, այլև մարդու նման քառասուն օր մեկուսանալով՝ մարմնեղեն կերակուր ցանկանալը, մինչև [անգամ] աստանայի [ձայնին] լսելը՝ աներևույթ ձայ-նի լսելու նման: Եվ երկրորդ՝ տեսանելի կերպով տաճարի աշտարակը և բոլոր լեռներից ամենաբարձրի վրա ելնելը անհնարին եմ կարծում:

*«Այս ամենը Քեզ կտամ, եթե գետին ընկնելով ինձ պաշտես»*  
(Մատթ. Դ 9):

Հանում էր Նրան ամենաբարձր լեռը, [որպեսզի] թագավորություն

ցանկանա: Եվ ասում է. «Այս կպարգևեմ Քեզ, եթե Հնազանդվելով ինձ՝ երկրպագես»:

*«Ետև՛ս գնա, աստանա՛»* (Մատթ. Դ 10):

Աստանա [բառը], ըստ եբրայերենի՝ Հակառակորդ է Հասկացվում: Ցամամբ ասված՝ «Ետև՛ս գնա, աստանա՛» սաստումից երկնչելով՝ Նրանից փախավ:

*«Երբ Հիսուս լսեց, թե Հովհաննես բանտարկվել է, մեկնեց գնաց Գալիլիա: Եվ թողնելով Նազարեթը՝ եկավ բնակվեց Կափառնայում»*  
(Մատթ. Դ 12-13):

Որովհետև Գալիլիա [բառը] մեկնաբանվում է որպես խառնակու-թյուն, իսկ Կափառնայումը՝ մխիթարության տեղ: Արդ, Հովհաննեսի մատնության ժամանակ խառնակություն և շփոթություն եղավ, այդ պատճառով էլ ասվեց, թե թողնելով խառնակությունը՝ եկավ Կափառ-նայում, որ մխիթարության վայր է կոչվում: Քանի որ Հովհաննեսին պետք էր խառնակությունից մխիթարության վայր գնալ:

*«Ջաբուղոնի և Նեփթաղեմի սահմաններում»* (Մատթ. Դ 13):

Ջաբուղոն թարգմանվում է գորության բնակարան, իսկ Նեփթա-ղեմ՝ ընդարձակություն: Քանի որ [այդտեղ] ընդարձակվեց Քրիստոսի վարդապետության շնորհը, դրա Համար էլ ասաց. «Ջաբուղոնի և Նեփ-թաղեմի սահմաններում բնակվեց», որպեսզի կատարվի մարգարեի խոս-քը, թե այն ժողովուրդը, որը նստած էր խավարում, այսինքն՝ կուս-պաշտության և անաստվածության մեջ, տեսավ մեծ լույս (տե՛ս Եսայի Թ 2), որ լուսավորում է ամեն մարդու, որ դալու է աշխարհ (տե՛ս Հովհ. Ա 9), ինչպես աստվածաբան ավետարանիչն է վկայում:

*«Հիսուս սկսեց քարոզել և ասել. «Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է»* (Մատթ. Դ 17):

Քարոզում էր նրանց, ովքեր լուսավորվածներ և կանչվածներ էին:

*«Մինչ Հիսուս Գալիլիայի ծովեզերքով քայլում էր, տեսավ երկու եղբայրների՝ Սիմոնին, որ Պետրոս էր կոչվում, և նրա եղբայր*

**Անդրեասին. ծովի մեջ ուռկան էին գցում, քանի որ ձկնորսներ էին» (Մատթ. Դ 18):**

Կափառնայում գնալուց Հեսո Ջաբուղոնի և Նեփթաղեմի սահմանների մոտ բովանդակապես քարոզելով երկնքի արքայության մոտենալու մասին՝ գնաց Գալիլեայի ծովեզերքը: Եվ իրոք ծովեզերք, և ոչ թե ծովի վրա կամ նավ մտավ, քանի որ տեսնում էր Հաստատության վեմը՝ Պետրոսին, ով երբեք չսասանվեց ծովի ալեկոծությունից, այսինքն՝ այս ալեկոծյալ աշխարհի ծփանքներից, որ թեպետև նավում էր՝ մարդկային մարմնում, սակայն մարմինն ու արյունը չէ, որ նրան սովորեցրին ճանաչել Աստծու Որդուն (տե՛ս Մատթ. ԺԶ 17):

Մարմինն ու արյունը խորհրդանշում են մարդկային կենցաղի ավանդություններն ու սովորությունները: Նրա Հետ մեկտեղ տեսնում է նաև Անդրեասին՝ նրա եղբորը, ծովը ուռկան գցելիս, քանի որ դեռևս լուսավորված չէին այն վերին լույսով, որ լուսավորում է ամեն մարդու, որ գալու է աշխարհ (տե՛ս Հովհ. Ա 9): Իրենց ուռկան կոչված գործիքները գցում էին ծովի՝ կյանքի ալեկոծության մեջ, իսկ երբ արժանավորվեցին տեսնել անկոծելի Լույսը և նրանով լուսավորվել, այնժամ թողնելով անցավոր լույսի գործերը՝ Հետևեցին Մեծին՝ իմանալի և անանցանելի Լույսին:

Դրա Համար մարդկային Հոգիների որսորդներ եղան՝ իրենց վարդապետության ցանցերով որսալով և կորզելով նրանց կամակոր վիշապի երախից ու ժանիքներից, որ կամենում է բոլոր մարդկանց որսալ և գցել իր ցանցերի՝ Հավիտենական Հրի մեջ:

**«Եվ այնտեղից առաջ գնալով՝ տեսավ երկու այլ եղբայրների՝ Ջեբեղիոսի որդի Հակոբոսին և նրա եղբայր Հովհաննեսին, մինչ նավակի մեջ էին իրենց հոր՝ Ջեբեղիոսի Հետ միասին» (Մատթ. Դ 21):**

Ամենագետ Փրկիչը՝ մարդկանց Հոգիների քննողը, իմանալով Ջեբեղիոսի որդիներին և նրանց սրտանց Հոթարությունը, որ ունեին Աստծու նկատմամբ, նաև նրանց է հրավիրում անբանների ձկնորսությունից բանականների [ձկնորսության]: Ուստի նրանք, գվարթությամբ լսելով Քրիստոսի կենարար ձայնը, երկրային բոլոր ցանկությունները և զբաղմունքները լքելով, փութով գնացին կանչողի ետևից: Մի կողմ թողնելով իրենց հորը և բնական Հայրենի գութը՝ Հետևեցին Քրիստոս-

սին, քանի որ Հոգով լսեցին գալիք կենարար ձայնը, որ նրանց ասելու էր. «Ով իր հորը և կամ մորը ինձանից ավելի է սիրում, Ինձ արժանի չէ» (Մատթ. Ժ 37): Այդ պատճառով Քրիստոսի նկատմամբ խիստ սիրուց Հառնելով՝ խաչն են Հանում իրենց մարմինները՝ կրքերով և ցանկություններով Հանդերձ (տե՛ս Գաղ. Ե 24), և թողնելով ամեն ինչ՝ եղան ունկնդիր Քրիստոսի ձայնին:

**«Եվ Հիսուս շրջում էր Գալիլեայի բոլոր կողմերը, ուսուցանում էր նրանց ժողովարաններում» (Մատթ. Դ 23):**

Գալիլեա բառը եբրայերենից թարգմանվում է որպես բնակավայրի փոփոխում, որով Հետև մարդկանց ամբարիշտ գործերը փոփոխում էր բարեպաշտության՝ անցնելով, քարոզելով ու բժշկելով ոչ միայն տեսանելի ախտաժետներին, դիվահարներին ու լուսնոտներին, այլև առավելաբար Հոգեպես օգնության կարիք ունեցողներին: Այս պատճառով ասաց՝ շրջեց Գալիլեայում, այսինքն՝ փոփոխված բնակավայրում:

Լուսնոտությունը, ինչպես բժիշկներից շատերն ասացին, մարմնի մաղձալից Հիվանդություն է, որն առաջանում է, երբ լուսինը իր շրջապատության ժամանակ բարձրանում է դեպի արեգակը:

Եվ այդպես իր ձևով ձևավորվելու ժամանակ գանազան ազդեցություն է ունենում կենդանիների մարմինների և բույսերի վրա: Եվ սա անհայտ չէ, քանի որ շատերը լուսնի լրումից և խավարումից դառնում են ինչպես դիվահար, և պատահում է, որ դեռ, հրճվելով և ուրախանալով լուսնի փոփոխումներով, Հայտնվում է մարդկանց մեջ:

**Ե**

**«Եվ Հիսուս, տեսնելով ժողովրդի բազմությունը, բարձրացավ լեռան վրա: Եվ երբ այնտեղ նստեց, Նրա մոտ եկան իր աշակերտները, և Նա, բացելով իր բերանը, ուսուցանում էր նրանց և ասում.**

**«Երանի՛ Հոգով աղքատներին, որով Հետև նրանցն է երկնքի արքայությունը:**

**«Երանի՛ սգավորներին, որով Հետև նրանք պիտի մխիթարվեն:**

**«Երանի՛ Հեզերին, որով Հետև նրանք երկիրը պիտի ժառանգեն:**

**«Երանի՛ նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության,**

որովհետև նրանք պիտի Հազենան:

*«Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն:*

*«Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն:*

*«Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն:*

*«Երանի՛ նրանց, որ Հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:*

*«Երանի՛ է՛ ձեզ, երբ ձեզ նախատեն և Հալածեն և իմ պատճառով ձեզ ամեն տեսակ չար խոսքեր սուտ ասեն» (Մատթ. Ե 1-11):*

Փրկիչը ելնում էր լեռան վրա՝ Իրենից [Հեռու] թողնելով ժողովրդի աղմուկը, Իր Հետ վերցնելով աշակերտներին, որոնց արժանացրեց լի՛նելու Իր խորհրդակիցները: Եվ թվում է, թե ոչ միայն տեսանելի լեռ բարձրացավ, այլև մանավանդ անտեսանելին: Նրան նմանվեց նաև Մովսես, որ [լեռ բարձրանալով] խոսեց նախապես խոստացված Ավետյաց երկրի մասին, որ [Աստված] խոստացավ պարզևեղ Աբրահամին և նրա ճշմարիտ որդիներին, ոչ նրանց, ովքեր ըստ մարմնի են ծնված, այլ ըստ արդար գործերի, թեկուզև քարերից ծնված և առաջացած լինեն:

Առաջին երանիում ասված է. *«Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:* Մեկը կհարցնի՝ ո՞րն է հոգով աղքատների և Հեզերի տարբերությունը, և ինչո՞ւ ասվեց՝ հոգով աղքատներինն է երկնքի Արքայությունը, իսկ Հեզերին՝ Ավետյաց երկիր ժառանգելը, և դարձյալ, կա՞ արդյոք զանազանություն երկնքի արքայության և Ավետյաց երկրի [միջև]:

Արդ, վերևում ասված աղքատ և հոգով տառապյալը նա՛ է, ով բարձրությունից իրեն խոնարհեցրեց, ինչպես և Քրիստոս, Իրեն ունայնացնելով, ծառայի կերպարանք առավ, որը հակառակ է ապստամբ վիշապին, ով ստեղծվելով որպես ծառա՝ իր անձը չնչին վիճակից բարձրացրեց և կամեցավ տիրջ և արարչի կերպարանք առնել:

Իսկ հոգով Հեզ ասվեց նա, ով բնությամբ իսկ [այդպիսին է] և ոչ [թե] բարձրությունից խոնարհվելով ունեցավ հոգու Հեզությունը, ինչպես որ Մովսեսի մասին ասվեց. *«Մովսեսը ավելի Հեզ էր, քան երկրի վրա ապրող մյուս մարդիկ» (Թվեր ԺԲ 3):* Նույնպես և երանելի Դավիթը, ով առավել Հեզությունից ողբում էր նաև իր թշնամիների կոր-

ծանումը: Եվ այսպես են միմյանցից զատորոշվում Հեզերն ու հոգով տառապածները:

Ինձ թվում է՝ աղքատն ու հոգով տառապածը [ավելի] վեհագույն են, քան Հեզը, քանի որ մեկը բարձրությունից խոնարհվեց և կամավոր հոժարությամբ աղքատացրեց [իր] անձը, իսկ մյուսը ըստ բնության է [այդպիսին]: Իսկ ավելի [վեհագույն է], եթե երկուսն էլ կամավոր հոժարությամբ են լինում: Քրիստոս աղքատությունը [ձեռք բերեց] կամավոր հոժարությամբ, իսկ Հեզությունը [ունեց] բնությամբ, քանի որ հոգով աղքատությունը ավելի մեծ է, քան Հեզությունը:

*«Երանի՛ նրանց, որ քաղցը և ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի Հազենան»:* Կենդանի մարմիններում քաղց և ծարավ է գգացվում [այն ժամանակ], երբ պինդ կերակրի կամ Հեղուկ ըմպելիքի պակաս է լինում: Եվ երբ այսպիսի պակասություն է լինում, կենդանիները ցանկանում են կերակրով և ըմպելիքով լրացնել առաջացած պակասությունը: Սակայն Աստծու Միածին Որդին այս քաղցածներին չէ, որ երանի տվեց, այլ նրանց, ովքեր տենչում են արդարության հասնել և այդ կերակրով են ցանկանում փութապես կերակրվել:

Այսպիսիները իրավամբ երանելի են, քանի որ թողած մարմնական կերակուրների ցանկությունը՝ բաղձում են արդարության՝ ճշմարիտ կերակուրին, ուստի և պիտի կերակրվեն բոլորին Կերակրողից, [քանի որ] գիտեն Ումից անմիջապես խնդրել կերակուր:

Սրանք չեն լսի այն խոսքը, թե խնդրում եք և չեք ստանում, որովհետև չարաչար եք խնդրում (տե՛ս Հակ. Գ 3): Սակայն այս խոսքը լսելու են նրանք, ովքեր խնդրում են մարդկային կերակուր և նույնպիսի երկրային փառք:

*«Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն»:* Որովհետև ողորմությունն ավելի մեծ է, քան բազում բարի գործերը: Նաև Ղուկաս ավետարանիչը մեզ ուսուցանեց Կոռնելիոսի մասին՝ ասելով, թե [Կոռնելիոս] քո աղոթքներն ու քո ողորմությունները Հիշատակվելով՝ Աստծու առաջ ելան (տե՛ս Գործ. Ժ 4): Նաև [Հակոբոս առաքյալը] ընդհանրական [թղթում է ասվում]. *«Ողորմությունը բարձրագույն պարծենում է դատաստանի դիմաց» (Հակ. Բ 13):* Այս մասին ասվեց նաև

Եսայի մարգարեի միջոցով, և ողորմության մեծությունը գեղուցվեց. «Քաղցածներին՝ բաժանիր քո հացը, անօթևան աղքատներին՝ տար քո տունը. եթե մերկ մարդ տեսնես, հագցրո՛ւ նրան, բայց քո ընտանիքի գավակին մի՛ անտեսիր: Այն ժամանակ պիտի կանչես, և Աստված պիտի լսի քեզ. մինչև դու խոսես, (դեռ խնդրանքներդ չավարտված քո շուրթերի վրա), [Նա] պիտի ասի, թե՛ ահա հասել եմ» (Եսայի ԾԼ 7-9):

*«Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն»:* Ովքեր մաքուր են հոգեղեն սրտով և ամեն աղտից մեկուսացած, այսպիսիները մարգարեությունից հեռու չեն: Իսկ մարգարեները հոգու աչքերով տեսնում են Աստծուն [այնպես], ինչպես ստեղծվածը կարող է տեսնել Ստեղծողին: Եվ այս հայտնապես ցույց տրվեց մարգարեների կողմից, ինչպես Եզեկիելն է ասում, թե տեսա Աստծուն, որ նստած էր Քերովբեների վրա (տե՛ս Եզեկ. Ա):

Իսկ Եսային բարձրաձայն գոչում է. «Տեսա Տիրոջը, որ նստած էր բարձր ու վերացած աթոռին, ... և Սերովբեներ Նրա շուրջը» (Եսայի Զ 1-2): Նաև Փրկիչն ասաց Փիլիպոսին. «Այսքան ժամանակ ինձ հետ եղար, Փիլիպո՛ս, և չտեսար իմ Հորը. ով տեսավ ինձ, ինչպես պարտ է տեսնել Աստծու Միածին Որդուն, տեսավ նաև իմ Հորը» (տե՛ս Հովհ. ԺԴ 19): Նույնպես և Միքիան «Թագավորություններ» գրքում թագավորներին ասաց. «Տեսա երկինքը բացված և հրեշտակներ Աստծու առջև» (Հմմտ. Գ թագ. ԻԲ 19):

Բայց մեկը կհարցնի, թե ինչո՞ւ ասվեց՝ Աստծուն ոչ ոք չի տեսել, իսկ այստեղ ասվում է, թե սրտով մաքուրներն Աստծուն պիտի տեսնեն: Այս մասին պիտի ասենք, թե ըստ բնության գոյացությունից ստեղծվածին անհնար է տեսնել Արարչին:

Բայց ովքեր սուրբ սրտով ճանաչում են, թե [Աստված] տեսանելիների և անտեսանելիների Ստեղծիչն է և նախախնամում է բոլոր արարածներին, և թե Քրիստոս Լույս է, ձգմարտություն, Կենդանություն, Հարություն, և կատարում են Նրա բոլոր հրամանները, այսպիսիին համար ասաց, թե պիտի տեսնի Աստծուն՝ տեսնելով Նրա գործությունն ու ներգործությունը:

Սրտի այս սրբությունը մաղթում է նաև սաղմոսերգուն՝ Աստծուն տեսնելու համար. «Որպեսզի բացվեն նրա աչքերը, և տեսնի Նրա օրհնքների հրաշալիքները» (Հմմտ. Սաղմ. ձԺԼ 18):

*«Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն»:* Աստծու Որդին ասվում է Մեծ, քան բոլոր խաղաղարարները, Ով քանդեց բաժանող պատնեշը և երկնավորների ու երկրավորների միջև խաղաղություն հաստատեց: Ուստի և իր աշակերտներին ասաց. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ» (Հովհ. ԺԴ 27):

Նրա մասին գրվեց յոթնասուներեկերորդ սաղմոսում, որտեղ ասվում է. «Աստված, դատաստանդ արքայի՛ն տուր և արդարությունը՝ թագավորի որդուն» (Սաղմ. ՀԱ 2): Ինքն Արքա է, նաև Արքայի Որդի: Դատաստանը խնդրում էր Հորից ստանալ՝ որպես Հոր Որդի, որովհետև ասաց. «Հայրը ոչ մեկին չի դատում, այլ ամեն դատաստան տվել է իր Որդուն» (Հովհ. Ե 22):

Նաև արդարությունն էր խնդրում Հորից, ինչպես ճշմարիտ մարդ, բայց ոչ ինչպես Որդի, որովհետև ինքն էր Արդարությունից Արդեակը: Արդ, այս պատճառով հիշվեց այս սաղմոսը, որովհետև այն Սողոմոնին է վերագրված, սակայն ոչ թե Դավթի այն որդուն, ով Բերաբեկից էր, այլ Մեծն Սողոմոնին, արարածների Արարչին, քանի որ Սողոմոն բառը եբրայերենից թարգմանվում է խաղաղասեր, այս պատճառով Սողոմոնին վերագրվեց:

Այա ուրեմն նրանք, ովքեր նմանվում են Մեծ Խաղաղարարին և խաղաղություն են տալիս բանասրկուի խորհրդով միմյանցից բաժանված մարդկանց, ևս առավելապես նրանք, ովքեր բարեպաշտությունից հեռացած մարդկանց [Տիրոջ] վարդապետությունից հաշտեցնում են Աստծու հետ, և առավել ևս [իրենք] իրենց բարի գործերով և իմանալի արտասուքներով և այլ առաքինություններով [հաշտ են Աստծու հետ], ինչո՞ւ պիտի չկոչվեն Աստծու որդիներ:

*«Երանի՛ նրանց, որ հալածվում են արդարությունից համար, որովհետև նրանց է երկնքի արքայությունը»:* Քրիստոսի՝ արդարությունից Արդեակի համար շատերը բռնավորների կողմից հալածվեցին՝ այրերում և խորշերում, շատերն էլ սրով ու տանջանքներով և նույնիսկ իրենց մարմիններից հալածվեցին, ինչպես երանելի Պողոսին նմանվողները, որը խակապես հալածանք է Քրիստոսի սիրո համար, որոնց ո՛չ սուրը, ո՛չ հալածանքը, ո՛չ մահը և ո՛չ էլ երկրային կյանքի [հանդեպ] սերն ու կա-

ըիքներով զբաղվածությունը չեն կարող բաժանել Քրիստոսի սիրուց (տե՛ս Հուով. Ը 35-36): Սրանցն է երկնքի արքայությունը, ինչպես նաև Հոգով աղքատներինը, ովքեր Քրիստոսին նմանվելու համար աղքատությունը ժառանգում են երկնքի արքայությունը:

*«Երանի՛ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն իմ պատճառով, ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ, ասեն»:*

Երանի է տալիս առաքյալներին այն ժամանակների համար, երբ նրանք պիտի նախատվեն, հալածվեն և ամեն տեսակ չար խոսք լսեն: Սակայն երանելի չէ նա, ով իր անմտություն [պատճառով] է հալածվում, քանի որ շատերը կախարհության համար արտաքաղցին, նախատվեցին և ամեն տեսակի չար խոսք լսեցին, սակայն արդարության և բարեպաշտության համար չէ, որ հալածվեցին, թեպետև լսեցին ամեն տեսակի չար խոսք, սակայն ճշմարտությամբ և ոչ ստույգությամբ: Սրանք չեն դառնում երանելի, այլ մանավանդ նախատելի են և արժանապես մերժելի:

Իսկ ովքեր Քրիստոսի համար են հալածվում, նախատվում և ամեն տեսակ չար խոսք լսում, նրանք են երանելի: Հալածանք և նախատինք էլ կա, որ [պատահում է] հիմար մարդկանցից, սակայն սա ճշմարիտ հալածանք չէ, նույնպես՝ չար և սուտ խոսքերի [դեպքում]:

*«Դո՛ւք եք երկրի աղը, սակայն եթե աղը անհամանա, ինչո՞վ այն կաղվի» (Մատթ. Ե 13):*

Աղը, չափավորապես խառնվելով կերակրին, անհամությունը համոզանում է և դառնությունը քաղցրացնում: Իսկ եթե մեկը չիմանա չափավորապես խառնել, այլ առավել կամ պակաս [խառնի, ապա] անհամությունը կմնա անհամ, և դառնությունը՝ դառը:

Նույնպես և աշակերտները Վարդապետի կողմից անվանվեցին երկրի աղ, քանի որ գեղեցիկ և վայելուչ վարդապետությունը, որքանով որ մարդիկ կարող են լսել, երկրայիններին ամբարշտությունը և դիվապաշտությունը, որը Հոգիների անհամությունն ու դառնությունն է, բարեպաշտություն, առաքինություն, անուշահոտություն և քաղցրության փոխեցին: Կարծեմ Եղիսե մարգարեն, Երեքովում այս աղը գցելով [Ջրի ակունքի մեջ], Ջրի դառնությունը քաղցրության փոխեց (տե՛ս Դ Թագ. Բ 21): Եթե այս վարդապետություն աղը անհամանա, ինչո՞վ պիտի վարդապետենք:

*«Այլ միայն դուրս կթափվի և մարդկանց ոտքի կոխան կլինի» (Մատթ. Ե 13):*

Աղ էր նաև Հուզան՝ տասներկուսից մեկը, բայց սատանայից անհամանալով՝ դառնացավ, Քրիստոսից արտաքաղցեց և մարդկանց [ոտքի] կոխան եղավ: Նաև սատանան, որ բարեպաշտների աղն էր, իր չարությունից դառնանալով, ընկավ Հրեղեն փառքից՝ քերովբեությունից և գիսավոր ասող լինելուց, և եղավ Հրեշտակների ծաղրն ու խաղալիքը և [ոտքի] կոխան եղավ սուրբ մարդկանց կողմից, որոնց Քրիստոս հրամայեց իժեքի և աներևույթ քարերի վրայով գնալ և [տոնա]կոխ անել, նմանապես՝ իմանալի առյուծին ու վիշապին (տե՛ս Սաղմ. Ղ 13):

Եվ արդյոք ինչպե՞ս ոտնակոխ չեղան նրանք, ովքեր Պետրոսի սովորից (Գործք Ե 15) և Պողոսի քրանքոտ վարչամակներից փախչելով՝ արտաքաղցում էին (Գործք ԺԹ 12): Նաև Ինքն իսկ՝ Փրկի՛չը, Իր սրբերին խոստացավ օձերին, առերևույթ վիշապներին և սատանայի ամեն գործություններին ոտնակոխ անելու իշխանություն պարգևել:

*«Դուք եք աշխարհի լույսը. մի քաղաք, որ լեռան վրա է կանգնած, չի կարող թաքնվել» (Մատթ. Ե 14):*

Լույսը, ինչպես բոլորին հայտնի է, խավարի հակառակը, հալածիչը և կորուսիչն է: Լուսատուների ծագելուց խավարը հալածվելով կորչում է, և ծավալվում է լույսը: Նույն օրինակով և իմանալի լույսի՝ սուրբ առաքյալների վարդապետության ծագելով, մարդկանց խավարված Հոգիները, որ մթին վարդապետությամբ անդունդների վրա էին, խավարից դուրս հանեց և Քրիստոսի ճշմարիտ լույսը ծավալեց:

*«Մի քաղաք, որ լեռան վրա է կանգնած, չի կարող թաքնվել»:*

Քաղաք անվանեց առաքյալներին, սակայն ոչ այս տեսանելի քաղաքների [նմանությունով], որոնք պարիսպներից և այլ Հողեղեն նյութերից շինություններ են, որովհետև այդպիսի քաղաքը, որ լեռան վրա է շինված, թեպետև մեծ է, բայց դիտողի հեռավորության և կամ լեռան բարձրության պատճառով թաքնվում է աչքի տեսողությունից:

Նաև Իրեն «լեռ» անվանեց, ինչպես ասվեց սաղմոսում. «Աչքերս դեպի լեռները բարձրացրի, որտեղից ինձ օգնություն պիտի գա» (Սաղմ. ՃԻ 1): Իսկ առաքյալներին, Երուսաղեմի՝ Վերին Քաղաքի որ-

դիներին քաղաք [անվանեց]․ այսպիսի քաղաքը, որ շինված է Ի՛մ Լե-  
ուան և Ի՛մ վեճի վրա, չի կարող թաքնվել, ուստի առաքյալները՝ Լե-  
ուան վրայի քաղաքները, և նրանց վարդապետությունը չթաքնվեցին  
մարդկանցից, որի համար սաղմոսերգուն վկայում է՝ ասելով․ «Ողջ եր-  
կիրն է բռնել նրանց ձայնը, և մինչև աշխարհի ծայրն են հասել նրանց  
խոսքերը» (Մաղմ․ ԺԸ 5):

Այն երանելի լույսը չձածկվեց «կաթասյի» և այս աշխարհի  
մեծություն տակ, որ այս խավար աշխարհի իշխան անվանվեց: Քանի որ  
Նա, Ով վառեց ճրագը, կաթասյին իշխանություն չսվեց նրան  
ծածկելու, այլ աշտանակի վրա դրեց՝ Իր իշխանական ենթակայության  
տակ, որպեսզի լույս տա ամբողջ աշխարհին:

«Կաթաս» է ասվում սատանան այն իմաստով, որ Քրիստոսի վարդա-  
պետությունը՝ գիտությունն ու առաքինությունը, սովորողներից ոմանց  
իր պատրանքների մեջ գցելով՝ հարկադրում է այլոց չվարդապետել, այլ  
թաքցնել: Ինչպես և ասվում է, հրապուրվելով նրա ուսուցումից՝ տը-  
ված տաղանդները թաքցնում են գետնի, այսինքն՝ իրենց մարմնական  
ախտերի տակ: Ուստի և անիծվելով ելնում են արտաքին խավար, ուր  
աչքերի լաց և ատամների կրճատում [կա] (Մատթ․ ԻԲ 13):

Իսկ ով հինգ քանքար վերցրեց և [նորերը] շահեց, նա չթաքցրեց  
այն կաթասյի՝ խավարային խարդախության տակ, այլ լուսավորեց նաև  
ուրիշներին ու [Տիրոջից] լսեց․ «Բարի՛ և Հավատարի՛մ ծառա, մտի՛ր քո  
Տիրոջ ուրախության մեջ» (Մատթ․ ԻԵ 21): Նույնպես և նա, ով երկու  
[քանքար ստացավ]: Եվ ի՞նչ է խորհրդանշում հինգը կամ երկուսը:  
Աստուծո կամքով յուրաքանչյուրի մասին իր տեղում կպատմենք ըստ  
կարողություն:

*«Մի՛ կարծեք, թե օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա, չեկա  
ջնջելու, այլ լրացնելու» (Մատթ․ Ե 13):*

Այսուամենայնիվ, ինչո՞ւ պարզամիտներից ոմանց կողմից օրենքնե-  
րի ջնջում չպիտի կարծվի: Աստուծոց Մովսեսին հրամայվեց օրենք սահ-  
մանել, որպեսզի յոթերորդ օրը հանգիստ լինի բոլոր գործերից (տե՛ս Ելք  
ԼԴ 21), ուստի և [այն մարդը], ով չաբաթ օրով փայտ է հավաքում,  
քարկոծվելով պիտի մահանա (տե՛ս Թվեր ԺԵ 32): [Սահմանվեց] նաև  
յոթերորդ տարում ծառաներին ազատություն և պարտքերի ներում շնոր-

հել (տե՛ս Բ 0ր․ ԺԵ 1-3, 12): Եվ հիսուներորդ [տարում], որը կոչվում  
էր հոբելյանական [տարի], հրամայվեց նույնը կատարել՝ Համաձայն  
սրանց (տե՛ս Ղևտ․ ԻԵ 8-10): Եվ որոշ չորքոտանիների, թռչունների և  
ջրային կենդանիների մովսիսական օրենքը առանձնացրեց՝ կերակուրի  
համար (տե՛ս Ղևտ․ ԺԱ): Նաև քահանայական աստիճանին անհնարին է  
մոտենալ միականուն, կաղին, գոսացած ձեռք ունեցողին կամ ախտա-  
ցած մարմնով մեկին:

Արդ, քանի որ այժմ այդ ամենը անխորոշյալմբ չի կատարվում  
քրիստոնյաներիս մեջ․ [այսինքն] չաբաթ օրը չի դադարեցվում գործ  
անելը, որոշ կենդանիների մեջ խորականություն չի դրվում կերակու-  
րի համար օգտագործելիս և քահանայական ձեռնադրության համար  
արատավորներին չի արգելվում, ծառաներին ազատություն և պարտքե-  
րի ներում չի շնորհվում՝ Համաձայն սահմանված ժամանակի, և այլ  
չստ կարգեր, որ մովսիսական օրենքով չի հրամայված լուծարել, որոնք  
սակայն այժմ չեն կատարվում, ապա ինչո՞ւ է ասում․ «Չեկա օրենքը  
կամ մարգարեներին ջնջելու, այլ լրացնելու» (Մատթ․ Ե 17):

Արդ, լուծենք բոլոր այս խնդիրները: Նախ՝ յոթերորդ օրվա մասին  
հայտնի է, որ այն գալիք յոթերորդ [դարի] օրինակն է, որը ստուգա-  
պես օրհնվեց և սրբվեց, որում չի լինում երեկո, և այն չի փոխվելու  
խավար գիշերով՝ ակնարկելով այն յոթերորդ օրը, որում աշխարհը դա-  
դարում է վեցօրյա զբաղմունքներից: Յոթերորդ օրը՝ հանդերձյալի ստ-  
վերն ու օրինակը, օրհնված է ասվում, որի մեջ մովսիսական օրենքը  
հրամայվեց դադարեցնել, ո՛չ ճշմարտապես, այլ ստվերապես: Եվ որ այս  
սուտ չէ, այլ ճշմարիտ, հայտնի է դառնում Մովսեսի պաշտոնյա Հեսու-  
ի [գործերից], որ հրամայեց յոթ օր պտտվել Երիբովի պարսպի շուրջը  
(տե՛ս Հեսու․ Զ 14-15)՝ առանց օր բաց թողնելու, և պարզ է, որ այդ  
յոթ օրերից մեկը համապատասխանում է [չաբաթվա] յոթերորդ օրվան:  
Ապա, ուրեմն, որպես օրինակ և սովեր՝ Հեսուի կողմից նախկին [օրեն-  
քը] լուծարվեց: Երբ ասում ենք [օրենքը] լուծարել, [հասկանում ենք]  
չաբաթ օրով տեսանելի գործեր գործել:

Իսկ քահանայական աստիճանի վերաբերյալ, որ քրիստոնյաների կող-  
մից կարգորդվեց, նաև մարմնով արատավորվածներին վիճակել քահա-  
նայություն, թող հայտնի լինի․ առաջին՝ որ նաև քրիստոնյաների մոտ  
այդպիսի քահանաներին արգելվեց քահանայագործության մոտենալ:

Երկրորդ՝ նոր կարգով այդպիսիներին չզրկել քահանայական կարգից, [որովհետև] Մովսեսի թվարկած մարմնավոր արհեստը, որոնք արգելք էին [Հանդիսանում] քահանայագործության համար, [ուրև] հոգևոր արհեստի օրինակներն են (տե՛ս Ղևտ. ԻԱ 13):

Նույնպես և պատարագները և գոհերը, որոնք հրամայվեցին [կատարել], ապագայում կատարվելիքի սովորներն էին, և ճշմարտապես չէին մատուցվում Աստծուն: Ուստի և սաղմոսերգուն հայտարարում է. «Եթե կամենայիր, պատարագ կմատուցեիր, բայց Դու ողջակեզներ չես ուզում» մեղքերի համար (Սաղմ. Ծ 18): Եվ արդ ի՞նչն է հաճո Աստծուն. «Ոտնարհ հոգին է պատարագն Աստծու. մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում» (Սաղմ. Ծ 19): Այդ պատարագների վերաբերյալ էր:

Իսկ չորքոտանիների և թռչունների վերաբերյալ, որոնցով Մովսես հրամայեց չկերակրվել, քրիստոնյաները չեն արգելում այն պատճառով, որ գիտենալով մովսիսական գրի միտքը և չմնալով գրին [ենթակա], որ սպանում է (տե՛ս Բ Կորնթ. Գ 6), չարգելեցին և չպարտադրեցին կերակրվել. որովհետև ի՞նչ պատճառով արդյոք կարգադրվեց ուտել [միայն] որոճացող կճղակաբաշխներին, ինչպիսիք են արջաուր, ոչխարը և եղջերուն, որոնք սողուններ են ուտում, քան ձիերն ու նապաստակները, որոնք այդպիսիներին չեն էլ մոտենում:

Կամ ի՞նչ [տարբերություն] գիշակեր թռչունների, կաքավի ու ընտանի հավի միջև (Բ Օրենք ԺԴ 12-18), որ դրանցով հրամայվեց կերակրվել, մինչդեռ դրանցից շատ այլ մաքրակեր կենդանիներով չհրամայվեց: Ապա, ուրեմն, այլ բան են խորհրդանշում որոճացող և կճղակաբաշխ կենդանիները, որը չիմացան հրեաները, որոնք ըստ մարմնի ունեին իրենց թլփատությունը, քանի որ [մինչև այսօր] Մովսես են կարդում, [բայց] նույն վարագույրը մնում է նրանց սրտերի վրա (տե՛ս Բ Կորնթ. Գ 13), ովքեր միայն գրին են իմանում, և գրի գորությունը չեն տեսնում: Ապա եթե ոչ, թող պատասխան տան ինձ՝ ինչո՞ւ է բորոտություն և պիտակություն (բորբոս) լինում պատերի կամ հանդերձների վրա, որոնք անշունչ են, ինչպես թվարկվում է Մովսեսի կողմից (Ղևտ. ԺԴ 55):

Արդ, ինչպես հանդերձի վրա բորոտությունը և պատի վրայի պիտակությունը այլ բան են խորհրդանշում, այնպես էլ [կենդանիների] որոճելը և կճղակաբաշխությունը: Ինչպես որ քրիստոնյա վարդապետ-

ները ընթերցելով Մովսեսի Ղևտականը ճշմարտապես մեկնաբանեցին:

Նաև ծառաների ազատություն և պարտքերի թողություն մասին առավել ևս ուսանեցին Քրիստոսից Նրան աշակերտածները՝ տալ ազատություն ծառաներին և [չնորհել] պարտքերը՝ և՛ մարմնավորներին, և՛ հոգևորներին: Սակայն բռնություններ չէ, որ հրամայվեց, այլ յուրաքանչյուր ոք՝ ըստ իր հոժար կամքի, որը բարեպաշտագույն է: Այդ իսկ պատճառով կատարողները գովաբանվում են, իսկ չկատարողները՝ պախարակվում, թեպետև չեն բռնադատվում կատարել:

Արդ, Քրիստոս չեկավ օրենքը կամ մարգարեությունները ջնջելու, այլ լրացնելու, քանի որ հրամայեց քննել հին օրենքի և մարգարեությունների գորությունները, և ոչ միայն [ծառի] տերևով (տե՛ս Մրկ. ԺԱ 13), այսինքն՝ գրով բավարարվել և կերակրվել, այլ առավելապես [ծառի] պտղով, [այսինքն]՝ մտքով կերակրվել ու զարգարվել: Արդ, Նա, Ով հրամայեց ոչ միայն տերևով, այլև օրենքների և մարգարեությունների պտղով կերակրվել և հոգեպես հագնեալ, ինչո՞վ չլրացրեց օրենքը կամ մարգարեությունները:

*«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. մինչև որ երկինք ու երկիր անցնեն, մի հովտ իսկ, որ մի նշանագիծ է, Օրենքից և մարգարեներից չի անցնի, մինչև որ այս բոլորը կատարվի» (Մատթ. Ե 18):*

Այն ամենից, ինչ որ ասվեց Մովսեսի և մարգարեների կողմից, ներառյալ Քրիստոսի գալստյան և Նրա գործերի մասին, որոնք հրաշքներով և սքանչելիքներով կատարվեցին, ինչպես նաև ամբողջ երևելի աշխարհի մասին, [և այն մասին], որ պետք է լինի երկնքի և երկրի վախճանից առաջ, մի հովտ\* իսկ, որը մի տառի նիշ է, և Հնչյուն է խորհրդանշում, չի լինի դատարկ:

Այսինքն՝ ինչ որ բառ, որ թվում է սոսկ գրված և ոչ պիտանի, այնուամենայնիվ իդուր չէ գրված օրենքներում և մարգարեություններում: Եթե մեկը, սա փոքրիկ պատվիրան կարծելով, ջնջի և հաստատապես չուսուցանի, այնպիսին՝ որպես ոչ ճշմարիտ վարդապետ, երկնքի արքայությունում փոքր կկոչվի: Իսկ ով իսկապես կուսուցանի և ոչ միայն կուսուցանի, այլև ինքը կկատարի, ինչը ուրիշներին է ուսուցա-

\* Հովտ. եբրայերեն 22 տառերից մեկը [v] սա իր չափերով գգալիորեն փոքր է մյուս տառերից, ինչպես օրինակ պեֆից [p], որի պատճառով էլ որպես օրինակ այն վերցվեց:

նում, նա մեծ կկոչվի երկնքի արքայությունում (տե՛ս Մատթ. Ե 19):

Որովհետև նա, ով ուսուցանում է արդարություն գործել, պարտավոր է ոչ միայն խոսքերով ուսուցանել, այլև ինքը պետք է կատարի արդարության գործերը: Ուրեմն, մանավանդ գործերով, քան թե խոսքերով կարող է ուսուցանել, ինչպես և ասվում է. «Սկսեց Հիսուս գործել և ուսուցանել» (Գործք. Ա 1) և ո՛չ թե միայն ուսուցանել: Ուստի և վրա է բերում՝ այսպես ուսուցանելով:

*«Եթե ձեր արդարությունն ավելին չլինի, քան օրենսդատներինը և փարիսեցիներինը, երկնքի արքայությունը չենք մտնի» (Մատթ. Ե 20):*

Քանի որ դավրներն ու փարիսեցիները չէին կատարում, այլ միայն ուսուցանում էին: Բարին էին սովորեցնում, [սակայն իրենք] չարն էին գործում: Ուստի նրանք, ովքեր խոսքերով ուսուցանելը բարի գործ են կարծում՝ նայելով ուսուցանողների գործերին և նմանվելով նրանց, առավել, քան բարին, ուսանում էին չարիք գործել: Քանի որ լսողները մանավանդ գործերին են հավանում, քան թե խոսքերին: Որից նրանց բարի թվացող վարդապետությունը դառնում էր ստուգապես չար վարդապետություն: Դրա համար ասվեց. «Եթե ձեր արդարությունը ավելին չլինի, քան օրենսդատներինը և փարիսեցիներինը, երկնքի արքայությունը չենք մտնի»:

*«Լսե՞լ եք, թե ինչ ասվեց նախնիներին. «Մի՛ սպանիր», որովհետև ով որ սպանի, ենթակա կլինի դատաստանի» (Մատթ. Ե 21):*

Արդ, այն ամենը, որ [Տերն] ավելացնում է, դրանք օրենքների լրումն ու հաստատումն են: Քանի որ մովսիսական [օրենքում] պատվիրված է. «Մի՛ սպանիր», իսկ քրիստոսյան պատվիրանը ոչ միայն սպանելը արգելեց, այլև գուր տեղը բարկանալը և նման թեթև թշնամություններով թշնամանալը, [եղբորը] անմիտ և մորոս, այսինքն՝ հիմար ասելը (տե՛ս Մատթ. Ե 22): Եվ ինչ որ գրված է, ամենքին հայտնի է:

*«Քո ոտխի հետ իրավախոհ եղի՛ր, մինչ նրա հետ դեռ ճանապարհին ես» (Մատթ Ե 25):*

Երևելի ոտխի նկատմամբ բարվոք է նախապես իրավունքներ ձեռք բերել՝ անձամբ գիտենալով նրա հանցանքներն ու անիրավությունները,

որպեսզի չմատնվենք դատավորի ձեռքն ու բանտ ընկնենք, որտեղից չենք ազատվի, եթե չհատուցենք պարտքը՝ մինչև վերջին մի նաքարա-կիրոն իսկ, որը մի դանգ կամ մի միճոն է:

Ասվածը առավել պատշաճում է աներևույթ ոտխներին և անիրավ և վատթար դիտավորություններին, որոնք լինում են սատանայի՝ բովանդակ բարու ոտխի կողմից, որ հորդորում է գործել ամեն անիրավ գործ: Արդ, քանի դեռ ճանապարհին ենք, այսինքն՝ այս կյանքում, պետք է իրավա-խոհ լինենք, խոստովանենք մեր հանցանքները՝ ինքներս մեզ դատապարտելով, ու անիրավ խորհուրդները փոխարինենք օրինավորներով, որպեսզի այստեղ [արևեն] արդարանանք՝ [ըստ հետևյալ խոսքի]. «Նախ դու խոստովանի՛ր քո անօրենսությունները, որ արդարացվես» (Եսայի ԽԳ 26):

Իսկ եթե ճանապարհին չխոստովանենք և անիրավություններից արդարության չդառնանք, ապա այս երևելի աշխարհի վախճանին մերկապարանոց կկանգնենք դատավորի առջև. դատապարտվելով մեր ոտխից՝ մեզ կմատնենք դատավորից դահլիճի ձեռքը և հրեշտակների տանջանքներով կընկնենք բանտ՝ արտաքին խավարը, որտեղից չենք ելնի, եթե չհատուցենք մեր անօրենսության և հանցանքների բոլոր պարտքերը, նույնիսկ մինչև փոքրագույն և նվազ հանցանքները, որոնք միայն խոսքով, խորհրդով և ակամա ենք գործել, որը վերջին գրոշ և նաքարակիտ անվանվեց (Հմմտ. Ղուկ. ԺԲ 56-59):

*«Լսել եք, թե ինչ ասվեց. «Մի՛ շնանար». իսկ ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ կնոջը նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում» (Մատթ. Ե 27-28):*

Մովսիսական օրենքներում արգելքներ սահմանվեց միայն գործերի վրա, իսկ Քրիստոս՝ նաև ցանկությունների: Ապա էլ ինչո՞վ քրիստոսյան օրենքը լի և կատարյալ է, քան մովսիսականը: Հետևաբար, չեկավ օրենքներն ու մարգարեներին ջնջելու, այլ թերագույնը լրացնելու և կատարելու, որով ոչ միայն գործերից, այլև ցանկությունից հրամայեց հեռու մնալ: Բայց եթե մեկն ասի. «Նա, ով ցանկացավ գործերին, սակայն չկատարեց, ինչպես շնացավ իր սրտում»:

Այս մասին ասում ենք, թե նա, ով իսկապես ցանկացավ շնանալ, սակայն ինչը հանգամանքների բերումով, այսինքն՝ մարդկային ամոթի, անկարողության կա՛մ կնոջ անկամության պատճառով արգելվեց, ապա



նա Հաստատապես շնացավ, քանզի իրենից և իր մտածումից ոչինչ չպահատեց գործը մարմնապես կատարելու համար: Ուստի և Փրկչի կողմից պարգևատրվեց շնացավ, այլ թե՛ արդեն իր սրտում շնացավ:

Բայց թեևս հիմա մեկն էլ կավելանա Հարցուփորձելու համար և կասի. «Թե ցանկացավ, սակայն ինչ՞որ այլ պատճառներից է, որ ստիպվեց չկատարել, այլ զղջալով իր մտածումներից՝ սանձահարվեց: Արդ՞ յո՞ք այդպիսի համար պիտի ասվի՝ «իր սրտում շնացավ»:

Այս Հարցումին կպատասխանեմ այսպես, թե ցանկանալով արդեն շնությունը կատարվեց, իսկ ցանկությունը դադարեցնելով և այն զղջմամբ և ապաշխարությամբ փոխելով՝ ցանկության Հանցանքներին թողություն տրվեց, թեպետև նրա համար, ով ցանկացավ շնություն, ասվեց, թե շնացավ [իր] սրտում: [Բայց] քանի որ կամեցածը գործով չկատարվեց, կարծում եմ, որ այն թեթևագույն շնություն է, քան մարմնական գործերի աղտեղի կատարումը»:

*«Եթե քո աջ աչքը քեզ գայթակղեցնում է, հանի՛ր այն և դե՛ն գցիր քեզնից» (Մատթ. Ե 29)* և այլն:

[Այն, որ այս խոսքը] տեսանելի աջ աչքի և աջ ձեռքի մասին չի ասվել, ամենքին Հայտնի է, իսկ եթե ոչ, [ապա] կարծեցյալ հրամանով բոլոր քրիստոնյաներին պարտ էր առանց աջ աչքի և ձեռքի լինել: Քանզի մարդկանցից ո՞վ չի գայթակղվի ոչ միայն աջ աչքով, այլև ձախ աչքով ու ձեռքով ևս: Արդ, եթե հիմարություն է այդպես կարծելը, ապա աջ աչք և ձեռք [ասելով] պետք է իմանալ կա՛մ երևելիներից ամենասիրելիներին, ովքեր գայթակղեցնելով [մղում] են վատթարագույն գործերի և կա՛մ չարակամ թշնամու աներևույթ խորհուրդները, որը և կոչվեց աջ աչք: Եվ հրամայում է այդպիսի սիրելիներից մեկուսանալ, որոնք գայթակղեցնում են անիրավություն խորհել ու գործել:

[Նույն օրինակով] սատանան Հյուսիսային կոչվեց, իսկ Քրիստոս՝ Հարավային, ինչպես Երբ երգոցից ուսանեցինք. «Վե՛ր կաց, Հյուսիսի՛ [քամի], և ե՛կ Հարավի՛ [հով]» (Երբ. Դ 16): Նաև մյուս մարգարեն է ասում. «Աստված Հարավից կգա, սուրբը՝ գով և անտառափիտ լեռից» (Ամբ. Գ 3)՝ ըստ Յոթանասնից թարգմանության, իսկ ըստ եբրայական [բնագրի]՝ «Աստված Թեմանից կգա, և սուրբը՝ Փառան լեռից»: Թեման թարգմանվում է Հարավ, իսկ Փառանը՝ գով:

Եվ այն ամենը, որոնք իրենց կարգով գրվեցին, ցույց են տալիս օրենքների և մարգարեությունների լրումն ու կատարումը և ոչ թե լուծարումը, ինչպես ոմանք հրեաբար կարծեցին:

*«Եթե մեկը քեզ Հարկադրի մի մղոն ճանապարհ անցնել, նրա Հետ երկո՛ւնն էլ գնա: Տո՛ւր նրան, ով քեզնից խնդրում է. և ով կամենում է քեզնից փոխ առնել, երես մի՛ դարձրու նրանից» (Մատթ. Ե 41-42):*

Եթե մեկը բռնությամբ Հարկադրվի գնալ Հեռու աշխարհ, որ օտար աշխարհ ասվեց, ըստ գրվածի չեմ կարող [պատասխանել], ապա կօգտվի նա, ով իր կամքով կանցնի [լրացուցիչ] մի ճանապարհ ևս: Բայց, կարծեմ, [սա] Հոգևոր առումով պետք է իմանալ, [այսինքն] եթե ոմանցից սովորեցինք և Հորդորվեցինք առաքելի լինել, ապա չմնանք ուսման նույն [մակարդակին], այլ կրկնապատկենք և եռապատկենք մեր առաքինությունը սովորածից առավել:

*«Լսել եք արդարև, թե ինչ ասվեց նախնիներին. «Պիտի սիրես ընկերոջդ և պիտի ստես քո թշնամուն» (Մատթ. Ե 43):*

Մարդկության համար ոչ ոք չեղավ ավելի [մեծ] թշնամի, քան սատանան: Իսկ Քրիստոս հրամայեց նաև թշնամիներին սիրել: Ուրեմն բարովո՞ք է կատարել հրամանը և սատանային սիրել առավելապես, քան բոլոր սիրելիներին, քանի որ ինչպես ասվեց, թշնամագույնն է, քան բոլոր թշնամիները: Իսկ եթե այդ կարծիքը տեղին չէ, ապա այլ թշնամիներին պետք է նկատի ունենալ, որոնց սիրել հրամայեց Բանն Աստված՝ Որդին Միածին:

Արդ, թշնամի պետք է համարել, ինչպես կարծում եմ, այլադավաններին, որպեսզի ուղղես նրանց [չավիղները] ու չանտեսես [նրանց] դեպի ճշմարիտ Հավատ և վարդապետություն Հորդորելուց, երբ ձեռնահաս լինես:

Նույնը իմացիր նաև մարմնականի վերաբերյալ: Թշնամի է մարմնականը Հոգևորին և Հակառակը, ինչպես և առաքյալն է ասում. «Մարմինը պատերազմում է Հոգու դեմ, և Հոգին՝ մարմնի դեմ» (Ա Պետ. Բ 11): Արդ, իրավացիորեն ասվեց սիրել այս թշնամիներին, քանզի մարմինը Հոգուն է համարվում և անհրաժեշտ է այն ղեկավարել և մղել դեպի Հոգևորը:

Քանզի երբ մարմնավոր Հինգ գգայությունները միավորվեն Հոգու Հինգ գգայությունների Հետ, այնժամ և կկատարվի սաղմոսերգուի կողմ

մից ասվածը. «Տասնալար նվագարանով սաղմոս պիտի երգեմ քեզ» (Սաղմ. ձև 9, ԼԲ 2):

Բայց [Ժամանակն] է ասելու, և ինձ թվում է առանց մեղանչելու, թե Քրիստոս իր անբավ բարերարութեան պատճառով հրամայեց նաև տեսանելի թշնամիներին սիրել և ողորմել, ինչպես և Սողոմոնի միջոցով ասվեց. «Եթե թշնամիդ քաղցած է, կերակրի՛ր նրան, եթե ծարավ է, ջո՛ւր տուր խմելու» (Առակ. ԻԵ 21):

«Այլ երբ դու ողորմութեան անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը, որպեսզի քո ողորմութեանը ծածուկ լինի, և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ Հայտնապես» (Մատթ. 2 3-4):

«Թող չիմանա, շատ է, քո ձախը, [թե] ինչ է գործում քո աջը»: «Աջ ձեռք» ասելով՝ ոչ տեսանելիներն է [ակնարկում, ինչը] ամենքին Հայտնի է, քանզի ինչպես կարող է ձախը իմանալի լինել՝ չիմանալով, թե ինչ է անում աջը և կամ ինչպես է արդյոք աջը գործում: Ապա, ուրեմն, պետք է իմանալ, որ աջը հոգու հաջողակ գործությունն է և բոլոր հորդա՝ հոս բխած առաքինություններն ու ողորմությունները: Իսկ ձախը հոգու առաքինության ընդդիմակա գործություն է, որը հորդորում և հոժարեցնում է գործել ամեն ինչ, որ դեմ է առաքինությանը և ողորմությանը:

Արդ, հրամայում է ոչ միայն մարդկանց առջև ողորմություն չանել, այսինքն՝ ի ցուցադրություն մարդկանց, սնափառության համար, այլև իր ձախ գործություններին [ցույց չտալ ողորմությունը], այսինքն՝ հաջողակ գործության բարությունը առաջխաղացումը:

«Եվ Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ Հայտնապես» (Մատթ. 2 4):

Երկնավոր Հայրը երբ տեսնում է, որ [ողորմությունը] սնափառության համար չես անում, այլ առաքինությամբ և աստվածային հրամանի համաձայն, քո սվածի փոխարեն քեզ Հայտնապես կհատուցի հանդերձյալ հավիտյաններում կրկնապատիկ և եռապատիկ, իսկ դատաստանի ժամանակ ամենքի առջև պարծենալու [պատճառ] կունենաս. «Քանզի ողորմությունը բարձրագույն պարծենում է դատաստանի դիմաց» (Հակ. Բ 13), ինչպես ասում է Որոտման որդին:

«Եվ երբ աղոթես, չլինե՛ս կեղծավորների նման, որոնք սիրում են ժողովարաններում և հրապարակների անկյուններում աղոթքի կանգնել, որպեսզի մարդկանց երևան» (Մատթ. 2 5):

Ձի արգելում մարդկանց առաջ աղոթել, ապա թե ոչ Աստուծու տաճարում և եկեղեցիներում կարգելվեր աղոթել մարդկանց ներկայությունը: Քանզի նա, ով ունի մաքուր սիրտ և խղճատանք, թեպետև Հազարավոր մարդիկ լինեն նրա շուրջ, պետք է աղոթի, եթե նրանց ցուցադրություն և սնափառության համար չէ աղոթելը: Իսկ եթե դրանց համար աղոթի, այդ իսկ է նրա վարձը, այսինքն՝ գովաբանվելը մարդկանցից:

«Այլ դու, երբ աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր քո դռները և ծածուկ աղոթի՛ր քո Հորը» (Մատթ. 2 6):

Սենյակը և դռուը տեսանելի շինություններին չի ասում, քանի որ կան այնպիսի մարդիկ, ովքեր չունեն այդպիսի սենյակներ: Այլ սենյակ ասաց հոգու միավորմանը և աշխարհական գործերից հրաժարմանը: Այդպիսի սենյակ է հրամայում մտնել և մեկուսանալ աշխարհի զբաղմունքներից և փակել դռները՝ մարմնական զգայությունները՝ տեսանելիքն ու լսելիքը, որպեսզի տեսանելիքներով չցանկանանք մարմնական փառերին, իսկ լսելիքով, որը նույնպես հրամայում է փակել, որպեսզի չլսենք շաղակրատանք կամ այլ չարախոսություններ: Իսկ երբ այսպես անեք և ամբողջ սրտով աղոթեք ամենքի Տիրոջը, Նա էլ, տեսնելով այդպիսի աղոթքն ու պաղատանքը, մեկուսացած և սրբված աշխարհի մեղքերի բոլոր փառերից, կհատուցի Հայտնապես հանդերձյալ աշխարհում:

«Հայր մեր, որ երկնքում ես. սուրբ թո՛ղ լինի քո անունը. Քո թագավորությունը թող գա. Քո կամքը թո՛ղ լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է, մեր հանապազօրյա Հացը սո՛ւր մեզ այսօր և ների՛ր մեզ մեր Հանցանքները, ինչպես որ մենք ենք ներում նրանց, որ Հանցանք են գործում մեր դեմ, և մի՛ տար մեզ փորձություն, այլ փրկի՛ր մեզ չարից, որովհետև քո՛նն է թագավորությունը և գործությունը և փառքը հավիտյանս. ամեն»: (Մատթ. 2 9-13):

Նախ ուսուցանեց, թե ինչպես պետք է աղոթել, իսկ այժմ նաև աղոթքի խոսքերն է ասում: Իսկ ասելով՝ ձեր աղոթքներում մի եղեք չատախտ (տե՛ս Մատթ. 2 7), արգելում է [աղոթել] երկրավոր հոգսերի

և զբաղմունքների [մասին] և [ուսուցանում է] այն աղոթքը, որը երկնային է ու հոգևոր:

«Հայր մեր, որ երկնքում ես». երկնքում բնակվելու [մասին] ասում է այն պատճառով, թեպետև [ներկա] է ամբողջ տեսանելի աշխարհում ոչ միայն գործընթացը, այլ նաև բնութային, քանզի աշխարհի պատվա-կանագույն և հրաշափառագույն մասն է երկինքը:

Բայց ի՞նչ [ասել] է «սուրբ թող լինի քո անունը», մի՞թե միշտ սուրբ է: Այո՛, միշտ սուրբ է, բայց մեր անարժան գործերի [պատճառով], ասվում է, որ պղծվում է Նրա սուրբ անունը, ինչպես ասաց մարգարեն. «Գուց արդե՞ս եք իմ անունը այն ազգերի մեջ, որոնց մեջ մտաք» (Հմմտ. Եզեկ. 12 22): Իսկ երբ կատարում ենք բարի գործեր, ասվում է, որ դրանից Նրա անունը սուրբ է լինում:

Արդ, այդ ասվածը, թե «թող սուրբ լինի քո անունը», ոչ այլ ինչ է նշանակում, եթե ոչ այս՝ թե թո՛ղ սուրբ լինեն մեր գործերը, և Քո առաջ արդար լինենք:

Նույնը հայտնում է նաև հետևյալ [խոսքում]. «Քո թագավորութունը թո՛ղ դա», քանզի Նա մշտապես է Արքա և Դատավոր, բայց այժմ մեր վրա թագավորելու [համար] է ասում: Երբ կատարում ենք Նրա կամքը, այնժամ ասում ենք՝ թագավորեց Նա մեզ վրա:

Իսկ ովքեր չեն կատարում Նրա պատվիրանները, նրանց համար չի ասվում, թե թագավորեց նրանց վրա: Այլ [նրանք] լսելու են այն [խոսքը], որ ասվեց. «Ես ձեզ երբեք չեմ ճանաչել, հեռո՛ւ կացեք ինձանից» (Մատթ. 5 23), քանզի ում չի ճանաչում և չգիտի, այնպիսիների համար ինչպե՞ս կասի թագավորել:

«Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է»:

Նրա կամքը կատարվում է երկնավորների՝ սերովբեների, քերովբեների, աթոռների, պետությունների, իշխանությունների, հրեշտակապետների և հրեշտակների մոտ, իսկ երկրում միայն նրանք են կատարում Նրա կամքը, ովքեր ըստ Նրա հրամանի են ընթանում:

Արդ, հրամայում է աղոթել, որպեսզի Հայր Աստծու կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա, որպեսզի երկրայիններս լինենք, ինչպես երկնայինները:

«Մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ այսօր»: Հացը, ինչպես ինձ է թվում, այն է, որ կերակրում է տեսանելի մարմինը, քանի որ Ինքն ասաց փորձչին, թե ոչ միայն հացով է կերակրվում մարդ, այլ ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծու բերանից (տե՛ս Մատթ. Գ 4), այլ «հաց» ասաց կենդանիություն խոսքին, որ իջավ երկնքից. «Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած» (Հովհ. 2 51): Արդ, հրամայում է ամեն օր աղոթել, կերակրելու համար մեր հոգիները այդ հացով:

«Եվ ների՛ր մեզ մեր հանցանքները, ինչպես որ մենք ենք ներում նրանց, որ հանցանք են գործում մեր դեմ»: Այս ասելով՝ ոչ այլ ինչ է ուսուցանում, եթե ոչ այս՝ թե մեր դեմ հանցանք գործածներին արժանացնենք ներման, որպեսզի և Դու՛ Հայր երկնավոր, ներես մեզ: Որովհետև Ինքն իսկ՝ Փրկի՛չը, քիչ հետո այս մեկնելով, ասաց. «Եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների: Իսկ եթե դուք մարդկանց չներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձե՛զ չի ների ձեր հանցանքները» (Մատթ. 2 14):

«Եվ մի տար մեզ փորձություն»։ Ինչո՞ւ է հրամայում աղոթել՝ չտարվելու համար փորձության, և ինչո՞ւ է ասում՝ «Իր կողմից փորձություն տարվել», ինչպես Աբրահամի մասին գրված է. «Աստված փորձեց Աբրահամին» (Ծննդ. ԻԲ 1):

Այս մասին պետք է ասել, թե կա երկու փորձություն, մեկը, որ Աստծուց է լինում, իր սրբերի քաջությունը հայտնի դարձնելու համար, որպեսզի ցույց տա մարդկանց, թե ինչպիսին են, և [սրբերի] քաջությունը ցույց տալով՝ խրատի նաև այլ մարդկանց, ինչպես եղավ Աբրահամի և Հոբի պարագային, որ ասվեց, թե այլ ինչ մեծագույն բարիք կարվեր քեզ, քան այն, որ քո համբերությունը և քաջությունը ցույց տրվեցին քեզ, սատանային և բոլոր մարդկանց: Այսպիսի փորձությունը բարի և Աստվածային է:

Իսկ մյուս փորձության [դեպքում], որ դժնդակ հանցանքների և Աստծու խոսքը արհամարհելու պատճառով է [լինում], [մարդիկ] անտեսվում և մեկուսացվում են Աստծու նախախնամությունից ու մարդասիրությունից, և դրա համար պեսպես տանջանքներով փորձվում են բանասարկուից ու մարդկանցից: Հրամայում է այսպիսի փորձության մեջ

չընկնել, [այլ] աղոթել և փրկվել չարից՝ աներևույթ թշնամուց և չար գործերից, որոնք կատարվում են ըստ նրա կամքի:

*«Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ լինեք կեղծալորների նման, որոնք իրենց երեսները այլանդակում են...» (Մատթ. 2 16):*

[Տերը] նախ սովորեցնում է ողորմության, ապա՝ աղոթքի և այնուհետև՝ պահքի մասին: Եվ իրավամբ պահպանվեց կարգը, քանի որ ողորմությունը մեծ է, քան աղոթելը, իսկ աղոթելը մեծ է, քան պահեցողությունը:

Եվ այս Հայտնի դարձավ մաքսավորի [պատմությունից], ով ամբողջ սրտով աղաչեց և ավելի արդար եղավ, քան փարիսեցին, որ պահքով էր պարծենում: Նույնպես և Հայտնի դարձավ Աննայի՝ Սամվել մարգարեի մոր [պատմությունից] (տե՛ս Ա Թագ. Ա): Նաև Մանասեից, որ այնպիսի դառը մեղքերից և անօրենություններից միայն աղոթքներով փրկվեց և դարձյալ արժանացավ թագավորության (տե՛ս Դ Թագ. 21):

Բայց հարց կա պահքի կապակցությամբ, թե արդյոք ո՞ր պահքն է Հրամայում պահել. Հրաժարվելը տեսանելի կերակուրներից, թե՞ Հոգու պահքը՝ հեռանալը այնպիսի կերակուրներից, որոնք աղտոտում են Հոգիները: Կարծում եմ, որ երկուսի մասին էլ ասվում է՝ և՛ երևելիի, և՛ աներևույթի: Քանի որ միայն երևելի կերակուրներից մեկուսանալը չի կարող շատ բաներով նպաստել առաքինությանը: Եվ այս մասին վկայում է Շապի մարգարեն՝ այսպես ասելով. «Այդ ինչպե՞ս է, որ մենք ծոմ պահեցինք, և Դու չտեսար», և ժողովուրդը ասում էր Աստծուն. «Մեզ ենթարկեցինք գրկանքների, և Դու չտեսար»:

Որին Աստծու կողմից մարգարեն պատասխանում է այսպես. «Քանի որ ձեր ծոմապահության օրերին ձեր ցանկություններն եք կատարում և կսկիծ պատճառում բոլոր նրանց, ովքեր ենթակա են ձեզ: Այդպիսի ծոմապահությունը չէ, որ ես ընտրեցի, և ոչ էլ այնպիսի օրը, երբ մարդ իր անձն է տանջում: Եթե պարանոցը կորացնես օղակի նման ու տակդ քուրձ ու մոխիր տարածես, այդ էլ, սակայն, չեմ համարի ծոմ և ընդունելի օր: Այդպիսի ծոմապահությունը չէ, որ Ես ընտրեցի: Քանզի՛ր անիրավության հանգուցը, խորտակի՛ր քո վաճառականական խարդախությունն ու բռնությունը»:

«Քաղցածներին՝ բաժանիր քո հացը և անօթևան աղքատներին տար

քո տունը. եթե մերկ մարդ տեսնես, հագցրո՛ւ նրան, բայց քո ընտանիքի զավակին մի՛ անտեսիր: Այն ժամանակ պիտի կանչես, և Աստված պիտի լսի քեզ. և մինչդեռ աղաչանքի խոսքերը ավարտած չլինես, Նա պիտի ասի, թե «ահա հասել եմ» (Շապի ԾԼ 3-9): Սրանք են պահքի պատվիրանները:

*«Այլ երբ դու ծոմ պահես, օծի՛ր քո գլուխը և լվա՛ քո երեսը» (Մատթ. 2 17):*

Գլուխ և երես [ասելով] պետք է հասկանալ տեսանելի [անդամները], սակայն Հրամայում է նաև Հոգու «գլուխը» օծել՝ շուրջբոլորը պարուրելով ողորմությամբ և կարոտյալներին սուրբեր շնորհելով: Նույնպես և Հրամայում է Հոգու երեսը լվանալ մեղքերից և բոլոր աղտերից, որոնք աղտոտում են Հոգու երեսը: Եվ որ Հոգին «գլուխ» է անվանվում, վկայում է Սողոմոնը. «Իմաստունի աչքերն իր գլխի մեջ են» (Ժող. Բ 14): Հայտնի է, որ մարմնի գլխի մասին չէ, որ ասվեց, այլ Հոգու, քանի որ ոչ միայն իմաստունների աչքերն են տեսանելի գլխում, այլև հիմարների և բոլոր մարդկանց:

*«Գանձեր մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրա, ուր ցեցն ու ժանգը ոչնչացնում են, և ուր գողերը պատերն են ծակում ու գողանում, այլ գանձեր դիզեցեք ձեզ համար երկնքում» (Մատթ. 2 19-20):*

Եվ այս ասվեց ողորմության մասին, թե ձեր ինչքերի գանձերը մի՛ դիզեք երկրի վրա, այլ բաշխեցեք կարոտյալներին, որպեսզի ձեր գանձերը լինեն երկնքում: Քանզի եթե երկրի վրա դիզեք, գողը կգողանա, և ժանգը կապականի: «Գող» և «ժանգ» [ասելով] պետք է հասկանալ սատանային ու նրան նմանվողներին, իսկ գանձ՝ այն պաղատանքներին, որ պաղատում ենք երկրավոր կյանքի և մարմնական առողջության համար, ինչպես շատ դեպքերում իսկ տեսնում ենք: Եվ այսպիսի գանձեր դիզելը Հրամանով արգելվում է նաև այլ տեղերում, ընդ որում Հրամայում է Հոգու միայն հանդերձյալ [կյանքի համար]:

*«Մարմնի ճրագը աչքն է. եթե քո աչքը պարզ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի» (Մատթ. 2 22):*

Դժվարին է այս տեսանելի աչքի վերաբերյալ հասկանալ. արդյոք

ինչո՞ւ եթե մարմնի աչքը պարզ լինի, այսինքն՝ քաջատես, ամբողջ մարմինը լուսավոր կլինի: Եվ կամ ծերության ժամանակ, երբ զրկվի տեսողությունից, ինչպես Իսահակի մասին պատմվեց, թե նա ծերության ժամանակ աչքի տկարություն ուներ, պետք է խմանալ թեթև, որ ամբողջ մարմինը խավարեց: Եվ դարձյալ, ովքեր ծննդյան [օրվանից] իսկ զրկված են երևելի տեսողությունից, ինչպե՞ս կարող է դրանից ամբողջ մարմինը խավարած լինել: Բայց նաև նրանք, ովքեր զորավոր են տեսանելի աչքերով, մարմնի առաջի մասը տեսնում են, իսկ քողարկված մասը չեն տեսնում: Եթե ասվածը ճշմարտապես տեսանելի աչքի մասին է, պետք է կարծել, որ մարմնի առաջի մասը լուսավորված է, իսկ քողարկված մասը՝ խավար: Արդ, եթե այդ դժվարիմաց է, ապա, ուրեմն, մարմնի ճրագ [ասելով] Հոգու աչքը պետք է հասկանալ, քանզի եթե Հոգին խավարած է, կխավարի նաև մարմինն անշիջանելի կրակների մեջ, իսկ եթե Հոգին լուսավոր է առաքինի գործերով և ողորմածությամբ, կլուսավորվի նաև մարմինը երկնքի արքայությունում:

*«Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կա՛մ մեկին կատի և մյուսին կսիրի, կա՛մ մեկին կմեծարի և մյուսին կարհամարհի. չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային» (Մատթ. 2 24):*

Մամոնան, երբայերևից հարստություն է թարգմանվում: Արդ, ողորմության մասին էր պատվերը, որ կատարվում է Աստծուն ծառայելով, իսկ ինչքերի դիզումը և պահպանումը՝ աստանային ծառայելով: Այդ պատճառով և սաղմոսերգուն պատվիրեց՝ ասելով. «Եթե Հարստությունն առվի պես իսկ հոսի, թող մեր սրտերը չցանկանան» (Սաղմ. ԿԱ 11): Այս պատճառով էլ ասվեց՝ չեք կարող [երկու] տիրոջ ծառայել. ողորմություն անել, որ լինում է Աստծու հրամանին ծառայելով, և դիզել՝ պահելու համար, որով ծառա է դառնում բանասարկուի հրամանին:

*«Դրա համար ասում եմ ձեզ. ձեր կյանքի համար Հոգ մի՛ արեք, թե ի՛նչ պիտի ուտեք կամ ի՛նչ պիտի խմեք, և ոչ էլ ձեր մարմնի համար, թե ի՛նչ պիտի հագնեք» (Մատթ. 2 25):*

Եվ պատճառն է վրա բերում. «Ո՞վ կարող է Հոգս անելով իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել» (Մատթ. 2 27): Բայց Հոգավր երկու տեսակ է լինում. առաջինը [այն է], որ հաճո չէ Աստծուն: Եվ

ինքն իրեն հոգավով՝ ոչ ոք չի կարող ամուլ մեկին որդեծին դարձնել, թեկուզ և ծախի իր ինչքերը նրանց համար, ովքեր խոստանում են նրա անգավակությունը որդեծնություն վերածել:

Եվ դարձյալ, ովքեր սերմանում, տնկում և հոգում են անձրևի [հույսով], թե արդյո՞ք վաղը և կամ մյուս օրը կանձրևի: Այսպիսի և սրա նման այլ հոգսերի համար չհրամայեց Հոգավ նույնիսկ առաքյալներին և կատարյալներին, ինչպես նաև բոլոր աստվածապաշտներին, ըստ մարգարեի խոսքի. «Հոգսը դի՛ր Տիրոջ վրա, ու Նա քեզ կկերակրի» (Սաղմ. ԾԴ 23): Իսկ երկրորդի՝ վաղվա կերակուրի և գգեստի մասին չհրամայեց Հոգավ կատարյալներին, ինչպես [և արեցին] Հովհաննեսը, Եղիան, առաքյալները և նրանց նման մարգարեները, ովքեր ո՛չ վարում, ո՛չ հնձում և ոչ էլ ձգտում էին [այդ ամենին]: Իսկ արդար աշխարհականների՝ Աբրահամի, Իսահակի, Հակոբի, Հոբի և այլ նմանների մեծագույն [ուսնեցվածքների] համար եթե ասես, ովքեր ստացան հանդեր և հոտեր, [ասենք, որ] առավել ևս պետք չէ այդպիսի հոգսեր հոգալ:

Իսկ փոքր կարիքները, որոնք անհրաժեշտ են մարդուն, որոնցով կերակրվում և գգեստավորվում ենք, անհնարին է վերացնել, ապա թե ոչ ավելորդ կլինեն սերմերից, ծառերից, հոտերից և հանդերից եղած ստացվածքները: Եվ ինչը մարդ կարող է իր համար անել, [այն պետք չէ անտեսել], ինչպես վաղվա գգեստի [հոգսը], որ երանելի Պողոսը գրում է աշակերտին. «Տրովադայում թողեցի վերարկուն, Կարպոսի մոտ. երբ գնաս, հետո բե՛ր այն» (Բ Տիմ. Դ 13):

Այսպիսով՝ հայտնի եղավ, թե [այն] Հոգատարությունը, որ մարդ կարող է իր նկատմամբ տածել չափավոր կերակրի և ըմպելիքի առումով, չհրամայեց մի կողմ թողնել, այլ [միայն] այն, որը մարդ ի վիճակի չէ կատարել, ինչը միայն Աստծուն է կարելի, ինչպես որդեծնություն և անձրևների, գանազան գգեստների և կերակուրների, որոնց մասին, ինչպես ասվեց, Աստված չհրամայեց Հոգավ, քանի որ դրանց մի մասն անհնարին է մարդկանց համար կատարել, իսկ մյուս մասը՝ ավելորդ, անգամ եթե կատարվեն ջանացողություն և տանջանքի շնորհիվ:

*«Ձեր կյանքի համար Հոգ մի՛ արեք, թե ի՛նչ պիտի ուտեք կամ ի՛նչ պիտի խմեք, և ոչ էլ ձեր մարմնի համար, թե ի՛նչ պիտի հագնեք» (Մատթ. 2 25):*

Մեկն իրավամբ կհարցնի. եթե Հոգին առանց մարմնի չի կերակրվում տեսանելի կերակուրներով, և առանց Հոգու մարմնի Համար էլ անպիտան են զգեստները, ապա ինչո՞ւ կերակուրը և ըմպելիքը Հոգիներին Համար ասվեց, իսկ զգեստները՝ մարմիններին:

Այս մասին [ասենք], որ զգալի գորությունները, որոնցով կերակրվում են կենդանիները, այսինքն՝ Հոտոտելիքը, ճաշակելիքը և շոշափելիքը, Հոգու ազդեցություններ են և ո՛չ մարմնի, դրանից ելնելով էլ եզրակացնում ենք, թե ինչու կերակուրը և ըմպելիքը Հոգու Համար ասվեց:

*«Այսուհետև Հոգ մի՛ արեք վաղվա մասին, որովհետև վաղվա օրն իր մասին կհոգա. օրվան բավական է իր չարիքը» (Մատթ. 2 34):*

Արդյոք ինչո՞ւ է ասում, թե վաղը իր մասին կհոգա, քանզի «վաղը» օր է նշանակում, իսկ օրը արեգակի [մեկ] անգամյա շրջագայությունն է: Արդ, ինչպե՞ս կհոգա անշունչ և անբան օրը:

Ինձ թվում է՝ այսպես ասելը՝ «վաղը իր մասին կհոգա», նշանակում է՝ վաղվա և այլ առաջիկա ժամանակների Տերն ու Արարիչը կհոգա ամենքի պետքերը առաջիկա ժամանակներում:

*«Օրվան բավական է իր չարիքը»:*

Ի՞նչ է նշանակում՝ «օրվան բավական է իր չարիքը»:

Ինչպես [այս մասին] ամենուր ասվել է սուրբ Հայրերի միջոցով, երևելի աշխարհը Հաստատված է չարի վրա, որից և գոյացավ այս աշխարհի իշխանը՝ վիշապը, բոլոր չարիքների գլուխը: Սրա Համար էլ ասվեց. «Օրվան բավական է իր չարիքը»: Այսինքն՝ Հոգալ, թե ինչ է սպասվում չարից, [այն դեպքում] երբ չգիտենք [անգամ] թե ինչ է սպասվում առավոտից մինչև վեցերորդ ժամը և վեցերորդից մինչև տասներկուերորդը, այլև մինչև տասներկուերորդի ավարտը:

*«Մի՛ դատեք, որ չդատվեք. որովհետև ինչ դատաստանով որ դատեք, նրանով էք դատվելու. և ինչ չափով որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեզ Համար» (Մատթ. 5 1-2):*

Ոչ ամեն ոք, ով դատում է, պիտի դատվի, քանի որ դատում էին և՛ Մովսեսը և՛ մյուս օրենադիրները, նաև թագավորները՝ ըստ Աստուծո

Հրամանի և այս [դատաստանի] Համար նրանք չեն դատվելու: Նաև Ինքն իսկ Քրիստոս պիտի դատի բոլոր արարածներին: Իսկ երանելի Պողոսն ասում է. «Զգիտե՞ք, թե մենք Հրեշտակներին էլ ենք դատելու, ուր մնաց թե՛ երկնավորներին» (Ա Կորնթ. 2 13): Ապա ուրեմն դատելու Համար էլ, որ դատվելու է, այլ պետք է իմանալ [այսպես] մի՛ դատեք զուր տեղը, կամ էլ այնպես, ինչպես իսկ ավելացնում է. «Ինչո՞ւ քո եղբոր աչքի մեջ շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի մեջ գերանը չես տեսնում» (Մատթ. 5 3):

Այսինքն՝ եթե քո եղբոր Հոգու թեթևագույն Հանցանքները տեսնում ես, նրան նախատում ես և [հետը] թշնամանում, և գիտես, որ քո Հոգու մեջ ավելի մեծ Հանցանքներ ունես. արդ, նախ պարտ է քեզ նախատվել քո մեծագույն Հանցանքների Համար և ինքզ քեզ դատապարտել, ապա նոր Հանդիմանել ու դատել քո եղբորը փոքրագույն Հանցանքների Համար:

*«Մի՛ տվեք սրբությունը շներին և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցեք» (Մատթ. 5 6):*

«Սրբություն» և «մարգարիտ» աստվածային վարդապետությանն է ասում: «Շուն» կոչում է լիրբ ու անամոթ մարդկանց և անօգուտ բանավիճողներին, ովքեր չեն կամենում ուսանել, այլ՝ միայն Հաղթել ու սուցանողին: Իսկ «խոզ» անվանեց նրանց, ովքեր ընկղմված թավալվում են անգիտության խավարում և ամենևին չեն կարողանում ընտրել և գատորոշել ողջախոհ վարդապետությունը սուտ վարդապետությունից, ինչպես այդ կենդանին չի կարող տարբերել մարգարիտը և պատվական քարերը անպիտան քարերից և փայտից:

Այսպիսի մարդկանց առաջ, որոնց «չուն» և «խոզ» անվանեց, Հրամայում է չգցել սուրբ և մարգարիտ վարդապետությունը: Քանի որ «չներ» անվանվածներն անգամ եթե իմանան, սակայն լրբության և անամոթության պատճառով չեն ընդունի, իսկ «խոզեր» կոչվածները, ովքեր սկզբից ևեթ Հիմարացած են և անգիտության մեջ ընկղմված, չեն Հասկանա:

*«Որպեսզի ձեզ չպատառոտեն» (Մատթ. 5 6):*

Այսինքն չպատառոտեն ճշմարտությունը և ձեզ կսկիծ պատճառեն:

«Խնդրեցե՛ք, և կտրվի ձեզ, փնտրեցե՛ք և կգտնեք, բախեցե՛ք, և կբացվի ձեր առաջ, որովհետև ով որ խնդրի, կատանա, ով որ փնտրի, կգտնի, և ով որ բախի, նրա առաջ կբացվի» (Մատթ. է 7-8):

Խնդրեցեք այն փնտրելին, որը պետք է ձեզ գտնել, ինչպես նախապես ասաց. «Նախ խնդրեցեք Աստծու արքայությունը և Նրա արդարությունը, և այդ բոլորը [Աստված] ձեզ ավելիով կտա» (Մատթ. 2 33): Իսկ եթե խնդրենք [այնպես], ինչպես պետք է խնդրել, այնժամ էլ ստանա, ինչպես և ավելց. «Խնդրում եք և չեք ստանում, որովհետև չարամտորեն եք խնդրում» (Հակոբ. Գ 3):

Արդ, եթե խնդրենք, որպես հարկն է, և բախենք, ինչպես արժանի է՝ ողորմություններով և առաքինի վարքով անելով, այնժամ կբացվի մեզ: Իսկ եթե մեկը չունենա ողորմածություն, այնպիսին չի բացվի, այլ կլսի [այն խոսքը], որը լսեցին Հիմար կույսերը Փեսայից, քանզի չունեին ողորմածություն, այլ մեծամտացած էին լուկ կուսությամբ. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում, հեռացե՛ք ինձնից» (Մատթ. ԻԵ 12):

Սրանից հետո հորդորելով աղոթել և խնդրել, մեջ է բերում այն որդու օրինակը (տե՛ս Մատթ. է 8), ով իր հորից [հաց] խնդրեց, և հայրը նրան բարիքով պարգևեց և ոչ թե հակառակությամբ: Իսկ եթե մարդիկ, որոնց մտքերը մշտապես գտնվում է չարի ազդեցության տակ, գիտեն իրենց որդիներին բարիքներ պարգևել, որչափ ևս առավել երկնավոր Հայրը, Ով անբավ է մարդասիրությամբ, բարիքներ կպարգևի նրանց, ովքեր արժանապես կխնդրեն և կբախեն:

«Մտե՛ք նեղ դուներով. ինչքա՛ն լայն է դուռը և ընդարձակ՝ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում, և բազմաթիվ են նրանք, որ մտնում են դրանով: Ինչքա՛ն անձուկ է դուռը, և նեղ՝ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն» (Մատթ. է 13-14):

«Նեղ դուռը» առաքինության և ամենայն բարեգործության է կոչում, որովհետև մարդ դժվարությամբ է առաքինություն ստանում, և մարդկանցից քչերն են այն [ստանում]: Մինչդեռ «ընդարձակ դուռը» դրան հակառակ անառակության և ամեն տեսակ չարության է [կոչ անում], որոնք դուրբին են ստանալու և գործելու համար, ուստի և մարդկանցից շատերը անառակներ, չարեր և անիրավներ են:

Արդ, տերունական Խոսքը պատվիրում է գնալ նեղ ճանապարհով, որովհետև առաքինությունն ու բարեգործությունն են, որ տանում են դեպի հավիտենական կյանք, իսկ ընդարձակ ճանապարհը՝ անառակությունը, անիրավությունը և սրա նմանները հրավիրվում են դեպի հավիտենական կորուստ:

«Ձգո՛ւյշ եղեք սուտ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարների զգեստներով, բայց ներսից հափշտակող գայլեր են» (Մատթ. է 15) և այլն:

Հրամայում է զգուշանալ խաբեբա վարդապետներից և սուտ մարգարեներից, քանզի իրենց սուտ խոսքերով և շողոքորթությամբ մարդկանց աչքում թվում են ավելի հեզ, քան ոչխարները, և ավելի քաղցր, քան խաղողի և թզենու պտուղները, սակայն իրենց արտերով և խորամանկություններով կորստյան են մատնում իրենց հետևորդների հոգիները: Նրանք առավել հափշտակող են, քան գայլերը, և խոցոտելիս ավելի դժնդակ, քան փուչն ու տատակը:

Եվ ինչպես անհնարին է այսպիսիներից խաղող կամ թուզ հավաքել, նույնպես և անհնարին է այսպիսիներից քաղցր և առողջ վարդապետություն ընդունել:

«Մառ՝ բարի և չար» անվանեց մարդկանց (Մատթ. է 17):

«Բարի ծառ»՝ բարի մարդուն, որ բերում է առաքինության պտուղը: «Չար ծառ»՝ չար մարդուն, որ բերում է հետին վարդապետության սուտ և չար պտուղը:

Իսկ եթե մեկն ասի, թե բարի ծառը չի կարող չար պտուղ տալ, ոչ էլ չար ծառը՝ բարի պտուղ (տե՛ս Մատթ. է 18), [այդ դեպքում] ինչպե՞ս Մովսեսը «հակառակության ջրի» մոտ անհավատ եղավ (տե՛ս Թվեր Ի 10), իսկ Դավիթը՝ բարի ծառը, սպանելով Ուրիային՝ հափշտակեց նրա կնոջը (տե՛ս Բ Թագ. ԺԱ 9-27):

Նաև ուրացավ Պետրոսը (տե՛ս Ղուկ. ԻԲ 57), և բարիներից շատերը չար եղան, ինչպես [Եղիսե մարգարեի սպասյակ] Գեեզին (տե՛ս Գ Թագ. Ե 20-27), [Հակոբի որդի] Հուդան (Ծննդոց ԼԸ 16) և շատ ուրիշներ:

Այս հարցին պետք է պատասխանել [այսպես], թե [նրանք] հանցանք գործելիս չունեին բարու պողպեթության գործությունը, այլ չարից

հրապուրվելով՝ պտղաբերեցին չարություն՝ հարձակման ենթարկվելով կամակոր մտքերից:

*«Այն օրը շատերն ինձ պիտի ասեն. «Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ Քո անունով մարգարեացանք և Քո անունով դևեր հանեցինք» (Մատթ. Է 22) և այլն:*

Մարգարեացավ Բաղասամը՝ Մադիամի քուրմը (տե՛ս Թվեր ԻԳ), նաև քահանայապետը՝ Քրիստոսի լազելության համար: Եվ ոմանք, Քրիստոսի անունով երդվելով, դևեր հանեցին՝ բռնադատելով նրանց: Բայց քանի որ չհավատացին Նրան, դրա համար այն օրը արդար Դատավորից պիտի լսեն. «Ես ձեզ երբեք չեմ ճանաչել, հեռո՛ւ կացե՛ք Ինձանից, դուք ամենքդ, որ անօրենսություն եք գործում» (Մատթ. Է 23):

*«Ով որ լսում է իմ այս խոսքերը և կատարում է դրանք, կյանքովի մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրա. անձրևներ թավվեցին, և գետերը հորդեցին, հողմերը փչեցին...» (Մատթ. Է 24-25) և այլն:*

Ով իր առաքինությամբ տուն է շինում Քրիստոսի վեմի վրա, նա չպիտի սասանվի անձրևի գալուց, գետերի հորդելուց և հողմերի փչելուց: «Անձրևը» չար բանարկուն է, չարագործության հրավիրողը, «գետերը» այս անձրևից առաջացած նեղերն են, «հողմերը»՝ բոլոր չար հոգիները: Եվ այս «վեմի» վրա չեն երևում Սողոմոնի ասած օձի հետքերը (Հմմտ. Առակ. Լ 19):

*«Երբ Հիսուս իջավ լեռից, Նրա ետևից շատ ժողովուրդ գնաց: Եվ ահա մի բորոտ, մոտենալով Նրան, երկրպագում էր ու ասում. «Տե՛ր, եթե կամենաս, կարող ես ինձ մաքրել» (Մատթ. Լ 1-2):*

«Բորոտ» պետք է իմանալ ոչ միայն մարմնով, այլև հոգով: Դրա համար էլ չէր կարողանում բարձրանալ լեռը և լսել վեհագուշն վարդապետությունը: Իսկ Հիսուսի լեռից իջնելիս, այսինքն՝ բարձր վարդապետության դադարից հետո մոտենալով սրբվեց հոգու բորոտությունից, հավատալով, որ եթե կամենա, կարող է իրեն մաքրել ապա Աստծու խոսքով սրբվեց մարմնի բորոտությունից:

Եվ արդյոք ինչո՞ւ էր հրամայված ոչ ոքի չասել, այլ իրեն ցույց տալ

քահանային [միայն]: Կարծում եմ [այսպես] է պատվիրել, որպեսզի Նրա համբավը չտարածվի Հրեաստանում, թե Աստված է, քանզի խոսքով բորոտին սրբելը Աստծու և աստվածային գործության գործ է: Իսկ Հիսուս դեռևս չէր կամենում իրեն հայտնել, թե Աստծու Որդի է և մարդացավ:

*«Կախառնայում մտնելիս Նրան մոտեցավ մի հարյուրապետ. աղաչում էր Նրան և ասում...» (Մատթ. Լ 5) և այլն:*

Ըստ Մատթեոսի, այս երկրորդ նշանն [էր, որ] բժշկեց հարյուրապետի ծառային՝ նրանից հեռու գտնվելով, քանի որ հարյուրապետը ասաց, թե արժանի չեմ, որ Դու իմ հարկի տակ մտնես (տե՛ս Մատթ. Լ 8): [Եվ Հիսուս] զարմացավ հարյուրապետի հավատքի և ասածի վրա, թե ես էլ իշխանության տակ եղող մարդ եմ, [ինձ ենթակա զինվորներ ունեմ], սրան ասում են՝ գնա՛, և գնում է, և ուրիշին, թե՛ ե՛կ, և դալիս է. և իր ծառային, թե՛ արա՛ այս, և անում է (տե՛ս Մատթ. Լ 9): Ինչպես բոլոր նրանք, ովքեր իմ իշխանության տակ են, շատում է հարյուրապետը, «կատարում են իմ բոլոր հրամանները, նույնպես և բոլոր գործությունները, Հրեշտակների դասերը, և այլ աներևույթ արարածները, որոնք կարգված են Քո իշխանության տակ, հնազանդվում են Քեզ: Հրամայելով առաքիլ Քո ծառաներից՝ Հրեշտակներից մեկին, որպեսզի գալով՝ բժշկի իմ ծառային:

Արդ, զարմանում է ոչ միայն հարյուրապետի ասածի վրա, թե արժանի չեմ, որպեսզի Դու իմ հարկի տակ մտնես, այլև նրա հավատքի վրա, քանի որ Նրան Արարիչ և բոլոր արարածների՝ երևելիների և աներևույթների Տեր ճանաչեց, ինչպես ինքն էր իր բոլոր ծառաների տերն ու իշխանը: Այդ իսկ պատճառով ճշմարտապես վկայվեց Քրիստոսից, որ ամբողջ Իսրայելի մեջ չգտնվեց այսպիսի հավատ (տե՛ս Մատթ. Լ 10):

*«Բայց ասում եմ ձեզ, որ արևելքից և արևմուտքից շատերը պիտի գան ու երկնքի արքայության մեջ սեղան պիտի նստեն Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ, իսկ արքայության որդիները պիտի ելնեն արտաքին խավար» (Մատթ. Լ 11-12):*

[Տերը] հարյուրապետի՝ Հեթանոս մարդու մեջ գտնելով այնպիսի հավատ, որը չգտավ Իսրայելում, ասաց. «Հեթանոսներից շատերը, կմտնեն արքայություն, իսկ արքայության որդիները կելնեն» (տե՛ս Մատթ. Լ 12):



Արքայալուծյան որդիները խորալեզիներն էին, և նրանցից, ովքեր չհավատացին Քրիստոսին՝ Աստուծու Որդուն, պիտի ելնեն արտաքին խավարը:

«Եվ մի դպիր մոտենալով ասաց նրան. «Վարդապետ, ես էլ քո ետևից կգամ, ուր էլ որ գնաս»: Հիսուս նրան ասաց. «Աղվեսները որջեր ունեն, և երկնքի թռչունները՝ բույներ, բայց Մարդու Որդին մի տեղ չունի, որ իր գլուխը դնի» (Մատթ. Ը 19-20):

«Աղվես» է կոչում մարդկանց մեջ նենգավորներին, ինչպես և Հերոդիսի վերաբերյալ ասաց. «Գնացե՛ք, ասացե՛ք այն աղվեսին» (Ղուկ. ԺԳ 32): Իսկ թռչուններ անվանեց ինքնահավաններին՝ բանասարկուին նմանվողներին կամ նրա իսկ՝ բանասարկուի գորութուններին, ինչպես և գրված է սերմնացանի առակում. «Եվ սերմի մի մասն ընկավ ճանապարհի եզրին, և երկնքի թռչունները գալով այն կերան» (Ղուկ. Ը 5): Եվ քանի որ տեսավ դպիրի հոգին, որ նենգութամբ էր խոսում իր հետ, աղվես անվանեց նրան՝ անարժան համարելով աշակերտելու իրեն: Նրան անվանեց նաև ինքնահավան թռչուն և բանասարկու վհուկ:

«Եվ իր աշակերտներից մեկն ասաց. «Տե՛ր, ինձ թո՛ւյլ տուր, որ գնամ նախ իմ հորը թաղեմ: Հիսուս նրան ասաց. «Դու իմ ետևից արի և թո՛ւյլ տուր, որ մեռյալները թաղեն իրենց մեռելներին» (Մատթ. Ը 21):

Ովքեր չարութունից առաքինության են փոխվում, սրանց չարության հայրը՝ աստանան, մեռնում է, իսկ Քրիստոս կենդանանում է նրանցում, ինչպես ասում է երանելի Պողոսը. «Քրիստոս կենդանի է ինձանում» (Գործք ԻԵ 19): Իսկ ովքեր չարության մեջ են մնում և կամ առաքինութունից չարության են փոխվում, նրանց մեջ կենդանի է իրենց հայրը՝ աստանան, իսկ իրենք՝ մեղքերով մեռած են:

Եվ դրա համար Հիսուս ասաց դպիրին, թե քո մեջ ինձ համար բնակության տեղ չկա, քանզի քո հայրը կենդանի է քեզանում, իսկ աշակերտին, ում չարության հայրը մեռած էր, ասաց, թե իմ ետևից արի, քանզի քեզանում եմ բնակվելու, իսկ ովքեր մեղքերով և անիրավությամբ մեռած են, թո՛ւյլ տուր նրանց թաղել իրենց մեռելներին (տե՛ս Մատթ. Ը 19-21):

«Եվ երբ նա նավակ մտավ, նրա ետևից գնացին իր աշակերտները:

Եվ ահա ծովի վրա մեծ փոթորիկ առաջացավ, այնքան, որ նավակը ծածկվեց ալիքներից: Իսկ ինքը ննջում էր» (Մատթ. Ը 23-24):

Աներևույթ Աստվածությամբ աստելով ծովի տեսանելի հողմերը մեծ խաղաղություն արեց, որպես ամենքի Արարիչ և Տեր: Փոթորիկն ու խուռվությունը հոգիների խուռվության ու պեկոծության խորհրդանիշն են, որ լինում են աստանայից: Այդպիսի հոգիների համար Քրիստոս ննջած է ասվում, և չի ներգործում ու ազդում, մինչև որ աշակերտներն եկան և քարոզությամբ ու աղաչանքներով արթնացրին Քրիստոսին՝ մարդկային սերնդի փրկության համար, Ով էլ իր մարդասիրությամբ գալով այս երևելի աշխարհը՝ ամբարշտությամբ ու կուսակաշտությամբ հուզված և պեկոծված ծովը, դադարեցրեց անաստվածության մոլորությունից ու պեկոծությունից:

«Եվ երբ անցավ գերգեսացիների երկիրը, նրան պատահեցին գերեզմաններից ելած երկու դիվահար, այնքան աստիկ կատաղած, որ այդ ճանապարհով որևէ մեկը չէր կարող անցնել: Եվ երբ տեսան Հիսուսին, ահա աղաղակեցին ու ասացին. «Ի՞նչ կա մեր և Քո միջև, Հիսուս, Որդի՛ Աստծու, մեզ տարածամ տանջելու եկար» (Մատթ. Ը 28-29):

Ասում են՝ չար դևերը գերեզմաններում են բնակվում, քանի որ ոչ միայն ողջերի մարմիններում էին բնակվում, այլ հոժար էին նաև մեռյալների [մարմիններում բնակվել]: Իսկ Քրիստոսին հանդիպելով ելան մեռելներից ու աղաչեցին, որ թեպետև չի թողնում բանականների մարմիններում բնակվել, գոնե անբանների և անարգ կենդանիների [մարմիններում] հրամայի բնակվել, որպեսզի դարավանդից գլորվելով և ջրերի մեջ խեղդվելով՝ ազատվեն խոզությունից:

Եվ դրա համար էլ մտնում են խոզերի մեջ և ոչ՝ ոչխարների, աղավնիների և կամ այլ սուրբ կենդանիների մեջ:

Հիսուսին կոչեցին Աստուծու Որդի, որպես Նրա գորութունից պարտվածներ և Նրա, իբրև Աստուծու Որդու, վարդապետության վրա հիացածներ: Բայց որպես Հրեշտակային փառքից և մեծութունից ընկածներ, անգիտանում էին Նրա գալստյան ժամանակի վերաբերյալ, որովհետև ասում էին, թե ինչո՞ւ եկար մեզ տարածամ տանջելու: Բայց ես կարծում եմ, որ Նրա գալստյան ժամանակը նաև Հրեշտակները չգիտեն:

*«Եվ նավակ մտնելով՝ եկավ իր քաղաքը» (Մատթ. Թ 1):*

Իրոք հեռանում է այն գավառից, ուր [վերը] հիշված խոզերն էին արածում, և գալիս է այն պատշաճող վայրը, որտեղ բժշկելով անդամալուծին՝ ասում է. «Քաջալերվիր որդյակ, քո մեղքերը քեզ ներված են» (Մատթ. Թ 2), և դրանով ակնարկում է, որ կա մարմնի այնպիսի ախտաժետություններ, որոնք հոգու հանցանքների պատճառով են լինում: Եվ քանի որ ախտաժետը ամբողջ հոգով և մարմնով հավատաց Աստծու Որդուն, նրա մեղքերը թողնվեցին, և մարմինը առողջացավ, ինչպես պատմագիր ավետարանիչն է գրում. «Հիսուս նրան ասաց. «Վերցրո՛ւ քո մահիճը և քայլի՛ր» (տե՛ս Մատթ. Թ 5), և կամ ըստ մյուս ավետարանիչի՝ «Վերցրո՛ւ քո մահիճը և գնա՛ քո տունը» (Մարկ. Բ 9):

Մահիճը և թախտը մարմինն են խորհրդանշում, որը հոգին վերցնելով՝ իր վրա է կրում: Ուստի Բանն Աստված հոգուն ասում է. «Վերցրո՛ւ քո մահիճը»՝ առողջացած մարմինը, և գնա՛ քո տունը, այսինքն՝ դեպի առաքինություն, որը մեղքերից ազատված հոգու բնակատեղին է: Եվ նա ազատվեց ըստ առակի խորհրդաբանություն:

*«Գնացե՛ք, սովորեցե՛ք, թե ի՛նչ է նշանակում ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ» (Մատթ. Թ 13):*

Ի՞նչ է [նշանակում] «ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ»: Մատթեոսին մաքսավորությունից կոչելով առաքելություն, և այլ մեղավորների և մաքսավորների հետ տանը նստելու [պատճառով] փարիսեցիները [Նրան] արհամարհում էին, թե ինչո՞ւ է ուսում ու խմում մաքսավորների և մեղավորների հետ, որոնց պատասխանեց՝ ասելով. «[Ես] չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղավորներին՝ ապաշխարություն», ուստի և. «Առողջներին բժիշկներ պետք չեն, այլ հիվանդներին» (Ղուկ. Ե 31-32), և պետք է ողորմություն անել նրանց, ովքեր կարոտ են ողորմության:

Արդ, քանզի մեղավորներ են, դրա համար սրանց ողորմելով ուսում և խմում եմ իրենց հետ, որպեսզի կոչեմ ապաշխարություն, ուսուցանելով նրանց, որ ողորմություն եմ կամենում և ոչ թե զոհ, ինչպես ասված է Ովսե մարգարեի [կողմից] (տե՛ս Ովսե. Զ 6):

*«Այն ժամանակ Հովհաննեսի աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին. «Ինչո՞ւ մենք և փարիսեցիները հաճախ ծոմ ենք պահում, իսկ Քո աշակերտները չեն պահում»: Հիսուս նրանց ասաց. «Մի՞թե կարելի բան է, որ Հարսանքավորները սուգ պահեն, քանի փեսան նրանց հետ է, բայց կգան օրեր, երբ փեսան նրանցից կվերցվի, և ապա ծոմ կպահեն: Ոչ ոք չօգտագործված կտավի կտորը հնացած ձորձի վրա չի կարկատի» (Մատթ. Թ 14-16):*

[Երբ] ուտելու և ըմպելու պատճառով Քրիստոսի աշակերտները արհամարհվեցին Հովհաննեսի աշակերտներից ու փարիսեցիներից, Հիսուս պատասխանեց, թե մինչ Ես՝ Փեսաս, նրանց հետ եմ, պետք չէ դրանց պահք պահել, այլ միայն ուսանել իմ վարդապետությունն իբրև մի նոր վարդապետություն, որովհետև այն հնացած և մաշված չէ հրեական վարդապետություններով: Քանզի այդպիսիներին, ովքեր չեն կարողանում հանդուրժել իմ վարդապետությունը, այլ բաժանվում և պատուվում են, պետք չէ ուսուցանել:

Ինչպես և նախապես ասվեց, թե մի՛ տվեք սրբությունները շներին և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցեք, որպեսզի դրանք ոտքի կոխան չդառնան և հետո ձեզ պատեն (տե՛ս Մատթ. Ի 6): Եվ ինչպես չօգտագործված կտավի կտորը հնացած ձորձի վրա չեն կարկատում, որովհետև էլ ավելի կպատուվի, և [ոչ էլ] նոր գինին հին տիկերի մեջ են [լցնում], քանի որ և գինին կթավալի, և տիկերն էլ կկորչեն, այլ նոր գինին նոր տիկերի մեջ են լցնում, որպեսզի և՛ գինին պահվի, և՛ տիկերը չպատուվեն (Հմմտ. Մատթ. Թ 16-17), այնպես էլ նոր և սքանչելի վարդապետությունը չի հանդուրժում ընդունել հրեական և հեթանոսական ախտերով վարակված և հնացած անձանց:

*«Եվ տեսնելով ժողովրդի բազմությունը՝ Հիսուս գթաց նրանց, որովհետև հոգնած էին և ցրված, ինչպես ոչխարներ, որոնք հովիվ չունեն: Այն ժամանակ իր աշակերտներին ասաց. «Հունձքը առատ է, իսկ մշակները՝ սակավ» (Մատթ. Թ 36-37):*

[Տերը] իշխանի հավատքից հորդոր ստանալով՝ [աշակերտներին] հետ գնում է նրա դստերը մեռելներից հարություն տալու (տե՛ս Մատթ. Թ 18): [Ճանապարհին Նրան] մոտենում է [մի կին], ով տասներկու տարուց ի վեր արյունահոսություն ուներ և համաձայն մովսիսական օրենքի

անսուրբ էր, ինչպես և գրված է՝ «Արյունահոսություն և սերմի ծորում ունեցողը թող չմտնի Աստուծո տաճար» (տե՛ս Ղևտ. ԺԵ 33), քանի որ նա օրինակն է աղտեղի և գարշելի ցանկությունները անդադար դուրս հանող անձանց: Իսկ արյունահոսություն ունեցող կինը հանդիպելով Քրիստոսին [մաքրվեց], որովհետև իր հոգու նախկին հավատով սրբվեց գարշելի հոսումից, որի համար Քրիստոսից արժանավորվեց նաև մարմնի հոսման դադարելուն և բժշկություն գտնելուն:

Սրա բժշկությունից հետո եկավ իշխանի տուն՝ նրա դատերը մեռելներից հարություն տալու: Բժշկում է նաև կույրերի աչքերը՝ նախապես բժշկելով նրանց հոգիների լուսատուները, ինչպես նաև համբերին ու խուկերին:

Իսկ այժմ էլ, ժողովրդին հոգնած տեսնելով, Իր աշակերտներին ասում է. «Հունձքը առատ է, իսկ հնձողները՝ սակավ»: «Հունձք» անվանեց [նրանց], որոնց մեջ ընկնում է վարդապետության սերմը, իբրև բարեբեր հողում, և քանի որ նաև հեթանոսներից շատերը պիտի ընդունեն այնպիսի սերմանողի սերմը, դրա համար էլ ասաց. հնձողները սակավ են, որովհետև [այդպիսիք] տակավին միայն առաքյալներն էին:

*«Արդ, աղաչեցե՛ք Հունձքի տիրոջը, որ մշակներ հանի իր հունձքի համար» (Մատթ. Թ 38):*

Առաքյալներին հորդորում է աղոթել Հորը, որպեսզի բազմաճյուղ հնձողները, այսինքն՝ վարդապետները, ովքեր արդարորեն քաղում և հնձում են ճշմարտության խոսքը: Եվ այս ասելով՝ կանչում է տասներկու աշակերտներին և նրանց կոչում է անուններով, ինչպես և գրված է ավետարանչի կողմից. և տասներկուսի անուններն ըստ Մատթեոսի հետևյալն են. «Սիմոն՝ Պետրոս [կոչվածը] և [նրա եղբայրը] Անդրեասը, [Զեբեդիոսի որդի] Հակոբոսը և [նրա եղբայրը] Հովհաննեսը, Փիլիպպոսը և Բարդուղիմեոսը, Թովմասը և Մատթեոս մաքսավորը, Ալփեոսի որդի Հակոբոսը և Ղեբեոսը, որ Թադեոս կոչվեց, Սիմոն Կանանացին և Հուդա Իսկարիովացին, [ով և մատնեց Նրան]» (Մատթ. Ժ 2-3): Նույնը և Մարկոսն է ասում (տե՛ս Մրկ. Գ 18):

Իսկ ըստ Ղուկասի՝ Սիմոն, [ում և Պետրոս կոչեց], Անդրեաս՝ [նրա եղբայրը], Հակոբոս, Հովհաննես, Փիլիպոս, Բարդուղիմեոս, Թովմաս, Մատթեոս, Ալփեոսի որդի Հակոբոսը, Սիմոն՝ Նախանձահույզ կոչվածը,

Հակոբի որդի Հուդան և Իսկարիովացի Հուդան, [ով և մատնիչ եղավ] (տե՛ս Ղուկ. Զ 14):

Ղուկասը՝ Թադեոսի փոխարեն՝ Սիմոն Նախանձահույզ, և Սիմոն Կանանացու փոխարեն՝ Հուդա Հակոբյան է ասում: Եվ հարց է ծագում, ինչո՞ւ արդյոք երկու առաքյալների անունների պատճառով զանազանվեցին երկու ավետարանիչների խոսքերը: Միգուցե երկանո՞ւն էին:

Այն որ Հուդա Հակոբյանը առաքյալներից մեկն էր, Հովհաննես ավետարանիչն է ուսուցանում այսպես ասելով. «Հուդա ոչ Իսկարիովացին ասաց Նրան. «Տե՛ր, ինչպե՞ս եղավ, որ Քեզ պիտի հայտնես մեզ և ոչ թե աշխարհին» (Հովհ. ԺԳ 22):

*«Մի՛ ունեցեք ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ և ո՛չ էլ պղինձ դրամ ձեր գոտիների մեջ» (Մատթ. Ժ 9):*

Առաքելական ճանապարհը անկարոտ լինելով աշխարհիկ բաների, պետք չունի ոսկու, արծաթի կամ սրանց նմանների:

*«Ո՛չ կոշիկներ ձեր ոտքերին» (Մատթ. Ժ 10):*

Ճանապարհորդելիս առաքյալներին պատշաճ չէ մեռելություն ունենալ, որի նշանակն է կաշվից կոշիկները, այլ մանավանդ [պետք է] կենդանությամբ անցնել ճանապարհը, [համաձայն հետևյալ խոսքի] որ ասաց. «Ես եմ ճանապարհը» (Հովհ. ԺԳ 6), և ելնել սուրբ հողի վրա՝ ոչնչից չվախենալով, քանի որ օձի ճամփան ասպառափի վրա չի երևում (Առակ. Լ 19):

*«Որովհետև մշակն արժանի է իր վարձին» (Մատթ. Ժ 10):*

Դրա համար ձեզ հրամայում եմ ոչինչ չվերցնել աշխարհից, քանզի ձեր գործունեություն [համար] բավական է ձեր վարձքը՝ առաքելական շնորհքը, որը պարգևեցի ձեզ:

*«Զեր ոտքերից փոշին թոթափեցե՛ք» (Մատթ. Ժ 14):*

Տեսանելի փոշին, որ ճանապարհորդության ընթացքում է լինում, խորհրդանիշն է անօգուտ եղած աշխատանքի: Արդ, առաքյալներին հրամայում է այն քաղաքներից ելնելիս, որտեղ չընդունեցին նրանց խոսքը, ոտքերի փոշին թոթափել նրանց վրա, այսինքն՝ ասել. «Մենք ան-

պարտ ենք, քանզի աշխատեցինք ըստ վարդապետի հրամանի, և մեր աշխատանքը դատարկ և ավելորդ եղավ, դու՛ք տեսեք»:

*«Ճշմարիտ եմ ասում ձեզ, Իսրայելի քաղաքները դեռ վերջացրած պիտի չլինենք, նախքան մարդու Որդու գալը» (Մատթ. Ժ 23):*

Արդյոք որո՞նք են Իսրայելի քաղաքները, որոնք առաքյալները չեն կարող սպառել մինչև Քրիստոսի գալուստը: Քանզի եթե Իսրայելի քաղաքներ է անվանում այն երկիրը, որը իսայելացիներին բաժանեց Նավեի որդի Հեսուն, [դրանք] առաքյալները երեք կամ չորս տարում հեռու-թոշամբ կապառեին: Ուստի և ովքեր համբեցին Իսրայելի ժողովուրդին՝ ըստ թագավորի հրամանի, և ոչ [իսկ] մեկ ամբողջ տարի անցկացրին չըջագայության մեջ:

Իսկ եթե Իսրայելի քաղաքներ ասաց, գլխավորաբար Աստծուն տեսնող ամբողջ երկիրը՝ Քրիստոսի ժամանակվա նախկին բոլոր քաղաքները, [սպա] Քրիստոսի առաքյալները չհասան բոլոր [այդ] քաղաքները, թեպետև պատասխանում ենք այդպես, թե հասան, համաձայն ասողի. «Նրանց ձայնը ամբողջ երկիրը բռնեց, և նրանց խոսքը հասավ աշխարհի ծագերին» (Սողմ. ԺԸ 5): Սակայն տասներկուսից ոչ ոք Իսրայելի քաղաքներում չըջեց մինչև Քրիստոսի գալուստը:

Արդ, ինչպես ինձ է թվում, «Իսրայելի քաղաքներ» [ասելով] պետք է հասկանալ «Քրիստոսի քաղաքներ», քանզի Քրիստոս մարգարեի [կողմից] Իսրայել կոչվեց. «Հակոբն իմ ծառան է. օգնական պիտի լինեմ նրան: Իսրայելն իմ ընտրյալն է, որը հաճելի եղավ իմ Հոգուն: Իմ շունչը կտարածեմ Նրա վրա, և նա հեթանոսների դատաստանը կտեսնի» (Եսայի. ԽԲ 1): Այս Իսրայելի քաղաքները, այսինքն՝ երկրի ամբողջ բնակչությունը չեն կարող սպառել, այսինքն՝ լուսավորել բոլոր աշակերտածներին տասներկուսի վարդապետութեամբ մինչև Քրիստոսի գալուստն իր փառքով:

*«Աշակերտը ավելին չէ, քան ուսուցիչը, և ոչ էլ՝ ծառան, քան տերը» (Մատթ. Ժ 24):*

Աշակերտը քանի դեռ աշակերտութեան մեջ է, անհնարին է, որ ավելի լավը լինի քան վարդապետը, և ծառան, երբ ծառայութեան մեջ է, առավել լինի, քան տերը: Սակայն այս ասված է իր և առաքյալների

րի համար, քանի որ ասաց. «Եթե ձեզ հալածեն այս քաղաքից, կփախչեք դեպի մեկ ուրիշը, և եթե ձեզ դրանից էլ հալածեն, կփախչեք դեպի այն մյուսը» (Մատթ. Ժ 23):

Այժմ էլ, կարծես նրանց մխիթարելով փախուստի համար, ասաց. «Մի՛ տրամեցեք, եթե ձեզ փախուստի մատնեն, քանի որ դու՛ք, ծառաներդ և աշակերտներդ, ավելի լավը չէք, քան ձեր Տերը և ուսուցիչը»: Արդ, եթե ինձ՝ աշխարհի և տան Տիրոջը, բեղզեբուղ անվանեցին, որչափ ևս առավել ձեզ՝ իմ ընտանիքի անդամներին (տես՝ Մատթ. Ժ 24-25):

*«Նրանցից չվախենաք, որովհետև չկա ծածուկ բան, որ չհայտնվի, և գաղտնի բան, որ չիմացվի» (Մատթ. Ժ 26):*

Թեպետև ոմանց կողմից ինչ՞որ գաղտնի և ծածուկ գործեր արվեն, որոնք մարդկանց անհայտ կմնան, սակայն այն ժամանակ, երբ Աստված դատի մարդկանց բոլոր գաղտնի գործերը, ամեն ինչ հայտնի դարձնելով պիտի հանդիմանի: Երբ Տերը գա ու լուսավորի խավարի գաղտնիքները, կհայտնի նաև սրտերի գաղտնիքները:

*«Ինչ ձեզ ասում եմ խավարի մեջ, դուք ասացեք լույսի՛ մեջ, և ինչ լուսւմ եք ականջի մեջ փախուքով, քարոզեցե՛ք տանիքների վրայից» (Մատթ. Ժ 27):*

Այժմ, ինչ ուսուցանում եմ առանձնաբար և առականերով, քարոզեցեք համարձակութեամբ և հայտնապես, և ինչ ասում եմ ականջի մեջ գաղտնի, այդ ուսուցանեք տանիքների վրայից, այսինքն՝ բարձր ձայնով բոլոր կամեցողներին:

*«Մի՛ երկնչեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող» (Մատթ. Ժ 28):*

Այժմ էլ ուսուցանում է, թե նրանք, ովքեր սպանում են, հոգի՛ն չէ, [որ սպանում են], այլ մարմինը՝ [այն] զգայութեանից փոխելով անզգայութեան: Իսկ հոգու մահը փոխումն է առաքիլութեանից չարութեան և անմեղութեանից մեղավորութեան: «Եվ այն անձը, ով մեղանշում է, պիտի մեռնի», նախապես ասաց մարգարեն (տես՝ Եզեկ. ԺԸ 4):

*«Այլ դուք առավել վախեցե՛ք նրանից, ով կարող է գեհեմի մեջ*

կորստյան մատնել Հոգին և մարմինը» (Մատթ. Ժ 28):

Հոգու և մարմնի կորուստ, առում է հավիտենական և դառը տանջանքները, միաժամանակ հայտնելով, որ Հոգին և մարմինը միասին պիտի տանջվեն :

«Չէ՞ որ երկու ճնճղուկ մի դահեկանի է վաճառվում, բայց նրանցից մեկն անգամ առանց ձեր Հոր գետին չի ընկնում. և ձեր գլխի մազերը բոլորն իսկ հաշվված են» (Մատթ. Ժ 29-30):

Քանզի եթե մի ճնճղուկ անգամ առանց Աստծու՝ ձեր Հոր հրամանի գետին չի ընկնում, այդ դեպքում ինչպե՞ս ձեզ նից [ոմանք] կմատնվեն թագավորների և դատավորների ձեռքը, առանց Աստծու՝ ձեր երկնավոր Հոր հրամանի: Այս ասացի ըստ [մեջ բերված] խոսքի: Իսկ ըստ առակի մեկնություն՝ մեծամիտ մարդիկ կոչվեցին երկնային ճնճղուկներ, ոչ թե [այնպիսի] մեծամեծ [թուշուհներ], ինչպիսին են արծիվները, և ոչ էլ սեղանին արժանիներ, ինչպես տատրակն ու աղավնին:

Երկուսը վաճառվում են մի դահեկանի, քանզի ինչպես երկու թիվը պատշաճ է անսուրբ կենդանիներին, նույնպես և՛ անարգներին և նվազներին, որովհետև ասարիովնը դրամի միավոր է:

«Ձեր, ռասաց, ղլխի մազերն իսկ համրված են»: Ձեր՝ իմ աշակերանների և ձեր նմանների գլխի մազերն անգամ համրված են, այսինքն՝ ոչ միայն մեծամեծ գործերը, այլև փոքրագույնները, շատերի կողմից ավելորդ կարծվածները, համրված են Աստծու առջև:

«Մի՛ վախեցեք, քանի որ բազում ճնճղուկներից լավ եք դուք» (Մատթ. Ժ 31):

Ասաց «բազում» և ոչ՝ բոլոր, քանի որ առաքյալները ավելի լավ չէին, քան բոլոր ճնճղուկները. [նկատի ունենալով] ա՛յն ճնճղուկին, որը առանձնացավ տանիքում (Հմմտ. Սաղմ. ՃԱ 7):

«Մի՛ կարծեք, թե եկա խաղաղություն հաստատելու երկրի վրա. չեկա հաստատելու խաղաղություն, այլ՝ սուր, քանի որ եկա, որ բաժանեմ որդուն իր հորից, և դստերը՝ իր մորից և հարսին՝ իր կեսուրից: Մարդու թշնամիները իր տնեցիները կլինեն» (Մատթ. Ժ 34-36):

Աստծու Որդին չեկավ երկրային խաղաղություն հաստատելու հա-

մար, որը սերն է այս աշխարհի զբաղմունքների նկատմամբ, և որով արժանի չես լինի Նրան, այլ ով կվերցնի իր խաչը և կգնա Նրա ետևից, նա արժանի կլինի Նրան, ինչպես երանելի Պողոսն է ասում. «Աշխարհը խաչված է ինձ համար, ես էլ՝ աշխարհի» (Գաղ. Զ 14), այսինքն՝ ինձ համար աշխարհի գործերը մեռած են, և ես էլ մեռած ու ազատված եմ աշխարհից և մարմնական ցանկություններից:

Նաև հրամայում է մեկուսանալ որդուն հորից ու դստերը՝ մորից, ինչպես քրիստոսյան գնդից շատերը [այդպես] արեցին այն սիրո համար, որ ունեին Աստծու հանդեպ, իրենց բաժանեցին որդիներից ու դստերից, հայրերից ու մայրերից, և այս՝ միմյանցից բաժանվելու, մեկուսանալու և Աստծուն մերձենալու պատճառով, մարդու թշնամիներն իր տնեցիներն են լինում, երկրային [արարածներին] թշնամություն նման:

Ապա ուրեմն Նա չեկավ երկրի վրա այս խաղաղությունը հաստատելու, այլ այն երկնային խաղաղությունը, որ խոստացավ առաքյալներին. «Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ, իմ խաղաղությունն եմ թողնում ձեզ» (Հովհ. ԺԴ 27): Այն խաղաղությունը, որով հաշտեցրեց երկնայիններին երկրայիններին հետ՝ քանդելով բաժանող միջնորմը: Ինչպես և հրեշտակների գնդերը, Փրկչի ծնվելու ժամանակ գոչում էին՝ ասելով. «Փա՛ռք Աստծուն բարձունքներում, և երկրի վրա խաղաղությո՛ւն և հաճությո՛ւն՝ մարդկանց մեջ երկնայինների հետ» (Հմմտ. Ղուկ. Բ 14):

«Ով իր հորը կամ մորը սիրում է առավել, քան ինձ, արժանի չէ ինձ: Եվ ով իր որդուն կամ դստերը սիրում է առավել, քան ինձ, արժանի չէ ինձ: Եվ ով իր խաչը չի վերցնում և չի գալիս իմ ետևից, ինձ արժանի չէ» (Մատթ. Ժ 37-38):

Ձի ասում, թե պետք չէ սիրել հորը կամ մորը, որդուն կամ դստերը, այլ առավել, քան Աստծուն պետք չէ սիրել: Քանզի ով առավել, քան Աստծուն սիրում է ինչ որ մեկին՝ կնոջը կամ որդուն, դստերը կամ կերակուրը, ոսկին կամ արծաթը, ա՛յն է նրա ասովածը, ինչպես առաքյալն է ասում. «Նրանց ասովածը նրանց որովայնն է, և վառքը՝ իրենց ամոթը» (Փլլ. Գ 19): Իսկ որ ավելացրեց, թե ով չվերցնի իր խաչը և գա իր ետևից, ինձ արժանի չէ, [սա արդեն] նախապես մեկնվել է ըստ կարողության:

«Ով որ իր անձը գտնում է, այն կկորցնի. և ով իր անձը կորցրեց ինձ համար, այն կգտնի» (Մատթ. Ժ 39):

Ով սիրում է, շատաց, շաշխարհը և այս աշխարհի ինչքերը, այնպիսին կկորցնի իր անձը, իսկ ով Քրիստոսի սիրո համար իր անձը կկորցնի ու կմեռցնի աշխարհի ցանկությունների համար, այնպիսին կգտնի այն: Եվ ով ընդունում է առաքյալների վարդապետությունը, Քրիստոսի վարդապետությունն է ընդունում, և ով մարգարեին ընդունում է, ինչպես հարկ է ընդունել մարգարեին, հաղորդակից է լինում մարգարեի վարձին:

Եվ [չարձյալ, նա] ով այս փոքրիկներից մեկին, որ փոքր և նվազ է գիտությամբ և առաքինությամբ, կուսուցանի ճշմարիտ գիտությունն ու առաքինությունը, որը խորհրդանշվեց սառը ջրով, և որի համար չի ասում պարզապես ջուր, այլ՝ գովացուցիչ ջուր, այսինքն՝ ճշմարիտ վարդապետություն, և մի բաժակ է ասում և ոչ երկու կամ երեք, քանզի մի՛ է Սուրբ Հոգու վարդապետությունը, թեպետև բազում եղանակներով է իմացվում, [իր վարձը չպիտի կորցնի]:

է

«Իսկ Հովհաննեսը, երբ բանտում լսեց Քրիստոսի գործերի մասին, ուղարկեց իր աշակերտներին և նրանց միջոցով ասաց նրան. «Դո՞ւ ես, որ գալու էիր, թե՞ ուրիշին սպասենք» (Մատթ. ԺԱ 2-3):

Հովհաննեսը, ով տեսավ Սուրբ Հոգին աղավնակերպ իջած Քրիստոսի վրա և լսեց երկնքից եկած ձայնը. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճությունը» (Մատթ. Գ 17), և դարձյալ Հիսուսին տեսնելիս ասաց. «Ահա՛ Գառն Աստծու, Ով [Իր վրա] է վերցնում աշխարհի մեղքը» (Հովհ. Ա 29), ինչպե՞ս է այժմ թերահավատություն, թե նա է Քրիստոսը, առաջում իր աշակերտներին Նրան հարցնելու. «Դո՞ւ ես, որ գալու էիր, թե՞ ուրիշին սպասենք»:

Այս մասին ասենք համառոտ: Ոչ թե ինքը թերահավատալով առաքեց [աշակերտներին] Հիսուսի մոտ՝ Նրան հարցնելու, այլ իր աշակերտների թերահավատության պատճառով [այդպես վարվեց], որպեսզի նրանց հավատացնի Նրա՝ Քրիստոսի բերանով, թե Նա է, որ գալու է և պետք է ուրիշին սպասել: Ուստի և Քրիստոս իր Աստվածությունը

հրաշքներով ցույց տալուց հետո ասաց. «Երանի՛ է նրան, ով իմ պատճառով չի գայթակղվում» (Մատթ. ԺԱ 6): Եվ արձակելով Հովհաննեսի աշակերտներին՝ ժողովդին այսպես է ասում Հովհաննեսի մասին:

«Ի՞նչ տեսնելու ելաք անապատում. Հողմից շարժվող եղե՞գ: Հապա ի՞նչ տեսնելու ելաք. փափուկ զգեստներով զարդարված մա՞րդ» (Մատթ. ԺԱ 7-8):

Այս ամենը [աշակերտների արած] հարցումների համար ասվեց, քանի որ Հովհաննեսը նախապես ասել էր. «Ահա՛ Գառն Աստծու, որ [Իր վրա] է վերցնում աշխարհի մեղքը» իսկ հետո, առաքել աշակերտներին՝ հարցնելու Նրան, թե Նա՞ է Քրիստոս: [Դրանից] ժողովուրդը ենթադրեց, թե Հովհաննեսը ասանալել է և թերահավատ դարձել: Այդ իսկ պատճառով [Հիսուս] ասաց. «Մի՛ կարծեք, թե ինչպես եղեգը շարժվում է տեսանելի Հողմից» (հմմտ. Մատթ. ԺԱ 7), նույնպես և Հովհաննեսը աներևույթ Հողմից շարժվեց ու գայթակղվեց իմ պատճառով և դրա համար [աշակերտներին] առաքեց հարցնելու, այլ՝ իր աշակերտների գայթակղության պատճառով, որպեսզի իրենից լսելով. «Երանի է նրան, ով իմ պատճառով չի գայթակղվում» [սուքը] մի կողմ թողնեն գայթակղությունը:

Այլ ի՞նչ ելաք տեսնելու [հանձինս] Հովհաննեսի. մի՞թե փափուկ զգեստներով [զարդարված] մարդու: Փույթ չէ Հովհաննեսի համար մարմնի փափկությունը, որովհետև ազատված է աշխարհի բոլոր զբաղմունքներից:

Այլ, մարգարե՞ կարծեցիք նրան, [այո՛, ասում եմ ձեզ] առավել, քան [մի] մարգարե (տե՛ս Մատթ. ԺԱ 9), քանի որ ոչ միայն մարգարեսցավ իմ մասին, այլև արժանի դարձավ Ինձ մկրտել, որի համար և մարգարեն նրան հրեշտակ է անվանում. «Ահա առաքում եմ իմ հրեշտակին Քո առջևից, որ Քո առաջ Քո ճանապարհը պատրաստի» (Մաղաք. Բ 2):

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, կանանցից ծնվածների մեջ Հովհաննես Մկրտչից ավելի մեծը չի եղել, բայց երկնքի արքայության մեջ ամենից փոքրը մեծ է, քան նա» (Մատթ. ԺԱ 11):

Կանանց ծնունդն [այն] է, որ տղամարդու սերմից է ծնվում: Արդ, տղամարդու սերմից են ծնված մեծ մարգարեներից՝ Մովսեսը, Եղիան,

Եղիան, և առաքյալներից՝ Պետրոսը, Հակոբոսը, Հովհաննեսը, սակայն այսպիսիներեց և ոչ ոք մեծ չէ, քան Հովհաննես Մկրտիչը, թեկուզև մեկը նրանց հավասար համարի, բայց երկնքի արքայության մեջ [ամենից] հետինը մեծ է, քան նա:

«Փոքր» ասելով կամ իր մասին ասաց, քանզի կրտսեր էր, քան Հովհաննեսը: Ես, Պատմ է, Վուլյայից ծնվածս, կրտսերագույն և փոքրագույն, կարծվածս, քան Հովհաննեսը, նրանից մեծ եմ:

Կամ էլ ինչպես ոմանք մեկնեցին, թե [խոսել է] երկնավորների բազում դասերի [մասին], որոնց [վերաբերյալ] ասվում են, թե երկնքի արքայության մեջ են՝ քերովբեները, սերովբեները, աթուռները, [տերությունները, գորությունները], իշխանությունները, պետությունները, հրեշտակապետները և հրեշտակները: Այս երկնավորներից [մեկը], որ փոքր է թվում, մեծ է, քան Հովհաննեսը, քանզի եթե Հիսուս չարչարանքների և մահվան պատճառով փոքր համարվեց, քան հրեշտակները, ապա որչա՛փ ևս առավել՝ Հովհաննեսը:

Ես կարծում եմ, եթե մեկը Աստվածածնին փոքր համարի Հովհաննեսից, ո՛չ թե ժամանակը [նկատի ունենալով], այլ քանի որ արուն պատվականագույն է, քան հզը, շատ չի նվազեցնի [նրա] մեծությունը, քանզի ինձ թվում է, որ Աստվածածինը մեծ է, քան Հովհաննեսը:

*«Բայց Հովհաննես Մկրտչի օրերից մինչև այժմ Աստծու արքայությունը բռնադատվում է. և հզորներն են հափշտակում այն» (Մատթ. ԺԱ 12):*

Հովհաննեսի օրերը և Քրիստոսի օրերը ժամանակով չեն չափվում, ինչպես Աքազ թագավորի, Սողոմոնի և ուրիշ թագավորների ու մարդկանց օրերը, այլ հոգիների կարգավորությամբ: «Նրա օրոք, Պատմ է, Պարզարություն և մեծ խաղաղություն թող տիրի, մինչև լուսնի վախճանը» (Սաղմ. ՂԱ 7): Արդ, ով նախապես խրատված է Քրիստոսի և Հովհաննեսի խոսքերից և գնում է անհարթ ու քարքարոտ ճանապարհով, այնպիսին բռնությամբ է հափշտակում Աստծու Արքայությունը: Եվ այն պատճառով է «բռնությամբ հափշտակել» ասում, որովհետև բռնադատում է իր մարմինը՝ մի կողմ թողնելով մարմնական ցանկությունները:

*«Օրենքը և մարգարեները մարգարեացան մինչև Հովհաննես: Եվ եթե ուզում եք ընդունել, նա՛ է Եղիան, որ գալու է: Ով լսելու ականջ ունի, թող լսի» (Մատթ. ԺԱ 13-15):*

Ինչպես Մովսեսը և մարգարեները Քրիստոսի վերաբերյալ մարգարեացան և Նրան էին ակնկալում, նույնպես և՛ Հովհաննեսը: Եվ Քրիստոս գալով ժառանգեց Հայրենի ժառանգությունը, ըստ [մարգարեների խոսքի]։ «Ազգերին քեզ կտամ ծառայության և երկրի բոլոր ծագերը՝ քեզ ժառանգություն» (Հմմտ. Սաղմ. Բ 8): Իրապես կատարվեց ամեն մարգարեություն, որ Քրիստոսի գալստյան և գործերի մասին էր:

Իսկ որ ասաց, թե նա է Եղիան, որ գալու է, ոչ թե [այն իմաստով, որ] Հովհաննեսը Եղիա Թեղբացու հոգին ուներ, քանզի եկեղեցին չի ընդունում հոգիների փոխադրումը օտար մարմինների մեջ, այլ միայն այն, թե Սուրբ Հոգին, որ Եղիայի վրա էր, նմանողությամբ [հանգչել էր նաև] Հովհաննեսի վրա: Եվ ինչպես Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ նախապես Եղիան է գալու, նույնպես և Հովհաննեսը նախապես գալով [առաջին գալստյան ժամանակ] ճանապարհ պատրաստեց քարոզության ձայնով: Դրա համար էլ կոչվեց Եղիա:

Տե՛ս, միզուցե խոսքը Մովսեսն է, և Մովսեսին էլ ձայնակից է Եղիան, կամ այլ մեկը մարգարեներից մինչև Հովհաննեսը, որ ցույց տվեց կատարյալ խոսքը, որ մեզ մոտ է, և մեր հոժարությամբ է ընդունելը կամ չընդունելը, որի համար և ասաց. եթե կամենաք ընդունել, նա՛ է Եղիան: Այլև, Մովսեսն ու Եղիան այն լեռան վրա վեհագույն ու փառավորագույն երևացին Քրիստոսի հետ, ուստի և ավելացրեց. «Ով լսելու ականջ ունի, թող լսի»:

*«Ո՞ւմ նմանեցնեմ այս սերնդին. նման է նա մանուկների, որոնք նստած են հրապարակներում» (Մատթ. ԺԱ 16):*

Մանուկները երևացին՝ հիմարությամբ նմանվելով տղայամիտների, և իբրև մանուկներ՝ նախատում են իրենց նմաններին, ովքեր ոչ սգակից են լինում և ոչ էլ խնդակից: Նույնպես և այն սերունդը տրտմակից չեղավ Հովհաննեսին, որ տրտմության մեջ էր նրանց հանցանքների պատճառով և իր մեջ կրում էր նրանց մեռելությունը, և ոչ էլ Քրիստոսի հետ խնդակից, Ով եկավ և վերացրեց ամբողջ աշխարհի մեղքերը:

Այն ժամանակ նա սկսեց պարսավել այն քաղաքները, որոնց մեջ եղան Նրա բազում գորավոր գործերը, բայց նրանք չապաշխարեցին: «Վա՛յ քեզ, Քորազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա, որովհետև, եթե Տյուրոսում և Սիդոնում տեղի ունեցած լինեին այն գորավոր գործերը, որ ձեր մեջ արվեցին» (Մատթ. ԺԱ 20-21) և այլն:

Ինչպես ասվեց, նախատում է այն քաղաքներին, որոնցում բազում հրաչքներ և գորություններ արեց: Եվ նախատինքները խոսքերի վրա ավելանալով հանցանքներն են հիշեցնող նույն, մանավանդ ծանրանալով անշնորհքի և երախտամոռի վրա:

Քորազին այստեղ թարգմանվում է «խմ խորհուրդ», [ըստ] եբրայական անունների թարգմանության: Իսկ Բեթսայիդա, որ Պետրոսյանց և Հովհաննիսյանց գավառն է, թարգմանվում է՝ որսողների տուն, Կափառնայումը՝ մխիթարության վայր, Տյուրոսը, որը Ծուրն է, եբրայերենից թարգմանվում է պղտություն: Սիդոնը, որը Ծայգանն է, թագմանվում է որսողներ, Սուդումը՝ կուրություն կամ ամլություն: Ահա ուրեմն սրանք, ինչպես կարծում եմ, ժամանակին մխիթարված, հորդորված և հափշտակված են եղել աստվածային խոսքերի վարդապետությամբ, որից հետո մեղք են գործել հեթանոս վարդապետների [ազդեցությունով]:

Իսկ այն, որ ասաց, թե [լատաստանի] օրը Սուդոմից և Գոմորից ավելի սոսկալի է լինելու, մեզ ցույց տալու համար ասաց, թե կա տանջանքների զանազանություն և զատորոշում:

«Այն ժամանակ Հիսուս պատասխան տվեց և ասաց. «Գոհություն եմ հայտնում քեզ, Հա՛յր, Տե՛ր երկնքի և երկրի, որ ծածկեցիր այս բանը իմաստուններից ու գիտուններից և հայտնեցիր մանուկներին» (Մատթ ԺԱ 25):

[Նախ] նախատում էր Կափառնայումը և այն քաղաքները, որոնցում ավելորդ եղան Քրիստոսի հրաչքներն ու գորությունները, այնուհետև Հորից գոհանալով, ասում է. «Գոհություն եմ հայտնում Քեզ, Հա՛յր»: Եվ ումանց [այս] շարադրությունը անհարմար է թվում, թե արդյոք ինչո՞ւ հիշված քաղաքների մասին նախատինքներով խոսելուց հետո՝ ավելացրեց. «Գոհություն եմ հայտնում Քեզ, Տե՛ր» և այլն:

Բայց այդպես է թվում ումանց [միայն]: Իսկ ինձ թվում է, թե Տի-րոջ գոհությունը Հորից նրա համար է, որ գաղտնի մնաց աշխարհի իմաս-

տուններից, թե արդյոք ինչո՞ւ հրաչքները եղան այս նշված քաղաքներում և ո՛չ այն մյուսներում, և հայտնվեց մանուկներին, որոնց երանելի Պողոսը Աստծու հիմարներ է անվանում. «Աստծու հիմարն ավելի իմաստուն է, քան մարդկային իմաստությունը» (Ա Կորնթ. Ա 25):

«Ամենայն, ինչ արվեց ինձ՝ իմ Հորից, և ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթե ոչ՝ Հայրը. և ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ՝ Որդին» (Մատթ. ԺԱ 27): Որդուն արվեց ամեն ինչ, քանզի Որդին մասնավեց և արվեց ամենքի համար: Տրվեց Նրան, որպեսզի՝ իբրև Աստծու իմաստություն, խափանի օտար իմաստությունները և որպես Աստծու գորություն՝ հալածի անօրենությունը ինչպես նաև իբրև ճշմարտություն՝ [կորստյան մատնի] ստությունը:

«Ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթե ոչ՝ Հայրը. և ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ՝ Որդին, և նա, ում Որդին ուզենա հայտնել»: Այս չասաց, որ չհավատան Հորը, այլ Որդուն, և [դարձյալ] ոչ ոք չհավատա և չգիտենա Որդուն, բայց [միայն] Հորը, այլ [այն պատճառով, որ] Աստծու բնությունը հույսությունը ոչ ոք չի կարող գիտենալ, քանզի եթե հայելու օրինակով և առակով փոքր ի շատե գիտենք և փոքր ի շատե մարգարեանում ենք, ինչպես ասում է առաքյալը (տե՛ս Ա Կորնթ. ԺԳ 9), ՚ապա ուրեմն ճշմարտությամբ ոչ ոք չգիտե Աստծուն և ոչ էլ Որդուն, եթե [իհարկե] Հայրը չհայտնի մեկին Որդու գիտությունը, ինչպես ասվեց Պետրոսի համար, թե. «Մարմինը և արյունը չէ, որ հայտնեց քեզ, այլ իմ Հայրը, որ երկնքում է» (Մատթ. ԺԶ 17):

«Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ» (Մատթ. ԺԱ 28):

«Բեռներ» ոչ միայն մարմնի ախտերն ու չարչարանքն է անվանում, այլ և հոգու հանցանքներն ու անիրավությունները: Հավատացեք ինձ, - ասում է, - և ճանաչեք Հորս՝ իմ հայտնությամբ: Եվ ես ձեզ կհանգստացնեմ, և կազատեմ բոլոր ախտերից ու չարչարանքներից:

«Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթ. ԺԱ 30):



Ովքեր անօրենության լուծը գցեն ու մտնեն Քրիստոսի ծառայության լծի տակ, սրանց [Համար] թեպետև որոշ ժամանակ բեռը ծանր կ'իջա, և լուծը՝ խստագույն, ասկայն այն բարիքների հույսը. «որ աչքը չտեսավ, և ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ» (Ա Կորնթ. Բ 9), և այդ պատրաստված բարիքներից օգտվելու ակնկալությունը, այս լծի ու բեռների ծանրությունն ու խստությունը ավելի քաղցր կ'դարձնի՝ քան ամենաքաղցրները, և ավելի թեթև՝ քան ամենաթեթևները: Ինչպես [երբ մեկը] գոտեմարտի մտնի Հաստատապես [Հաղթության պսակի] ակնկալությամբ, այսպիսի [մեկի Համար] Հակառակորդի գործությունը՝ անգործություն և տկարություն է համարվում:

*«Կամ՝ ինչպե՞ս կարող է մեկը մտնել Հզոր մի մարդու տուն և Համիչ տակել նրա գույքերը, եթե նախ չկապի Հզորին» (Մատթ. ԺԲ 29):*

«Հզոր» է անվանում Աստծու Հակառակորդներին, որոնց Բեղգեբուզ և դեերի իշխան են կոչում, և նրա գործությունը, իսկ «տունը» նրա պաշտոնյաներն են, որոնց մեջ բնակվում են, ինչպես Քրիստոսի տուն և տաճար են կոչվում նրանք, որոնցում բնակվում է Քրիստոս, [ըստ խոսքի]. «Պիտի բնակվեմ նրանց մեջ ու պիտի ընթանամ նրանց միջով» (Բ Կորնթ. Զ 16): Նաև երանելի Պողոսն է ասում. «Նրա տունը մենք իսկ ենք» (Եբբ. Գ 6): Եթե [ես], շատում է, - նախ չկապելի Բեղգեբուզին, չէի կարող նրա գույքը և տունը Համիչ տակել և ավար առնել:

*«Ով ինձ Հետ չէ՛ իմ դեմ է, և ով ինձ Հետ չի Հավաքում՝ ցրում է» (Մատթ. ԺԲ 30):*

Ով Հավաքում է խոսքով, ճշմարտությունամբ, գործությամբ և լույսով, ինչպես՝ Քրիստոս, այնպիսին չի կորցնում: Իսկ ով առանց խոսքի, լույսի և իմաստությունից է Հավաքում, այնպիսին, իրոք, ցրում է:

*«Ամեն մեղք և Հայհոյանք կներվի մարդկանց, բայց Հոգու դեմ Հայհոյանքը չպիտի ներվի: Եվ ով որ մարդու Որդու դեմ խոսք ասի, նրան պիտի ներվի, բայց ով ասի Սուրբ Հոգու դեմ, նրան չպիտի ներվի ո՛չ այս աշխարհում և ո՛չ էլ Հանդերձյալում» (Մատթ. ԺԲ 31-32):*

Քանի որ Աստծու Հոգով եմ հանում դեերին և ոչ դեերի իշխանով, իսկ նրանք Սուրբ Հոգին Հայհոյեցին և բեղգեբուզ կոչեցին, ապա

նրանց չպիտի ներվի այդ Հայհոյությունը: Եվ եթե ինձ որպես մարդու Որդու [Հայհոյեն], կներվեն, եթե գան ապաշխարություն, ինչպես շատերը և ի վերջո՝ առաքյալների գլուխը՝ [Պետրոսը]: Իսկ ով Աստծու Հոգին դեերի իշխան կկոչի, նրան ներում չի լինի ո՛չ այս Հավիտենություն մեջ, ինչպես ասում է, և ո՛չ էլ Հանդերձյալում:

*«Կամ՝ ծառը բարի արեք, և նրա պտուղն էլ բարի կլինի, կամ՝ ծառը չար արեք և նրա պտուղն էլ չար կլինի» (Մատթ. ԺԲ 33):*

Բարի ծառ անվանում է Աստծու Հոգին և բարի պտուղ՝ Նրա վարդապետությունը. չար ծառ է անվանում սատանային և չար պտուղ՝ սատանայի վարդապետությունը: Ով ըստ առաքինությունից է ապրում, ու գործում, և ճշմարտապես վարդապետում, այնպիսին Սուրբ Հոգուց Հորջորջված բարի ծառ է անվանվում, նմանապես և՛ նրա պտուղը: Իսկ ով Հակառակ է սովորել և մարդկանց ստությունամբ է սովորեցնում, այնպիսին չար ծառ է անվանում և դառը պտուղ:

Այս այսպես ասելով՝ ո՛չ այլ ինչ է ասում, եթե [ոչ այս], կամ՝ Սուրբ Հոգունը եղեք և պտղաբերեցեք բարի պտղով, և կամ՝ Հակառակորդինը: Եվ կեղծավորությունամբ մի՛ ուսուցանեք, որովհետև մեղավորին և կեղծավորին Աստված ասում է. «Դու ինչո՞ւ ես պատմում իմ արդարությունը և իմ ուխտը առնում քո բերանը» (Սաղմ. ԽԹ 16):

*«Այն ժամանակ օրենագետներից և փարիսեցիներից ոմանք նրան պատասխան տվեցին ու ասացին. «Վարդապետ, քեզ ուրիշ մի նշան ենք կամենում տեսնել [երկնքից]»: Նա պատասխանեց և ասաց. «Չար և շնացող ազգը նշան է փնտրում» (Մատթ. ԺԲ 38-39) և այլն:*

Քանի որ չէին կամենում ուսանել, այլ՝ նենգությունամբ փորձել, դրա համար փարիսեցիներին անվանեց «չար և շնացող ազգ»: Չար ազգ [անվանեց], քանի որ չար վիշապի խորհրդով մոլորվեցին, և «շնացող» քանզի թողնելով իրենց ամուսնուն՝ ճշմարտության Խոսքը, այսինքն՝ Քրիստոսին, օրինազանց եղան: Աստվածային գրքերում «նշան» [ասելով] Հասկացվում է, թե ինչ պետք է լինի ապագայում, ինչպես և պատմվում է Հին Կտակարանում Հովհաննեսի երեք օր ձկան փորում մնալը, որը խորհրդանշում է Քրիստոսի երեք օր երկրի սրտում մնալը:

Նշան կա նաև Նոր Կտակարանում, որ ակնարկում է ապագայում

կատարվելիքները, ինչպես ասում է երանելի Պողոսը. «Մենք ենք լիակական թլպատությունը» (Փլլիպ. Գ 3), որ հարության և աստվածապաշտության խորհրդանիշն է, ինչպես Աբրահամի և նրա որդիների թլպատությունը:

*«Նինվեի մարդիկ դատաստանի ժամանակ այս ազգի դեմ պիտի դուրս գան և պիտի դատապարտեն նրան» (Մատթ. ԺԲ 41) և այլ:*

Աստվածաշունչը բազում օրինակներով ցույց է տալիս մեռյալների հարությունը, առավել ևս տերունական ձայնով: Եվ նրանք իրոք կդատապարտվեն, որովհետև [նինվեացիք] լսելով Աստծու ծառայի՝ Հովնանի ձայնը, ապաշխարեցին, իսկ այս ազգը լսելով Աստծու Որդու ձայնը, չապաշխարեց:

Նույնը պետք է իմանալ նաև հարավի թագուհու գալու և Սողոմոնի իմաստությունը լսելու վերաբերյալ (Մատթ. ԺԲ 42):

*«Սակայն երբ պիղծ հողին դուրս է ելնում մարդուց, շրջում է անջրդի վայրերում՝ հանգիստ գտնելու, երբ չի գտնում, այն ժամանակ ասում է. «Դառնամ իմ տունը, որտեղից ելա»: Եվ գալով այն գտնում է դատարկ, մաքրված ու կարգի բերված» (Մատթ. ԺԲ 43-44):*

«Անջրդի վայրերը» մարդկանց հողիներն է, որոնցում աստանան Հանգիստ չի գտնում, իսկ «մաքրված ու կարգի բերված տունը»՝ մեղավոր հողիները, որոնցում հանգատանում և բնակվում են աստանան և նրա պաշտոնյաները: Այս տեսակը նմանեցնում է այն փարիսեցի մարդուն, ով իր հողին զարդարում է որպես տաճար և բնակավայր դեքերի համար:

*«Մինչդեռ խոսում էր ամբոխի հետ, ահա Նրա մայրն ու եղբայրները կանգնած էին դրսում և ուզում էին խոսել Նրա հետ» (Մատթ. ԺԲ 46):*

Քրիստոսի մայրը հայտնապես կույս Մարիամն է, և Նրա ոչ հարազատ եղբայրները՝ Հովսեփի որդիները: Քանի որ Նա ճշմարտապես Հովսեփի որդին չէ, թեպետև ումանց, ովքեր չգիտակցեցին Կույսի ծննդյան խորհուրդը [այդպես] թվաց:

*«Այդ օրը Հիսուս, տնից դուրս գալով, նստեց ծովեզերքին: Եվ նրա մոտ շատ ժողովուրդ հավաքվեց» (Մատթ. ԺԳ 1-2):*

Բազում մարդապիրության պատճառով դուրս էր գալիս տնից ոչ միայն տեսանելի կերպով, այլև ինչպես ինձ է թվում, անտեսանելի: Եվ անտեսելով իր բնության հոգևոր և երկնային լինելը՝ նստում է ծովեզերքին՝ այս ծով [անման] պեծուփ կյանքում, որպեսզի հանդարտեցնի և խաղաղեցնի ծովը՝ մարդկային պեկոծ կյանքը, նաև նույն մարդապիրության պատճառով նաև էր մտնում, այսինքն՝ մեր մարդկային մահկանացու և ապականացու մարմինների մեջ, որպեսզի ազատի մահվանից ու ապականությունից և դարձնի անմահ և անապական:

*«Եվ նրանց հետ առականերով էր խոսում» (Մատթ. ԺԳ 3):*

Նրանց հետ, ովքեր կանգնած էին ծովեզերքին, առականերով էր խոսում, որովհետև դեռևս անկարող էին հայտնապես լսել Քրիստոսի խոսքը, իսկ աշակերտներին ասաց իբրև կարողների:

«Ով ունի, նրան պիտի տրվի և պիտի ավելացվի, իսկ ով չունի, նրանից պիտի վերցվի ունեցածն էլ» (Մատթ. ԺԳ 12):

Գտանք Որդիներս՝ Մատթեոսի ավետարանի մեկնություն տասներկուերորդ գլխում, թե ամենայն տունկ, որ տնկեց Աստծու Միածին Որդու Հայրը, այն տնկիում Միածնի վարդապետությունը պիտի աճի: Եվ ոչ ոք թող չկարծի թե Պողոսի տնկածը և Ապոլոսի աճեցրածը՝ Աստծու տնկիներից դուրս են (տե՛ս Ա Կորնթ. Գ 6), քանզի ամեն [տունկ], որ Աստծու կամքով է տնկված, Աստծու տունկ է կոչվում: Եվ ավելանում է այդպիսի տնկիում [Միածնի վարդապետությունը]: Ով ունի այդպիսի տունկ, այնպիսին պիտի ավելացվի: Բայց այն որը չտնկեց երկնավոր Հայրը մարդկանց հողիներում, այլ հակառակորդները, և այն, որ ունեն նրանից պիտի վերցվի:

Այդ այդպես մեկնեց Որդիներսը, և ես չեմ ընդդիմանում, բայց ըստ այժմեական մեկնության, կարծում եմ, թե ով ունի բարի սերմը՝ բարի հողին, որ [բարի] հող անվանվեց, նրան պիտի տրվի և ավելացվի: Իսկ որն ընկավ ճանապարհի եզրին և ժայռերի վրա, այն է, որ ընդունեց Քրիստոսի վարդապետությունը, բայց չարը գալով՝ վերցրեց

այն, որովհետև հաստատված չէր սրտի մեջ. նրանից վերցվեց [նաև] այն ամենը, ինչ ուներ:

*«Երանի՛ ձեր աչքերին, որ տեսնում են, և ականջներին, որ լսում են: Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ շատ մարդարենք և արդարներ ցանկացան տեսնել, ինչ տեսնում եք, բայց չտեսան, և լսել, ինչ լսում եք, բայց չլսեցին» (Մատթ. ԺԳ 16-17):*

Կարծում եմ ամենքին հայտնի է, որ «աչքեր» և «ականջներ» ասելով՝ նկատի չունեցավ տեսանելիները: Քանի որ տեսանելի աչքերով Քրիստոսին տեսան նաև փարիսեցիները և հրեաների ամբողջը: [Նրանք] նաև Քրիստոսի զգալի ու նյութական ձայնը լսեցին ամբողջ մերձակայքում: Ապա ուրեմն երանի է [տալիս] առաքյալների աչքերին ու ականջներին, որ այնպես տեսան Քրիստոսին, ինչպես հարկ էր Աստծու Որդուն տեսնել, և այնպես լսեցին Նրան, ինչպես հարկ ու պատշաճ էր Աստծու Որդուն լսել: Ոմանք կարծեցին, թե հարություն և դատաստանի մասին խոսեց նրանց հետ, և դրա համար երանելի դարձան: Բայց ինձ թվում է՝ առաջինն ավելի պատշաճ է:

Ասում է, «շատ մարդարենք և արդարներ», բայց ոչ՝ ամենքը: Քանի որ մարդարենքից և արդարներից ոմանք, հոգևոր աչքերով տեսան Քրիստոսի զգալիության օրը: Ինչպես Ինքն իսկ՝ Քրիստոս ասաց. «Աբրահամը տեսավ թե՛ մարդանալը և թե՛ դժոխք իջնելը և թե՛ կամակոր վիշապից կապվածներին արձակելը և ուրախ եղավ այս տեսնելու համար» (Հմմտ. Եբր. ԺԱ 13, Հովհ. Ը 56):

*«Լսեցե՛ք դուք սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 18):*

Իսկ այս առակը Ինքն իսկ մեկնում է, որի պատճառով պետք չէ երկարաբանել:

*«Նա ուրիշ առակ էլ նրանց առաջ դրեց՝ ասելով. «Երկնքի արքայությունը նման է մի մարդու, որ իր արտի մեջ բարի սերմ սերմանեց: Իսկ երբ մարդիկ քնի մեջ էին, նրա թշնամին եկավ և ցորենի մեջ որոմ սերմանելով՝ գնաց» (Մատթ. ԺԳ 24-25):*

Ամենայն բարու և մարդկային արդարության «Սերմանողը» Աստված է: «Անդատանը» աշխարհն է, իսկ «քնած մարդիկ» նրանք, ով-

քեր ծուլանում են և անտեսում Աստծու հրամանը: «Թշնամին» Աստծու հակառակորդն է՝ բանարկուն: «Ցորենը» արդարության պտուղն է, «որոմը»՝ անիրավությունը: Իսկ որոմի թողնելը և քաղհան չանելը մինչև հունձքը, ինձ թվում է, երկու բան է նշանակում:

[Առաջին]՝ կամ որոմը քաղհան անելու ժամանակ հնձող հրեշտակների անգիտության պատճառով այլ գորություններին, նաև ցորենին [վնասելը]:

Իսկ անգիտության [մասին և այն, որ կարող են] անգիտանալ, հայտնի է դառնում Եզեկիել մարգարեի խոսքից. «Որոնց վրա, ռասում է, -նշան կա, չմոտենա՛ք» (Եզեկիել. Թ 6) և Ելից գրքից, երբ եբրայեցիներին հրաման է տրվում [դուան] սեմին արյունով նշան անել, որ պեսզի սատակիչը այնտեղ չմտնի (տե՛ս Ելք. ԺԲ 23):

[Երկրորդ]՝ կամ նրա համար ասվեց, թե թող մնա մինչև հունձքը կամ էլ [մինչև] որոմի վախճանը, որ եթե չփոխվի և չդառնա ցորեն, ապա այս աշխարհի վախճանին որոմը կայրի անշեջ հրով, և ցորենը կհավաքի Իր շտեմարաններում (Հմմտ. Մատթ. ԺԳ 40):

*«Նրանց այլ առակ էլ ասաց. «Երկնքի արքայությունը նման է մանանեխի հատիկի, որ փոքրագույն է, քան բոլոր սերմերը» (Մատթ. ԺԳ 31) և այլն:*

Մանանեխի հատիկը, ինչպես ինձ է թվում, -չի նմանեցնում Իր վարդապետության բեռի քաղցրության ու թեթևության հետ: [Մանանեխը] թեպետև որոշ ժամանակ խտազույն և ծանրագույն է երևում, բայց երբ մեկը հասունանում, պտղաբերում և մեծ ծառ է դառնում, քան ամեն տեսակ բանջարեղենը, որ օգտագործում է մարդ հիվանդ [ժամանակ], ինչպես և ասում է. «Ով տկար է, բանջարեղեն է ուտում» (Հռոմ. ԺԳ 2) պինդ կերակուրը չմարսելու պատճառով, ապա թուչունները՝ մարդկանց հոգիները թուչում են այդպիսի ծառի վրա:

Եվ կամ «մանանեխի հատիկ» Իրեն է անվանում, քանի որ փոքրացավ և աղքատացավ՝ առնելով ծառայի կերպարանք, իսկ երբ փառավորվեց և բարձրացավ, բոլորին դեպի Իրեն ձգեց, ժառանգեց ազգերին և իշխեց երկրի բոլոր ծագերին: Մեծ Ծառ եղավ, որի վրա երկնքի բոլոր թուչունները հանգստացան, այսինքն՝ մարգարեների, առաքյալների և բոլոր արդարների հոգիները:

[Կամ էլ սա] Քրիստոսի խոսքն է Աստծու արքայության մասին, [որ] նախապես փոքր և անարգ էր երևում, բայց [արագ] աճեց, քան ամեն խոսք, որ սերմանված է մարդկանց մեջ, Հույժ մեծացավ և այնքան զորացավ, որ աստվածային և երկնավոր գորությունները հանդատանում էին նրա ճյուղերի վրա: Նրա «ոստերը», պետք է կարծել [նրանք են], ովքեր մեծացան Նրա խոսքով՝ [այսինքն] առաքյալներն ու առաքյալներին նմանվողները:

*«Այլ առակ խոսեց նրանց Հես. «Երկնքի արքայությունը նման է թթխմորի, որ մի կին առնելով, դրեց երեք չափ ալյուրի մեջ, մինչև որ ամբողջը խմորվեց» (Մատթ. ԺԳ 33):*

«Թթխմորը» Քրիստոսի վարդապետությունն է, «կինը»՝ մարդու Հոգին: «Երեք չափ ալյուրը» Հոգու երեք մասերն են՝ բանական, սրտմտական և ցանկական, և կամ ժամանակի երեք մասերը՝ անցյալը, ներկան և ապագան: Ով այս երեք ժամանակներում իր մեջ կպահեն Քրիստոսի վարդապետությունը, այնպիսին իրեն ամբողջովին կլուսավորի:

*«Այն ժամանակ թողելով ամբոխին՝ տուն եկավ» (Մատթ. ԺԳ 36):*  
Հիսուսի տունը բազմացած գիտությունն է, որը Նրա մասին ասված է ավետարաններում, թե ինչ խոսեց և ինչ գործեց:

*«Այն, որ սերմանում է բարի սերմը, մարդու Որդին է, իսկ արտը այս աշխարհն է. բարի սերմը՝ արքայության որդիները» (Մատթ. ԺԳ 37-38):*

Ովքեր ընդունեցին բարի սերմը՝ Քրիստոսի վարդապետությունը, եղան բարի սերմեր՝ Աստծու արքայության որդիներ: Իսկ ովքեր ընդունեցին չար վարդապետությունը և մի կողմ թողեցին Քրիստոսի սերմը, սրանք եղան չարի որդիներ, գեհենի կրակի [արժանի] որոմ:

Արքայությունը Քրիստոսի Եկեղեցին է և Աստվածային խոսքերը, ուստի գայթակղությունները, այսինքն՝ այլ աղանդները, որոնք անօրենություն են գործում, կհավաքվեն և կզցվեն բոցավառ Հնոցի մեջ:

*«Այնտեղ կլինի լաց և ատամների կրճատում» (Մատթ. ԺԳ 42):*  
Հոգին իր կերակրի՝ բարի գործերի ու ճշմարիտ գիտություն ման-

րողն ու ծամողն է: Ասվում է, որ սա Հանդիմանություն ժամանակ ճանաչվելով որպես բարի գործերի և ճշմարիտ գիտություն արհամարհող, նույն ճշմարիտ գիտությունից Հանդիմանվելով՝ կրճատացնում է իր ատամները և ինքն իրեն ամբաստանելով՝ տանջվում:

*«Այն ժամանակ արդարները Աստծու առջ կծագեն, ինչպես արեգակը» (Մատթ. ԺԳ 43):*

Անբավ պայծառություն ու համարձակություն է խոստանում այսօտեղի քաջությունների և նեղությունների փոխարեն, որը վայելելու են Հանդերձյալ Հավիտենություն մեջ՝ Իրենց Հոր թագավորությունում:

*«Դարձյալ՝ Աստծու թագավորությունը նման է արտի մեջ թաքնված գանձի» (Մատթ. ԺԳ 44):*

«Արտը» աստվածային մարդարեական գիրն է, որ բացատրում է բառերով [չդարչված] տնկիների գանազանությունը, իսկ «գանձը»՝ մտքից կոծկված բառերում [առկա] գորությունն ու իմաստությունը:

Նաև այլ կերպ ասած. «արտը» Քրիստոսն է, Ում մեջ թաքնված են գիտություն և իմաստության բոլոր գանձերը, իսկ «գանձերը» այն գաղտնիքն ու ծածուկն են, [որոնք] Նա չի զցում շների և խոզերի առջև, [այսինքն] մարգարիտը և սրբությունը:

*«Դարձյալ՝ երկնքի արքայությունը նման է մի վաճառականի, որ գեղեցիկ մարգարիտներ է որոնում» (Մատթ. ԺԳ 45) և այլն:*

Կան գեղեցիկ մարգարիտների բազում տեսակներ. հնդկական ու պարսկական, իսկ արևմտյան ծովում՝ բրիտանական: Լինում են և օվկիանոսներում, ինչպես նաև Ակառնական ծովում և Բոսֆորում:

Արդ, այսքանը տեսանելի մարգարիտների մասին: Իսկ նա, ով որոնում է գեղեցիկը՝ Հոգևոր մարգարիտը, և չի որոնում այլափառների և աղանդավորների աղջամղջային և սևաթույր խոսքեր, այլ ճշմարիտ օրենքներն ու գեղեցիկ ճրագները, Աստծու խորհուրդների հազարապետներին՝ առաքյալներին և մարգարեներին, և նրանց մեջ ամենից Անգլինին՝ Քրիստոսին, և ով գտնում է այս մարգարիտը, իր ամբողջ ունեցվածքը վաճառում է, որպեսզի [այն] գնի և կորցնում է փոքրագույնը, որպեսզի վեհագույն գիտությունն ընդունի:

«Դարձյալ՝ երկնքի արքայությունը նման է ծովը նետված ուռկանին, որ ամեն տեսակ բան է հավաքել» (Մատթ. ԺԳ 47):

Ալեկոծյալ ծովը մարդկային կյանքն է: Աներևույթ ուռկանով բոլոր ազգերից հավաքելը՝ կամ՝ զանազան ու բազմադեմի մարդկանց հոգարությունն է, կամ՝ էլ հեթանոսների կոչումը: Ուռկան գցողները Տերն ու հրեշտակներն են, որ սպասավորում են Նրան: Եվ ուռկանը դուրս չի գա մինչև չլցվի հեթանոսներով՝ [հեթանոսությունը վերջ չգտնի], այսինքն՝ Քրիստոսի վարդապետությունը չի դադարի մինչև աշխարհի վախճանը:

«Եվ Հիսուս նրանց ասաց. «Այս բոլորը իմացա՞ք» (Մատթ. ԺԳ 51):

Հանդիմանելով չէ, որ հարցնում էր, քանզի ճշմարտապես գիտեր, թե իմացան կամ չիմացան, այլ հաստատապես. [հարկավ] այս բոլորը ո՛չ ամբողջութամբ իմացաք:

«Եվ նրանց ասում էր. «Դրա համար երկնքի արքայությանն աշակերտած ամեն օրենագետ նման է տանուտեր մարդու, որ իր գանձից հանում է նորը և հինը» (Մատթ. ԺԳ 52):

Երկնքի արքայությանը աշակերտած է կոչում [նրան], ով Հրեաստանից է ստանում Քրիստոսի ուսմունքը, իսկ ավելի [խորն իմաստով] ասած՝ [աշակերտ կոչում է նրան], ով գրագիտությունից հասնում է հոգևորականի աստիճանի: Արդ նա, ով գորացել է անառտ գիտությամբ, լինում է երկնային բազմության, արքայության տանտեր, և ո՛չ միայն ծառայությունից, այլև աղքատությունից ազատվելով՝ լինում է ինչպես Քրիստոս: Իսկ այն, որ այս [տանտերի] նման մի դպիր իր գանձերից հանում է Հին ու Նոր Կտակարանները՝ ցույց է տալիս, թե ոչ միայն պետք չէ, այլև անհնարին է բաժանել Նորը Հին Կտակարանից:

Թ

«Եվ երբ Հիսուս այս առակները վերջացրեց, այնտեղից մեկնեց: Եվ գնալով իր գավառը՝ նրանց ուսուցանում էր իրենց ժողովարանում» (Մատթ. ԺԳ 53-54):

Հարց է ծագում գավառի անվան վերաբերյալ. թե ո՞րն ասաց, Նազարեթը, թե Բեթղեհեմը: Եվ կարծում եմ, որ ավետարանիչը խորհրդապես լուեց,

քանի որ ամբողջ Հրեաստանը, ուր անարգվեց, անվանվում է Նրա գավառ:

«Եվ Նրանով գայթակղվում էին» (Մատթ. ԺԳ 57):

Արդյոք ինչո՞ւ էին «գայթակղվում». իբրև թե՛ Նա օտար՝ դիվա-կան գորությամբ է ուսուցանում և ոչ՝ Աստծու Հոգով: Որովհետև եթե Աստծու Հոգով կարծեին, Հիսուս չէր կրի անպատվություն և չէր ասի, թե անարգված մարգարե չկա, բայց միայն՝ իր գավառում, իր տանը (տե՛ս Մատթ. ԺԳ 57):

Ուստի եթե տեսնում ես Հիսուսին տակավին հրեաներից անարգված, իսկ հեթանոսների մեջ քարոզված և պատվի արժանացած, կիմանաս, որ իր գավառում պատիվ չունի, այլ օտարների մեջ:

Այդ հնարավոր է իմանալ նաև այլ մարգարեների օրինակով, ինչպես անարգվեցին Երեմիան՝ Անաթովթում, Եղիան՝ Հենթեգբոնում, Եղիսեն՝ Հենեբաղ մաուդաքում, Սամվելը՝ Հենեբամթենում, Մովսեսը՝ իր ժողովրդից, քանզի եթե հավատալին Մովսեսին, կհավատալին և Քրիստոսին: Թվում է, թե այդ պատճառով Պողոսը Տարսոնում չքարոզեց, և այլ առաքյալները նույնպես, թողնելով իրենց Հրեաստան գավառը, ելան հեթանոսների մեջ:

«Այն ժամանակ Հերովդես չորրորդապետը լսեց Հիսուսի համբավը և ասաց. «Նա՛ է Հովհաննես Սկրտիչը. մեռելներից հարություն է առել և դրա համար նրա միջոցով գորավոր գործեր են լինում» (Մատթ. ԺԳ 1-2):

Հավատացյալների մեջ [առկա են] գորություններ, [համաձայն հետևյալ խոսքի]՝ «Որովհետև ով ունի, նրան պիտի տրվի և պիտի ավելացվի» (Մատթ. ԺԳ 12)՝ հաղթելու համար անհավատության գորությունը: Հետևաբար, գորություններ լինում են նաև անհավատների մեջ, թեպետև ոչ շատ: Եվ դու տես, որ ընդդիմադիր գորությունները նախ Հերովդեսին մղեցին Հովհաննեսի դեմ, ճանաչելով նրան որպես Աստծու Որդու առջևից ընթացող, և ապա Հուդային և քահանայապետերին:

«Քանզի Հերովդեսը ձերբակալել էր Հովհաննեսին, նրան կապել և բանտի մեջ էր դրել իր եղբոր՝ Փիլիպպոսի կնոջ՝ Հերովդիսայի պատճառով» (Մատթ. ԺԳ 3):

Դեռևս մեռած չէր Փիլիպոսը, այլ կենդանի էր, և իր եղբոր

[մեքենայութուններով] հեռացվել էր չորրորդապետությունից և զրկվել կնոջից: Այդ իսկ պատճառով այդպիսի ամուսնությունը անօրեն էր:

*«Եվ թագավորը տիրեց, բայց երդման և սեղանակիցների պատճառով հրամայեց նրան տալ այդ» (Մատթ. ԺԴ 9):*

Այժմ պարտ էր երդմնագանց լինել, քան թե պահել երդումը:

*«Երբ Հիսուս այդ լսեց, այնտեղից նավակով առանձին գնաց մի ամայի տեղ» (Մատթ. ԺԴ 13):*

Մարգարեին սպանելուց հետո Բանը գնում է հեթանոսների մեջ, ովքեր գնում էին նրա ետևից, որոնց գթալով՝ բժշկեց նրանց հիվանդներին: Իրոք, նախ բժշկեց ամբոխի հիվանդներին ապա նոր կերակրեց հասցով ու ձկով, որպեսզի չթուլանան ճանապարհին:

*«Եվ Հիսուս այդտեղից ելնելով՝ գնաց Տյուրոսի և Սիդոնի կողմերը: Եվ ահա, այդ շրջաններից եկած քանանացի մի կին աղաղակում էր» (Մատթ. ԺԵ 21-22):*

Հիսուս գալիս էր ոչ թե Տյուրոսի սահմանները, այլ մոտենում է Տյուրոսին և Սիդոնին, իսկ քանանացին ելնում էր այդ սահմաններից, որովհետև եթե մնացած լիներ սահմաններում, չէր կարող աղաղակել առ Տեր:

*«Այլ տեղ չեմ ուղարկված, եթե ոչ Իսրայելի տան կորուսյալ ոչխարների մոտ» (Մատթ. ԺԵ 24):*

Կհարցեն՝ ո՞ր Իսրայելի ոչխարներն էին մոլորվածները, արդյոք ըստ մարմնի՞ Իսրայելի, և ինչո՞ւ է սիյուս հեթանոսների տարածվեց փրկությունը: Ապա ուրեմն Աստծուն տեսնող Իսրայելի մոլորյալ հոգիների մոտ [ուղարկեց]:

*«Եվ Հիսուս, իր մոտ կանչելով աշակերտներին՝ ասաց. «Խղճում եմ այս ժողովրդին, որովհետև ահա երեք օր է, որ ինձ մոտ են և բան չունեն, որ ուտեն» (Մատթ. ԺԵ 32):*

Նախկինում աշակերտները նրան աղաչեցին, հինգ հազարին [կերակրելու] համար, իսկ այժմ առանց որևէ մեկի խնդրանքի, իր [նախաձեռնությամբ] չորս հազարին կերակրեց: Նրանք, [հացի առաջին բազմացման

ժամանակ] մի օր մնալով, երեկոյան կերակրվեցին, իսկ սրանք վկայվեցին՝ երեք օր մնալով և [հետո] կերակրվելով, որպեսզի չբաժանվեն խնամողից:

Այնտեղ աշակերտներն ասացին. «Հինգ հաց և երկու ձուկ ունենք», իսկ այստեղ պատասխանելով ասացին. «Յոթ հաց ունենք և քիչ ձուկ»: Այնտեղ խոտի վրա էին նստած, իսկ այստեղ՝ գետնի:

*«Փարիսեցիներն ու սադուկեցիները մոտեցան ու փորձելով՝ նրանից ուզում էին, որ ցույց տա իրենց երկնային մի նշան» (Մատթ. ԺԶ 1):*

Փարիսեցիներն ու սադուկեցիներն զանազանվում են աղանդով և հակառակ են միմյանց, [սակայն] այժմ Քրիստոսին փորձելու համար միավորվեցին: Բազում անգամ միաբանվեցին նաև հեթանոս իմաստունները, որոնք նախապես բաժանվել էին միմյանցից հակառակության պատճառով: [Սրանք] միաբանվում են նաև ոմանց փորձելու և պարզելու համար: Նույնպես և միմյանց հակառակ գործությունները միաբանվում են՝ «Ընդդեմ Տիրոջ և Նրա Օծյալի» (տես Սղմ. Բ 2):

*«Եվ նրանց թողելով՝ գնաց» (Մատթ. ԺԶ 4):*

Փորձողներին չար ու շնացող ասելով, թողնելով գնաց, ինչպես փեսան [կհնար] թողնելով պոռնկացածին, [երբեմնի] հավատարիմ քաղաքը՝ Սիոնը՝ հրեաների ժողովարանը:

*«Եվ Նրա աշակերտները, գնալով ծովի այն կողմը, մոռացան հաց վերցնել» (Մատթ. ԺԶ 5):*

Քրիստոսի աշակերտները [ծովի] այն կողմն անցան՝ մարմնավորներից վերածվելով հոգևորների:

*«Արդ, ինչպե՞ս չէք իմանում, թե հացի համար չէ, որ ձեզ ասացի՝ զգուշ լինել փարիսեցիների և սադուկեցիների խմորից» (Մատթ. ԺԶ 11):*

Եթե հացը վարդապետություն է, ապա վարդապետությունը կերակուր է, և կա, որ ապրեցնում է, կա, որ սպանում է հոգին: Այստեղ հայտնի եղավ ասվածը. «Երկնքից հաց տվեց նրանց, մարդիկ հրեշտակների հացը կերան» (Սղմ. ՀԷ 25):

*«Երանի՛ է քեզ, Սիմոն, Հովնանի՛ որդի, որովհետև մարմինը և*

արյունը չէ, որ հայտնեց քեզ, այլ իմ Հայրը, որ երկնքում է» (Մատթ. ԺԶ 17):

«Հովնանի որդի»՝ եբրայերեն «Բարիովնա», թարգմանվում է ազավնու որդի: «Մարմինը և արյունը չէ, որ հայտնեց քեզ», [այլ] երկնային վարդապետությունը: «Եվ մարմինը չէ, որ հայտնեց քեզ», քանզի և անհնարին իսկ է: Այլ նրա, ում հոգում Հայրը կձագեցնի Հոգու լույսը, նա կարող է տեսնել Աստծու Որդուն:

«Դժոխքի դռները այն չպիտի հաղթահարեն» (Մատթ. ԺԶ 18):

Ինչպես Քրիստոս իրեն կոչում է արքայություն Դուռ, քանի որ Նրա՝ նով են մտնում արքայություն, նույնպես աստանան և նրա հրեշտակները դժոխքի դռներ կոչվեցին, քանզի նրանցով են մտնում արտաքին խավար:

«Քեզ պիտի տամ երկնքի արքայություն բանալիները» (Մատթ. ԺԶ 19):

Երկնքի արքայությունը Քրիստոս է, և Նրա առաքելությունն ու վարդապետությունը սուրբ դռներն են: Ըստ սրանց նմանություն՝ իմասցի՛ր և իմանալի բանալիները [վերաբերյալ]:

«Այն ժամանակ խափով պատվիրեց աշակերտներին, որ ոչ ոքի չասեն, թե ինքն է Քրիստոսը» (Մատթ. ԺԶ 20):

Քանի որ դեռևս բոլոր գործերը չէին կատարված՝ չարչարվելը, խաչվելը և մեռելներից հարություն առնելը, որոնք Քրիստոս պետք է իրագործեր: Դրա համար պատվիրելով ասաց՝ ոչ ոքի չասել, թե Նա է Քրիստոս, որպեսզի շատերը չգայթակղվեն Նրանով, թե ինչպես է Նա Քրիստոսը, որ չկատարեց բոլոր գործերը:

«Եվ Նա, դառնալով Պետրոսին, ասաց. «Ետե՛ս գնա, աստանա՛, դու գայթակղություն ես ինձ համար, որովհետև ոչ թե Աստծունն ես խորհում, այլ մարդկանցը» (Մատթ. ԺԶ 23):

Այս արժանի է ասել ամեն մի մարդու, ով հեռանում է Աստվածային հավատից և խորհում է Մարկիոնի կամ այլ հերձվածողի [նման], ովքեր ուսուցանում են մարդկայինը՝ թողնելով աստվածայինը:

Արդ այժմ Պետրոսի [Հակառակ] կամքի համար նրան ասաց՝ «ետե՛ս գնա», իսկ հակառակ գիտելիքի համար ասաց՝ «աստանա», որ է հակա-

ռակորդ, քանզի Պետրոս կարծում էր, թե Հայրը չի լինի Քրիստոսի քա՜վիչը, եթե [Քրիստոս] չարչարվի:

«Այն ժամանակ Հիսուս իր աշակերտներին ասաց. «Եթե մեկը կամենում է հետևել ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա իմ ետևից» (Մատթ. ԺԶ 24):

Ով մերկանում է հին մարդուց, և ինքն իրեն ուրանալով ասում. «Կենդանի եմ [այսուհետև, բայց] ոչ [թե] ես, այլ իմ մեջ ապրում է Քրիստոս» (Գաղ. Բ 20), [այսպիսին] վերցնում է իր խաչը և գնում Քրիստոսի ետևից՝ [համաձայն հետևյալ խոսքի]. «Աշխարհը խաչված է ինձ համար, ես էլ՝ աշխարհի» (Գաղ. Զ 14):

«Ի՞նչ օգուտ կունենա մարդ, եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի» (Մատթ. ԺԶ 26):

[Նա՛] է շահում է ամբողջ աշխարհը և կործանում իր անձը, ում համար ոչ աշխարհն է խաչը ելած, և ոչ էլ նա՛՝ աշխարհի: «Աշխարհ» այժմ չի անվանում բոլոր արարածներին, որովհետև անկարելի է շահել երկինքը և աստղերը, այլ աշխարհ է անվանում երկրային իրերը:

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այստեղ գտնվողների մեջ կան ոմանք, որոնք մահ չեն ճաչակի, մինչև չտեսնեն Մարդու Որդուն՝ եկած իր արքայությունը» (Մատթ. ԺԶ 28):

Ձի ճաչակի մահ [նա], ով ուտում է կենդանի հացը՝ Քրիստոսի մարմինը՝ ճշմարիտ Հացը, և ըմպում Բանի արյունը՝ ճշմարիտ ըմպելիքը: Իսկ մահ ճաչակում է [նա], ով ուտում է վիչապից, որի մասին գրված է. «Որպես կերակուր տվեցիր Եթովպիայի ժողովրդին» (Հմմտ. Սաղմ. ՀԳ 14):

Դարձյալ՝ մահ չի ճաչակի [նա], ով ուտում է կենդանություն ծառից: Եվ [նա] է ճաչակում մահ, ով ուտում է [այն] ծառից, որի մասին ասաց. «Այն օրը, երբ ուտեք դրանից, կմեռնեք» (Մանդ. Բ 17):

Արդ, Փրկչի ասած, թե՛ մահը չեն ճաչակի, վերաբերվում է նրանց, ովքեր ուտում են Նրա մարմինը արժանիորեն, ինչպես և ըմպում են Նրա արյունը: Եվ ոչ թե այս է ասում, թե կապրեն և չեն տեսնի մահ, որովհետև բոլորն էլ վախճանվեցին:

Ժ

«Եվ վեց օր Հեսո չիտուս Իր Հես վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և նրա եղբորը՝ Հովհաննեսին և նրանց Հանեց առանձին մի բարձր լեռ և նրանց առաջ պայծառակերպվեց» (Մատթ. ԺԷ 1-2):

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այստեղ գտնվողների մեջ կան ոմանք, որոնք մահը չեն ճաշակի» խոսքն ասելուց Հեսո անցնում է վեց օր: Եվ վեց օրից Հեսո ելնում է լեռ և պայծառակերպվում նրանց առջև:

Պատմությանը Հարազատ մնալով, [այն] առակով այսպես է մատուցվում. վեց օրում ստեղծվեց աշխարհը, և քանի որ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը արհամարհում էին տեսանելի [աշխարհը, ուստի վեց օրում] անցնելով աշխարհով՝ Քրիստոսի Հես ելնում են լեռան վրա և Բանին տեսնում հրաշափառագույն և պատվականագույն:

«Նրանց առաջ պայծառակերպվեց»

Նա ո՛չ տեսք ուներ և ո՛չ էլ գեղեցկութուն (Եսայի ԾԳ 2): Ահավոր էր փառավոր տեսքը և սոսկալի:

«Եվ Նրա դեմքը փայլեց, ինչպես արեգակը» (Մատթ. ԺԷ 2):

Դեմքը փայլեց իբրև արդարության Արեգակ՝ խավարի և գիշերի գործերը այրելու և աստվածային գործերը լուսավորելու համար:

«Եվ Նրա զգեստները դարձան սպիտակ, ինչպես լույսը» (Մատթ. ԺԷ 2):

Հանդերձը խորհրդանշում է ավետարանական և առաքելական գրքերի աստվածաբանողի և դրանց բառերի մեկնաբանողի միտքը:

«Նրանց երևացին Մովսեսն ու Եղիան» (Մատթ. ԺԷ 3):

Մովսես՝ օրենքներն է խորհրդանշում, իսկ Եղիան՝ մարգարեութունները: Տե՛ս, միգուցե Չեբեղիոսի որդիներին ասելու համար երևացին Մովսեսն ու Եղիան. Մովսեսը՝ աջից, և Եղիան՝ ձախից, թե [նստել իմ աջ և ձախ կողմերում՝ ես չէ, որ կտամ, այլ այդ նրանց համար է], որոնց տրված է Իմ Հորից (տե՛ս Մատթ. Ի 23):

«Պետրոսը պատասխանեց և ասաց Հիսուսին. «Տե՛ր, բարի է, որ մենք այստեղ ենք, եթե կամենաս, երեք տաղավարներ շինենք» (Մատթ. ԺԷ 4):

Ոմանք արհամարհում են Պետրոսին [այն խոսքի համար], որ ասաց. «Բարի է, որ մենք այստեղ լինենք»: Քանզի եթե բարի էր այդտեղ լինելը, ապա Հիսուս [ինքն] արդեն բարին էր կատարում:

Եվ դարձյալ ինչո՞ւ ասաց՝ երեք տաղավար, այդ ասելով՝ կարելի է կարծել, թե մեկուսացնում է նրանց իրարից. մի՞թե մի տաղավարը երեքին բավական չէր: Այս [Հարցին] պատասխանեց Մարկոսը. «Սակայն չգիտեմ, թե ինչ է խոսում, որովհետև զարհուրած էին» (Մարկ. Թ 5):

«Եվ մինչ Նա դեռ խոսում էր, ահա մի լուսավոր ամպ նրանց վրա Հովանի եղավ» (Մատթ. ԺԷ 5):

Երեք տաղավարների փոխարեն մի լուսավոր ամպ նրանց վրա Հովանի եղավ, որպեսզի [ի մի] Հանգուցի այն, որին նայում էին՝ Ավետարանին, օրենքներին և մարգարեութուններին:

«Եվ ահա ամպից մի ձայն եղավ» (Մատթ. ԺԷ 5):

Ամպից ձայն եղավ Մովսեսին, Եղիային և մանավանդ աշակերտներին, որպեսզի հաստատապես իմանան, թե իսկապես Նա է Աստծու Որդին: Եվ ամպը, ինչպես կարծում եմ, հոգևոր էր, և Տիրջ Խոսքը ուղղվեց նրանց, ինչպես մարգարեներին:

Եվ երբ լսում ենք Եսայից, թե «Չավակներ ծնեցի և մեծացրի» (Եսայի Ա 2), չենք ասում Եսայի որդիները, այլ մարգարեի երկնավոր Հոր: Նույնպես և ձայնը, որ ամպից եղավ, ամպից չէր, այլ Հորից, որ ամպից լսեցին, Հիսուսի իրենց մոտենալիս:

«Իրենց աչքերը բարձրացնելով՝ տեսան միայն Հիսուսին» (Մատթ. ԺԷ 8):

Այսինքն՝ Ավետարանը, օրենքները և մարգարեութունները միաբանված և մեկ եղած:

«Եվ երբ նրանք իջնում էին լեռից, Հիսուս նրանց պատվիրեց. «Այդ տեսիլքը ոչ ոքի չասեք, մինչև Մարդու Որդին մեռելներից Հարություն առնի» (Մատթ. ԺԷ 9):

Ինչպես մինչ այդ չէր կամենում, որ ամբոխը իմանա Հրաշափառա-



գույնը, որպեսզի չարչարանքների ժամանակ գայթակղվելով չմեղանչի, որովհետև այդ ամենն օգտակար է իմանալ [միայն] հարուժյուսից հետո:

*«Աչակերտները Նրան հարցրին և ասացին. «Հապա ինչո՞ւ օրենագետներն ասում են, թե նախ Եղիան պիտի դա» (Մատթ. ԺԷ 10):*

Ասում են աչակերտները. «Մենք այժմ Եղիային տեսանք քեզ հետ, իսկ օրենագետները ուսուցանում են, թե նախքան Քրիստոս Եղիան պիտի դա, բայց ահա հասկացանք, որ սուտ են ուսուցանում»: Եվ Նա նրանց ասաց Հովհաննեսի մասին, և հավատացին (տե՛ս Մատթ. ԺԷ 10-13):

*«Եվ Հիսուս նրան աստեց, դեւը նրանից դուրս եկալ» (Մատթ. ԺԷ 17):*

Ինչո՞ւ է գրված, թե աստեց լուսնոտին և ոչ դեւին: Կարծում եմ, որ պատահաբար մեղքերի պատճառով էր պատահել. որպեսզի ընդունելով ասատումը՝ օժանդակի դեւի ելնելուն:

*«Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, այս լեռանը կասեք՝ տեղափոխվի՛ր այստեղից այնտեղ, կտեղափոխվի» (Մատթ. ԺԷ 19):*

Քանզի երկնքի արքայությունը նմանվեց մանանեխի հատիկի, նաև գովելի հավատը նմանվեց մանանեխի հատիկի: Իսկ որոնք մի բանի են նման, ապա միմյանց նույնպես նման կլինեն, հետևաբար, գովելի հավատը նմանվում է երկնքի արքայությանը: Հավատը միանգամայն իրավացիորեն նմանվեց հատիկի, որը պետք է երկրագործել, որպեսզի աճելով մեծ ծառ դառնա:

*«Եվ ոչինչ անհնարին չի լինի ձեզ համար» (Հմմտ. Մատթ. ԺԷ 19):*

Ով ճշմարտությունամբ հավատում է, նրան ոչինչ անհնարին չի լինի իր օգտի համար, այլ ամեն ինչ բարուն գործակից կլինի:

*«Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չդառնաք և չլինեք մանուկների պես, չեք մտնի երկնքի արքայությունը» (Մատթ. ԺԸ 3):*

Եվ եթե ամենքը, ովքեր մտնում են արքայություն, պետք է դառնան և լինել մանուկների նման, ապա Աստուծոց Որդուն տրված բոլոր [մանուկների] համար ասվեց. «Ահավասիկ ես և իմ զավակները, որ

Ասոված ինձ պարզեցեք» (Եսայի Ը 18), քանզի ամենքն էլ մտքի կատարելություն և չարություն [տեսակետից] մանուկներ են:

*«Ով իր անձը խոնարհեցնում է ինչպես այս մանուկը, երկնքի արքայություն մեջ նա՛ է մեծը» (Մատթ. ԺԸ 4):*

Նույնը չէ ինքն իր անձը խոնարհեցնելն ու տառապեցնելը և ուրիշի [պատճառով] խոնարհվելն ու տառապելը: Ով իրեն խոնարհեցնի, նա կբարձրանա, իսկ ով խոնարհվում և տառապում է տնանկությունից կամ ուրիշների ինչ-ինչ նախատանքներից, ապա դա խոնարհություն չէ: Բայց Քրիստոս հրամայում է ինքն իրեն խոնարհեցնել, [ինչպես Ինքը] որպես մանուկ, կամավորությունամբ խոնարհվելով կանգնեց նրանց մեջ:

*«Ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի...» (Մատթ. ԺԸ 6):*

Ձեմ կարծում, թե փոքրիկը և մանուկը նույնն են, քանզի այն փոքրը, ով չի գայթակղվի, երկնքի արքայությունում մեծ կլինի: Եվ դարձյալ փոքրը, եթե գայթակղվի, երկնքի արքայությունում չի լինի, ինչպես մանուկը, այլ [նա], ով գերծ և վեր է գայթակղությունից: «Քանզի Տիրոջ անունը սիրողները մեծ խաղաղության մեջ են, և նրանց համար չկա գայթակղություն» (Հմմտ. Սաղմ. ՃԺԸ 165): Այս ասաց նրանց համար, ովքեր գայթակղեցնում են այս փոքրիկներից մեկին. որովհետև փոքրերը դյուրությունամբ են գայթակղվում: Անուշադրություն մի՛ մատնեք նրանց, որպեսզի փոքրերից ոչ ոք չկորչի մեր մոտից, քանզի «փոքրը» տկարահավատ հավատացյալն է:

*«Եթե քո ձեռքը կամ ոտքը քեզ գայթակղեցնում է, կտրի՛ր այն և դե՛ն գցիր քեզանից» (Մատթ. ԺԸ 8):*

Մարդկանց գործերը երկու կերպ են, կեսն ըստ Աստծու են գործում և կեսը՝ ընդդեմ Աստծու: Նույնպես և ընթացքը. ոմանք [ընթանում են] ըստ Աստծու, և ուրիշներն ոչ ըստ Աստծու: Արդ, ով երկու գործերն էլ գործում է և երկու ընթացքով էլ ընթանում է, և ոչ [թե] մեկը՝ ճշմարտապես, գեհեհնի է արժանի: Իսկ եթե սրանցից մեկը՝ Աստծուն հաճելին [գործի], նրանն է երկնքի արքայությունը:

Նույնպես և պետք է իմանալ երկու աչքերի վերաբերյալ (տե՛ս

Մատթ. ԺԸ 9), դրա համար և փեսան հարսի մի աչքի մասին ասաց. «Մեր սիրտը խոցեցիր քո մի աչքով» (Երգ. Դ 9), [նաև] ասում է. «[Դա՝ տաստանի համար] եկա [այս աշխարհը], որպեսզի, ովքեր չեն տեսնում, տեսնեն, և ովքեր տեսնում են, կուրանան» (Հովհ. Թ 39): Առաջինի չտեսնելը վատթարագույն է, քան տեսնելը:

*«Տեսեք, այս փոքրիկներից մեկին չարհամարհեք. ասում եմ ձեզ, որ երկնքում նրանց հրեշտակները մշտապես տեսնում են երեսն իմ Հոր, որ երկնքում է» (Մատթ. ԺԸ 10):*

Մեծամեծները չեն արհամարհվում, իսկ փոքրերը դյուրությամբ են արհամարհվում: Ուստի փոքրերը պահպանվում են հրեշտակների կողմից. «Տիրոջ հրեշտակների բանակն իր երկյուղածների շուրջն է [և պահպանում է նրանց]» (Սաղմ. ԼԳ 8), իսկ կատարյալներին Տերն է պահում, ինչպես և ասվում է. «Ամենայն ժամ Տերն իմ առաջ է, որպեսզի չսասանվեմ» (Սաղմ. ԺԵ 8), և դարձյալ՝ «Ինձ ձայն կտա ու կլսեմ Նրան, և Նրա հետ կլինեմ նեղության մեջ» (Սաղմ. Դ 15):

Բայց ի՞նչ է նշանակում երկնքում հրեշտակների Աստծու երեսը տեսնելը: Անհնարին է տեսնել Աստծու երեսը, քանզի բնությամբ անտեսանելի է: Ինձ թվում է՝ Աստծու երեսը տեսնել՝ Աստծու կամքը իմանալն ու կատարելն է:

*«Ձեզ ինչպե՞ս է թվում. եթե մի մարդ հարյուր ոչխար ունենա» (Մատթ. ԺԸ 12):*

«Մի մարդը» Քրիստոսն է, որ սկզբից իսկ Աստծու պատկերով էր: Նա, լեռան վրա թողնելով իննսուներե ոչխարներին, եկավ փնտրելու կորուսյալ ոչխարին՝ մարդկային հոգին:

*«Դարձյալ ձեզ ասում եմ. եթե ձեզնից երկուսը միաբանվեն երկրի վրա որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կկատարվի նրանց համար իմ Հոր կողմից, որ երկնքում է» (Մատթ. ԺԸ 19):*

Միաբանվեցին Պողոսն ու Սոսթենեսը՝ մի թուղթ գրելով (տե՛ս Ա Կորնթ. Ա 1), նաև Պողոսը, Շիղան ու Տիմոթեոսը (Թեսալ. Ա 1): Նաև Կորնթի որդիները՝ Դավթի քառասունմեկերորդ սաղմոսում. «Ինչպես եղջերուն ջրի ակունքներին է փափագում, այնպես էլ մեր անձերը քեզ

են փափագում, Ո՛վ Աստված» (Հմմտ. Սաղմ. ԽԱ 1):

Նաև միաբանվում են նրանք, ովքեր կատարյալ են նույն մտքով և մեկ կամքով: Եվ երկուսի միաբանվելը երկրում ու Քրիստոսի հետ լի՞նելը ոչնչով չեն զանազանվում [միմյանցից]: Եվ երկուսը՝ հոգին ու մարմինը, եթե միաբանվեն, մարմինը կհնազանդվի և հոգին կենդանություն կտա: Եվ դարձյալ, միաբանված են նաև երկու կտակարանները, որոնց մեջ է Քրիստոս և ծանուցվում է երկուսից էլ:

*«Դրա համար երկնքի արքայությունը նմանվեց մի թագավորի» (Մատթ. ԺԸ 23) և այլն:*

Այս առակի մտքերը հետևյալն են. մեզ ուսուցանել, թե պարտավոր ենք մեր հանդեպ եղած հանցանքները մարդկանց ներել՝ պարտական ամեն մարդու միջոցով, և սրանից հետո [ներել] արտաքիններին, բանասրկուին և կամ նրան, ով ինչ ունի այս աշխարհից:

«Քանքարը» բարի մարդիկ են, որոնցով Աբրահամը և այլ մարդիկ մեծանուն եղան: Չար քանքարը կապարից է, որի վրա նստած է անիրավ կիրնը, ինչպես տեսավ Չաքարիան (տե՛ս Չաք. Ե 7):

*«Տերը հրամայեց վաճառել նրան և նրա կնոջն ու որդիներին» (Մատթ. ԺԸ 25):*

Աստված հրեշտակներին և այլ սպասավորների հրամայում է՝ [նրան, նրա կնոջն ու որդիներին] տալ տանջողներին: Հրեշտակները սպագա դատաստանի ժամանակ տանջողներն են:

*«Եվ փարիսեցիները, մոտենալով Նրան, փորձեցին և ասացին. «Օրինավո՞ր է, որ մեկն իր կնոջն արձակի ամեն մի հանցանքի պատճառով» (Մատթ. ԺԹ 3):*

Փորձում էին՝ կարծելով, թե երկուսից մեկը կպատասխանի. կամ ոչինչ չի ասի ամուսնալուծության [մասին], և կամ՝ մեղավոր են ամուսնության [մեջ]: Իսկ Նա, պատասխանելով նրանց, ասաց. «Ձե՞ք ընթերցել, թե Նա, Ով սկզբից ստեղծեց, արու և էգ ստեղծեց» (Մատթ. ԺԹ 4): Ենթադրվում էր, որ «Ծննդոց» գրքում ասված [հետևյալ խոսքը], ոչ թե Աստծու կողմից է, այլ Ադամի. «Այս պատճառով տղամարդը պիտի թողնի իր հորն ու մորը և գնա իր կնոջ ետևից» (Ծննդ. Բ 24):

Սակայն այժմ Փրկիչն ասում է, թե Աստծու կողմից է ասված այդ՝ խրատելով նրանց, թե Ադամը Աստծու միջոցով խոսեց մարգարեանալով:

*«Ապա ուրեմն ոչ թե երկու, այլ մեկ մարմին են» (Մատթ. ԺԹ 6):*

Ուրեմն տղամարդու և կնոջ միաբանությունը Աստծուց է սահմանված, տղամարդուն որպես իշխանի, իսկ կնոջը՝ Հնազանդվողի: Հաստատապես երկու չեն, այլ մեկ մարմին: Ինչն ակնարկում է Քրիստոսի և Եկեղեցու [միությունը]: Հայրը Եկեղեցին զուգեց Քրիստոսի հետ, և ինչ Աստված միավորեց, եկեղեցական մարդն իր անարժան գործերով թող չբաժանի իրեն Քրիստոսից:

*«Նրանց ասաց. «Մովսեսը ձեր խտատարությունը պատճառով ձեզ թույլ տվեց արձակել ձեր կանանց» (Մատթ. ԺԹ 8):*

Սրանից հայտնի է դառնում, թե դրվեցին այնպիսի օրենքներ, որոնք կարեկից եղան այնպիսիների տկարությունը, որոնց տրվեցին օրենքները, ինչպես և նորում ասվեց. «Բայց, չպոռնկանալու համար, յուրաքանչյուր մարդ թող իր կինը ունենա (Ա Կորնթ. Է 2):

*«Իր աշակերտները Նրան ասացին» (Մատթ. ԺԹ 10) և այլն: Եվ Նա ասաց. «Բոլորն ընդունակ չեն այդ բանին, այլ նրանք, որոնց տրված է» (Մատթ. ԺԹ 11) և այլն:*

Ոչ միայն ճգնություն, այլև աղոթքներ են պետք կուսությունը պահողին: Դրա համար ավելացրեց՝ «որոնց տրված է», այսինքն՝ ովքեր բարությունը ու հաճոյապես կխնդրեն Աստծուց. այդպիսիներին է տրված: Ապա ուրեմն ով չխնդրեց, նրան տրված չէ, քանզի չխնդրեց, ինչպես Աստծուն էր հաճո:

*«Կան ներքինիներ, որոնք իրենց մոր որովայնից այդպես են ծնվել. և կան ներքինիներ էլ, որոնք մարդկանց կողմից են ներքինի դարձել. ներքինիներ էլ կան, որոնք երկնքի արքայությունը համար իրենք իրենց ներքինիներ են դարձրել» (Մատթ. ԺԹ 12):*

*«Իրենք իրենց ներքինիներ դարձնել»* ոչ թե անդամների հասումն է ասում, ինչպես ոմանք կարծեցին և հատեցին իրենց արական անդամները, այլ «իրենք իրենց ներքինիներ դարձնել» [խոսքը] ակնարկում է

ժուժկալությունը և զգաստությունը ապրելը, պոռնկությունից և աղտեղի գործերից [զերծ մնալը]: Փրկիչն Ինքը [նրանց] պատրաստեց և պատվիրեց ամեն ինչ խոսքով, կարգով և հոգևոր օգնականությունը գործել, որպեսզի կարողանանք արժանապես տեսնել երկնավոր Հորը:

*«Դարձյալ ասում է. «Ավելի դյուրին է, որ պարանը ասեղի ծակով մտնի, քան թե հարուստը՝ Աստծու արքայություն» (Մատթ. ԺԹ 24):*

Հունարենում [պարանի փոխարեն] գված է «ուղտ», որը խորհրդանշում է վատթար գործերով խեղաթյուրվածներին և կորուսյալներին: Այսպիսիներին ավելի դյուրին է ապաշխարությունը և ուղիղ վարքով մտնել արքայություն, քան այդպիսի հարուստին:

*«Աստծու արքայությունը նման է մի տանտիրոջ» (Մատթ. Ի 1):*

Աստվածային գրքերում Աստված մարդ է կոչվում բազում [անգամ], Աստծու Որդու՝ մարդկային կերպարանք առնելու պատճառով: Նա նաև այս տան Տանուտերն է, որի մասին առաքյալն ասում է. «Մովսեսը հավատարիմ եղավ նրա ամբողջ տան վրա, իսկ Քրիստոս՝ իբրև Որդի, իր տան վրա, և նրա տունը հենց մենք ենք» (Եբր. Գ 5-6):

*«Կարող եք խմել այն բաժակը, որը ես խմելու եմ» (Մատթ. Ի 22):*

Փրկության բաժակն [այն է], որ ասվեց. «Տիրոջ առաջ պատվական է իր սրբերի մահը» (Սաղմ. ձժԵ 15):

## ԺԱ

*«Երբ Երուսաղեմին մոտեցան և եկան Բեթփազե՝ Ձիթենյաց լեռան մոտ, այն ժամանակ Հիսուս Իր աշակերտներից երկուսին ուղարկեց» (Մատթ. ԻԱ 1):*

Ուղարկեց, որպեսզի բերեն էջը և նրա քուռակը: Էջը խորհրդանշում է հրեա հիմար ժողովրդին, որովհետև անչափ հրաշքներ գործեց նրանց մեջ, սակայն Նրան չճանաչեցին, և մինչև այսօր էլ չեն իմանում մովսիսական և մարգարեական գրքերի միտքն ու գործությունը: Իսկ քուռակը՝ Հեթանոս ժողովուրդը, որ դեռևս անխորձ էր աստվածապաշտության [մեջ]:

Էջի արձակելը խորհրդանշում է Հին Կտակարանի պարզաբանումը, որը կապված էր անհայտության և խրթնաբանության կապանքներով, որ արձակեցին Քրիստոսի աշակերտները: Իսկ քուռակը՝ Նոր Կտակարանն է, որի վրա նստեց Քրիստոս առաքյալների կարգավորումով, որը [էջի ու քուռակի վրա] գգեստները գցելով [խորհրդանշվեց]:

«Բազում ժողովուրդներ իրենց զգեստները փոխեցին» (Մատթ. ԻԱ 8) և այլն: Ժողովուրդների բազմությունները [նրանք են], ովքեր իրենցում ճանապարհ պատրաստեցին կենարար Խոսքի համար:

«Ուրիշներ ծառերից ճյուղեր էին կտրում» (Մատթ. ԻԱ 8): [Կտրում էին] Հին գրի կապված և անհայտ խոսքերը, որոնք նոր վարդապետները՝ Սուրբ Հոգու ազդեցությամբ, Քրիստոսին վերադրեցին՝ իսկապես գիտենալով, թե Նրա վերաբերյալ ասվեցին:

«Իսկ առջևից ու ետևից գնում էր ամբոխը» (Մատթ. ԻԱ 9): Առջևից [գնացող] ամբոխը՝ մարգարեների խմբերն են, իսկ ետևինը՝ առաքյալների, ովքեր միաբանորեն Աստծու Որդուց հայցում էին բոլորիս փրկությունը, այս է Ովսաննա [գոչելու պատճառը]:

«Եվ ճանապարհի վրա մի թզենի տեսնելով՝ եկավ դեպի այն և նրա վրա ոչինչ չգտավ, այլ միայն տերև» (Մատթ. ԻԱ 19): Թզենին թլպատված ժողովուրդն է, որի մոտ եկավ քաղցած Քրիստոս և պտուղ չգտավ, այլ միայն ցնորական կենդանություն, ուստի Նրա գալով, չորացան:

«Ինչպե՞ս է ձեզ թվում. մի մարդ երկու որդի ուներ» (Մատթ. ԻԱ 28): Մարդը Քրիստոսն է, իսկ երկու որդիները՝ երկու ժողովուրդները՝ Հրեաներն ու Հեթանոսները: Նա ով ասաց, թե «Գնում եմ, Տե՛ր». ու չգնաց՝ Հրեա ժողովուրդն է, որ ասաց, թե գնամ այգի ուրախ աշխատելու համար, սակայն չգնաց:

Իսկ երկրորդը՝ Հեթանոս ժողովուրդը, որ ասաց. «Չեմ գնում». բայց Հետո գլջալով՝ գնաց այգի» (տե՛ս Մատթ. ԻԱ 29-30):

«Լսեք մի այլ առակ. «Մի տանուտեր տնկեց այգի և այն ցանկապատեց ու նրա մեջ հնձան փորեց» (Մատթ. ԻԱ 33) և այլն:

«Այգին» ներկա ժողովուրդն է, «ցանկապատը»՝ Աստծու պահպանությունը, «աշտարակը»՝ տաճարը, «հնձանը»՝ պատարագներ և նվերներ [մատուցելու] տեղը, իսկ «մշակները»՝ Հրեաները և ժողովրդի իմաստունները:

«Տիրոջ [Հեռու երկիր] գնալը»՝ Հրեդեն ամպով ծածկվելն և այլևս չերևալն է (հմմտ. Գործք Ա 9): [Երբ] ժամանակը մոտեցավ, ուղարկեց [իր] «ծառաներին»՝ [այսինքն] առաքեց մարգարեներին, և «որդուն»՝ Քրիստոսին:

«Սա է ժառանգը, եկեք սպանեք սրան և սրա ժառանգությունը մենք սեփականացնենք» (Մատթ. ԻԱ 38):

Ինչպես և Հերովդես, լսելով Նրա գալստյան մասին, կոտորեց Բեթղեհեմի մանուկներին՝ կամենալով Նրան ոչնչացնել (տե՛ս Մատթ. Բ 16), [նաև] ծեծվեց Միքիան՝ ապտակ ստանալով Սեղեկիայից (տե՛ս Բ Մն. ԺԸ 23), սպանվեց Չաքարիան տաճարի մեջ՝ սեղանի առջև (տե՛ս Մատթ. ԻԳ 35), քարկոծվեց Երեմիան (Երեմ. ԼԸ 6) և Հովիտայի որդի Չաքարիան (տե՛ս Բ Մն. ԻԴ 20-21):

«Նիսուս դարձյալ պատասխանեց և առակներով ասաց նրանց. «Երկնքի արքայությունը նմանվեց մի թագավորի, որ իր որդու համար հարսանիք արեց» (Մատթ. ԻԲ 1):

Նախկին առակում ասաց «տանուտեր» մարդ, իսկ այժմ՝ «թագավոր», քանի որ առաջինում էջը հիշվելու գորականներ ուղարկելը, իսկ այստեղ հիշվելու էր: Հարսանիքը արեց Հայր Աստված Իր Որդու, փեսայի՝ Քրիստոսի և հարսի՝ եկեղեցական Հոգու [համար], որը չի ապականվում, այլ անապականություն է ընդունում Նրա Հետ միավորվելով և հաղորդվելով: «Մառաններ» կոչում է Մովսեսին և մարգարեներին:

«Եվ նրանք չկամեցան գալ» (Մատթ. ԻԲ 3): Ոմանք [չեկան] այս կյանքի փուլթերի և աղտեղության պատճառով:

«Եվ դարձյալ ուրիշ ծառաներ ուղարկեց» (Մատթ. ԻԲ 4):  
...Բոլոր վարդապետներին և Հայրապետներին:

«Ահա իմ ճաշկերույթը պատրաստված է, իմ մեծ ցուլերը և իմ պարարտ անասունները մորթված են» (Մատթ. ԻԲ 4):

«Ճաշը» աստվածային իմաստության ու գիտության սեղանն է: «Մեծ ցուլերը» Աստծու մասին ուրախարար խոսքերն են: «Պարարտ» [կոչում է] քաղցր վարդապետությունը, որ պարարտեցնում է Հոգիները:

«Թագավորը լսելով բարկացավ, զորք ուղարկելով՝ բնաջնջեց սպանողներին և այրեց նրանց քաղաքը» (Մատթ. ԻԲ 7):

«Զորքը» Աստծու Հրեշտակային զորքերն են, ապա նաև Վեսպասիանոսը և նրա զորքը, որ գալով կոտորեց Հրեաստանը՝ Քրիստոսի խաչելությունից հետո, և Հրկիզեց նրանց քաղաքները:

«Այնժամ թագավորն իր ծառաներին ասաց» (Մատթ. ԻԲ 8):

Այստեղ «ծառաները» առաքյալներն ու Հրեշտակներն են՝ նշանակված Հեթանոսներին կանչելու համար: Ինչպես և ասացին առաքյալները Հրեաներին. «Զեզ Հարկավոր է նախ պատմել Աստծու խոսքը, բայց որովհետև ձեզ անարժան դարձրիք Հավիտենական կյանքի համար, այդ պատճառով Հեթանոսներին ենք գնում» (Հմմտ. Գործք ԺԼ 6):

«Եվ ծառաները ճանապարհների վրա ելնելով՝ Հավաքեցին բոլոր նրանց, ում գտան՝ և՛ չարերին և՛ բարիներին» (Մատթ. ԻԲ 10):

Հավաքեցին չարերին, որպեսզի մոռանան իրենց չարությունը և Հագնեն Հարսանյաց Հանդերձ և ստանան աստվածային կերակուր: Նաև կանչեցին բարիներին, որ Հեթանոսներն էին:

Իսկ [Հեթանոսները] ինչո՞վ էին բարի: Բարի [ասելով], պետք է Հասկանալ այնպիսիներն են, ովքեր չարության մեջ մեղմ էին և ըստ բնական օրենքների էին ապրում:

«Եվ երբ թագավորը ներս մտավ Հրավիրվածներին տեսնելու» (Մատթ. ԻԲ 11):

Թագավորը, նախքան ուրախությունը, [ներս] մտավ, որպեսզի

տեսնի, թե ո՞վ է ուրախության արժանի, և ով՝ ոչ:

«Այնտեղ տեսավ մի մարդու, որ Հարսանիքի զգեստ էր Հագել» (Մատթ. ԻԲ 11):

Քանի որ էր Հանել չարության և ամբարշտության զգեստը, այլ տակավին [դրանցով] զգեստավորված և միայն նենգությամբ ու խորամանկությամբ էր մտել, այսինքն՝ անաստվածությամբ ու ամբարշտությամբ՝ [իր հետ] ոչինչ չբերելով Քրիստոսի պատվիրաններից ու առաքինությունից, այդ պատճառով էլ պապանձվեց, որովհետև պատասխան չուներ:

Հրեշտակները կապում են [նրա] ձեռքերն ու ոտքերը և Հանում [դուրս] տանջանքի վայրը (տե՛ս Մատթ. ԻԲ 13): Ոտքերը՝ ընթացքն է, իսկ ձեռքերը՝ ներգործելու գործությունը:

«[Փարիսեցիները] Նրա մոտ են ուղարկում իրենց աշակերտներին՝ Հերովդեսականների հետ միասին» (Մատթ. ԻԲ 16):

Հերովդեսականները Հերովդեսի կողմից էին, ովքեր ասում էին՝ պետք է պատերազմել կայսեր դեմ:

«Վարդապետ, գիտե՞ք, որ ճշմարտախոս ես» (Մատթ. ԻԲ 16):

Նենգությամբ էին գովում, դրդելով ասել, թե՛ պետք է Հարկատու լինել կայսեր, որպեսզի [Նրան] մատենն Հերովդեսականների [ձեռքը]: Իսկ Փրկիչն աստվածավայել պատասխան տվեց. «Գնացե՛ք, տվե՛ք կայսրին՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. ԻԲ 21): Նրանք կարծում էին, թե իրենց կպատասխանի՝ «Ոչինչ չտալ կայսեր, քանզի Աստծուն էք ծառայում և ո՛չ մարդկանց»:

«Այն օրը Նրան մոտեցան սաղուկեցիները և ասացին. «Վարդապետ, Մովսեսն ասաց, եթե մեկն անժառանգ մեռնի, նրա եղբայրը նրա կնոջը պիտի առնի» և այլն (Մատթ. ԻԲ 23-24):

Սաղուկեցիները Հարություն չեն ընդունում և ոչ [էլ] Հոգիների անմահություն, նույնպես և ասամբացիները: Արդ, նախատելով նրանց, ովքեր ասում են, թե Հարություն կա, Հարցրին Քրիստոսին՝ եթե յոթն էլ Հարություն առնեն, ում կինը կլինի նա, [քանի որ բոլորն էլ նրան իբրև կին ունեցան] (տե՛ս Մատթ. ԻԲ 28):

**«Հիսուս, նրանց պատասխանելով, ասաց. «Մոլորվածներ՝» (Մատթ. ԻԲ 29):**

Որովհետև, բացի Մովսեսից մյուս մարգարեներին չէին ընդունում, և գրքերի գործությունը չէին հասկանում և միայն բառերին էին նայում: Քանզի եթե հասկանային [հետևյալ խոսքը]. «Ես եմ Աբրահամի Աստվածը, Իսահակի [Աստվածը], Հակոբի Աստվածը և կենդանիների Աստվածը, այլ ոչ մեռելների» (Մատթ. ԻԲ 23), ապա կընդունեին նրանց հոգու անմահ լինելը և կհավատային հարությունը:

**«Արդար Աբելի արյունից մինչև արյունը Բարաքիայի որդի Ջաքարիայի» (Մատթ. ԻԳ 35):**

Հովսեփոս Եբրայացի պատմիչը հիշատակում է, թե Հովաս թագավորը Ջաքարիային սպանեց տաճարի մեջ՝ սեղանի առջև:

**«Եվ անօրենություն բազմանալու պատճառով շատերի սերը պիտի ցամաքի» (Մատթ. ԻԴ 12):**

«Շատերի» է ասում և ո՛չ բոլորի, քանզի չպիտի ցամաքի նրանց [սերը], ովքեր գնում են նեղ ու անձուկ ճանապարհով:

**«Եվ արքայություն այս Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում՝ ի վկայություն բոլոր հեթանոսների. և ապա պիտի դա վախճանը» (Մատթ. ԻԴ 14):**

Մեկը այս խոսքը մեկնելով՝ ասում է, թե ինչքան պակաս են այն ազգերը, որոնց քարոզվելու է Ավետարանը, այնչափ էլ ժամանակ է [մնալու] մինչև վախճանը:

**«Երբ տեսնեք ավերածություն պղծությունը» (Մատթ. ԻԴ 15):**

Դանիելի խոսքը այսպես գրվեց. «Մեկ ու կես յոթնյակում պիտի վերանան գոհերն ու ընծաները, ավերածության պղծությունը պիտի մնա տաճարի վրա, ու մինչև ժամանակի վախճանը վերջ պիտի տրվի ավերվածին» (Դան. Թ 27): Վախճանը պիտի վերացնի ավերվածությունը:

Հրեաները կարծում էին՝ պիղծի տաճար մտնելը [այն է], որ հուսմեացիները խոզի գլուխ ուղարկեցին, սակայն Պողոսը մեզ ուսուցանում է. թե պիղծը նեոն է, որ գալու է աշխարհ ավերածության և ապակա-

նություն համար և նստելով տաճարում [իր] անձը ցույց է տալու որպես թե Աստված է (տե՛ս Բ Թեսաղ. Բ 4):

**«Այն ժամանակ, ովքեր Հրեաստանում լինեն, թող փախչեն լեռները» (Մատթ. ԻԴ 16):**

Ինչո՞ւ է ասում «ովքեր Հրեաստանում լինեն, թող փախչեն լեռները»: [Նրանց], ովքեր ավերածություն պղծությունը համարեցին հուսմեացիների կամ Պիղատոսի (տե՛ս Ղուկ. ԺԳ 1) [կողմից իրագործված] տաճարի պղծությունը, ճշմարտորեն ասում է, թե ովքեր Հրեաստանում են, թող փախչեն լեռները: Քանի որ, ասում են, թե այնպիսի դառնություն է հեր հեղեղ հրեաներին, ինչպես [եղամ] Վեսպեսիանոսից:

Իսկ եթե այս երկրի ավերածություն պղծությունը նեոն է, որ եկավ առավելապես հավատացյալներին Քրիստոսից բաժանելու, [այդ դեպքում] ինչո՞ւ է միայն Հրեաստանում եղողներին [ասում], որ փախչեն լեռները: Թերևս մեկն ասի, թե պիղծ նեոը թագավորելու է Հրեաստանում, դրա համար միայն նրանք են փախչելու լեռները, նաև հույժ ահաբեկության և երկյուղի պատճառով:

**«Եվ ով տանիքի վրա կլինի, իր տնից բան վերցնելու համար թող ցած չիջնի. և ով հանդուս կլինի, իր վերնագեհատը վերցնելու համար թող ետ չդառնա: Բայց վա՛յ այդ օրերին հղիներին ու ստնտուներին» (Մատթ. ԻԴ 17-19):**

Քանի որ չեն կարող փախչել, այլ պետք է աղոթեն:

**«Աղոթեցե՛ք, որ այն փախուստը չլինի ձմռանը կամ շաբաթ օրը» (Մատթ. ԻԴ 20):**

«Ձմռանը»՝ եղանակի խստություն պատճառով, իսկ «շաբաթ օրը», քանի որ հրեաները շաբաթ օրը անցնում են միայն երեք ասպարեզ ճանապարհ: Այդ, այդպես մեկնվում է ոմանց կողմից:

Իսկ եթե Փրկիչը ամեն ինչ առակով խոսեց, ապա ուրեմն անհրաժեշտ է այլաբանորեն հասկանալ: «Հրեաստան» անվանեց նրանց պաշտամունքի սովերը՝ օրենքնի տեսանելի տառը, որից հրամայում է փախչել դեպի օրենքների և մարգարեների վեհագույն մտքերը՝ դեպ առաջյալների նոր վարդապետությունը:

«Եվ ով տանիքի վրա կլինի, –[այսինքն՝ ով ունի] բարձր, կատարյալ առաքինություն և աստվածապաշտության հյուսված պատկեր, –իր տանիք բան վերցնելու համար թող ցած չիջնի» (տե՛ս Մատթ. ԻԴ 17), [այսինքն՝ մարմնավոր բաներից: Եվ ովքեր թողել են իրենց հանդերձները՝ մարմնական ցանկությունները, թող ետ չդառնան դեպի նույն ցանկությունները:

Այն ժամանակ վա՛յ նրանց, որ չարություն հղացան և [նրանց, ովքեր] տալիս են իրենց աղտեղի անառակության կաթը: Նաև հորդորում է աղոթել, որպեսզի հոգու փախուստը մարմնից, չլինի ձմռանը կամ շաբաթ օրը: «Ձմեռ ժամանակը»՝ մեղքերի պեկոծություն և ամբարշտությունների խռովություն ժամանակն է, իսկ «շաբաթ օրը», որպեսզի դատարկություն և անհոգություն մեջ չլինի վախճանը, այլ բարի և առաքինի գործերի ժամանակ:

«Քանզի ուր դիակն է, այնտեղ էլ կհավաքվեն արծիվները» (Մատթ. ԻԴ 28):

«Դիակ» և «ընկած» անվանեց իր մարմինը, քանի որ չարչարվեց և մեռավ: Իր մեռած մարմինը ընկած անվանեց, որ ընկավ մեր փրկություն համար, իսկ արծիվներ անվանեց իրեն հավատացողներին, ովքեր արքայավայել և արժանավորապես կերակրվում են Նրանից:

Այսպիսիներին արծիվներ անվանեց և ոչ ազնավներ կամ անգղներ և այլ ուրիշ մեռելակեր թռչուններ, այլ արծիվներ, քանի որ այս թռչունը, ինչպես ասում են, պատրաստ որս և մեռած մարմին ուտելը արժանի չի համարում. այլ ինքն է վաստակում, ջանում և կենդանիներ որսավոր՝ կերակրվում: Նաև այս պետք է գիտենալ, որ հուճարենում չի ասում «դիակ», այլ «ընկած»:

«Արեգակը պիտի խավարի, և լուսինը իր լույսը պիտի չտա, և աստղերը երկնքից պիտի ընկնեն» (Մատթ. ԻԴ 29):

Սա հայտնի խոսք է, քանզի ինչպես ասում է Եսային. «Երկինքը մագաղաթի պես պիտի գալարվի և կլինի նոր երկինք և նոր երկիր» (Եսայի ԼԴ 4): Հայտնի է նաև, որ այս տեսանելի աստղերն ընկնում և խավարում են:

Իսկ ըստ առակի բացատրություն՝ «արեգակը» պետք է հասկանալ

աստանան, որովհետև կերպարանավորվում է լույսի հրեշտակի [կերպարանքով], նաև նեոը, որ իրեն աստված է անվանում: «Լուսինը» հերձվածողների եկեղեցիներն ու հրեաների ժողովարաններն են, որոնք կարող էին լուսավորվել Աստծու ճշմարտությունից, սակայն նրանից չեն լուսավորվում, այլ աստանայից, որին աստված են անվանում: Իսկ աստղերը նրանց վարդապետներն են, ինչպես և գրված է Հուդա առաքյալի ընդհանրական թղթում. «Մոլոր աստղեր, որոնց համար է պահված հավիտենական խավարի վիճը» (Հուդա Ա 13): Իմացի՛ր, Մարդու Որդու նշանը Նրա իմաստությունն է, խոսքը և երկնավոր ճշմարտությունը՝ ըստ աստղի. «Ճշմարտությունը երկրից բուսավ, արդարությունը երկնքից երևաց» (Սաղմ. ԶԴ 12), իսկ «երկնային գորությունները» երկնավորների բանական դասերն են, որոնք Նրան առաջին գալստյան ժամանակ տեսան անարգ կերպարանքով, իսկ երկրորդում՝ [կտեսնեն] հրաշափառ [կերպարանքով], ուստի հիացած, դողալով շարժվում են:

«Պիտի տեսնեն մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ գորությունք և բազում փառքով» (Մատթ. ԻԴ 30):

Ինչպես համբարձման ժամանակ ասվեց. «Ամպը Նրան ծածկեց նրանց աչքերից» (Գործք Ա 9), և դարձյալ. «Ամպից մի ձայն եկավ» (Մատթ. ԺԷ 5), [այսպես էլ] նույն ամպի վրայով գալու է Քրիստոս: Այսինքն՝ երկնավոր բանական գորություններով պետք է իմանանք Քրիստոսի գալուստը:

«Նա պիտի ուղարկի իր հրեշտակներին մեծ շեփորով» (Մատթ. ԻԴ 31):

«Ելից» և «Թվոց» գրքերում նաև առաքելական [թղթերում] շեփորը խորհրդանշում է Աստվածային խորհրդի բարձր ձայնը:

«Թե՛ գենուց սովորեցե՛ք առակը» (Մատթ. ԻԴ 32):

Այժմ «Թե՛ գենին» կա՛մ ամբողջ աշխարհի օրինակն է խորհրդանշում, որի վախճանի մասին է մարգարեանում, կա՛մ էլ՝ այն բոլոր մարդկանց, ովքեր ընթանում են երանելի կենդանություն [հույսով] և ցանկանում են տեսնել Աստծու Բանն, որպեսզի ուրախանան:

Քանզի ինչպես թե՛ գենին իր մեջ գորություն ունի ձմռանը ծաղկելու, նույնպես և [մարդը] առաքինությունք գարդարվել՝ հանցավոր աշ-

խարհում, որովհետև դեռ չի հասել ավետյաց պատկին, այլ հույս է տա-  
ծում և տեսնում է խոստացված բարիքները, ինչպես հայելու մեջ, իսկ  
արդար Դատավորի գալստյան ժամանակ, երբ հասնի ավետյաց [պահը],  
այնժամ [կտեսնի] հայտնապես և ոչ հույսով: Ինչպես թզենու պտու-  
ղը, որ ձմռան ժամանակ աներևույթ է, իսկ ամռանը ամենքին տեսա-  
նելի է [չ դառնում]:

*«Երբ նրա ոտները կակղեն, և տերևը ցցվի» (Մատթ. ԻԴ 32):*

Քանի դեռ ձմեռային ժամանակ է, ոտը սառած է, և տերևը ցցված  
չէ, իսկ երբ [եղանակը] ձմեռայինից ամառայինի փոխվի, այն ժամանակ  
ոտները կկակղեն և [տերևները] կցցվեն: Նույնպես և նա, ով բարձրա-  
նում է աշխարհից՝ պեկոճյալ խոովությունից, և ճանապարհորդում է դե-  
պի հավիտենական խաղաղություն, բերում է կակղած ոտներ՝ մարմնեղեն  
սիրտ և ոչ թե քարեղեն, ապա տերևներ և կատարյալ պտուղ:

*«Ճշմարիտ եմ ասում ձեզ, այս սերունդը չպիտի անցնի, մինչև այդ  
բոլորը կատարվի» (Մատթ. ԻԴ 34):*

«Այս սերունդը» ասված է Նոր Կտակարանի համար: Չի անցնի այս  
սերունդը, և չի գա խոստացված ավետիսը լավագույն տեսակներին մեջ,  
եթե չկատարվի այդ բոլորը, որ խոսեցի՝ նեոի գալուստը, այս ամբողջ  
աշխարհի վախճանն ու կորուստը:

*«Այն օրվա և ժամի մասին ոչ ոք չգիտե. ո՛չ երկնքի հրեշտակները  
և ո՛չ էլ Որդին, այլ միայն Հայրը» (Մատթ. ԻԴ 36):*

Օրն ու ժամը, երբ պիտի լինի աշխարհի վերջը, ոչ ոք չգիտե: Եվ  
հարց է՝ ինչո՞ւ չգիտի Որդին [այն], ինչը գիտի Հայրը:

Ոմանք ասացին, թե առաջ, քան չարչարվելը, քանի դեռ մարմնով  
չէր փառավորված, [այդպես] ասաց, [թե չգիտեմ], ինչպես և ասաց.  
«Ո՞ւր գրիք Ղազարոսին» (Հովհ. ԺԱ 34). որպեսզի ցույց տա իրեն  
[որպես] ճշմարիտ մարդ: Իսկ երբ փառավորվեց և Աստված նրան  
առավել բարձրացրեց և շնորհեց մի անուն, որ վեր է, քան ամեն անուն  
(Փիլիպ. Բ 9), ապա մարմնական աղտերը թոթափեց իր վրայից, և ամեն  
ինչ, որ գիտեր Հայրը, գիտի և Որդին:

Իսկ ոմանք ասացին, ըստ Պողոսի հետևյալ խոսքի. «Այն ժամանակ և

Որդին կհնազանդվի Հորը» (Ա Կորնթ. ԺԵ 28): Իսկ ե՞րբ էր [Նա Հորը]  
անհնազանդ: [Նա] եկեղեցու Գլուխն է, իսկ մենք մարմինն ենք Նրա և  
անդամները (Հմմտ. Ա Կորնթ. ԺԲ 27):

Եվ դեռևս չեն հնազանդվել Նրան [մարմնի] բոլոր անդամները և  
անդամների անհնազանդությունը Գլուխն իրեն վերագրվեց, քանզի եթե  
մի որևէ անդամ ցավ է գգում, նրա հետ ցավ են գգում բոլոր անդամ-  
ները (տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 26): Նույնպես և այն օրվա մասին մեր ան-  
գիտությունը իրենը համարվեց:

Դարձյալ ասվեց. «Նրան, Ով մեղքը չէր ճանաչել, Աստված մեզ հա-  
մար մեղավոր պրեց» (Բ Կորնթ. Ե 21): Ո՛չ թե Որդին մեղք գործեց, քանզի  
լիցի, այլ մեր մեղքերը իրենը համարվեցին, և մեր անեծքները նույնպես  
իրենը համարվեցին, ըստ խոսքի. «Անեծք դառնալով մեզ համար, որովհետև  
գրված է, թե՛ «Անիծյալ է այն մարդը, որ կախված է փայտից» (Բ Օր. ԻԱ  
23, Գաղ. Գ 13): Նույն օրինակով և իմացիլ ասվածի վերաբերյալ. «Ո՛չ  
հրեշտակները գիտեն օրը և ո՛չ էլ Որդին, այլ միայն Հայրը»:

*«Այն ժամանակ երկուսը, որ ագարակում լինեն, մեկը պիտի  
վերցվի, և մյուսը պիտի թողնվի» (Մատթ. ԻԴ 40):*

«Ագարակը», աշխարհը և անդաստանը խորհրդանշում են մարդկանց  
միտքն ու հոգիները: Ով իր ագարակում գործում է համաձայն մտքի, ինչ-  
պես Նոյը և Աբրահամը, և ոչ մարմնական ոգով, այնպիսին պիտի ըն-  
դունվի արքայության մեջ: Իսկ մյուսը, որ իր ագարակում գործում է  
մարմնական ցանկություններով, ինչպես Կայենը, նա դուրս կ[թողնվի]  
արքայությունից: Նույնպես և երկուսի դեպքում, ովքեր աղում են աշ-  
խարհի երկանքը, այսինքն՝ ուսուցանում են և իրենց վրա կրում աշխար-  
հի ծանրությունը: Ով բարությամբ է ուսուցանում և համբերությամբ  
կրում աշխարհի բեռն ու տանջանքները, պիտի ընդունվի արքայության  
մեջ, իսկ մյուսը՝ որպես անարժան, արքայությունից դուրս պիտի թողնվի:

*«Արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք, թե ո՛ր ժամին կգա ձեր Տերը»  
(Մատթ. ԻԴ 42):*

Այս ասաց ոչ միայն աշխարհի վախճանի վերաբերյալ, այլև յուրա-  
քանչյուր մարդու: Արթուն եղեք բարի գործերով, քանզի չգիտեք ձեր  
վախճանի օրը, թե երբ Տերը կկանչի ձեր հոգին մարմնից:



*«Արդյոք ո՞վ է այն հավատարիմ և խմաստուն ծառան» (Մատթ. ԻԴ 45):*

Երբ հավատքն ու խմաստությունը ընկալվում են որպես առաքի՛նություն, միմյանց հետ են ընթանում, այսինքն՝ հավատարմությունն ու խմաստությունը, և ով խմաստուն է, նաև հավատարիմ է: Իսկ նա, ով ունի խմաստությունը որպես խորամանկություն, այնպիսին կարող է հա՛վատարիմ չլինի, սրանք խմաստուններ են օձի և անիրավ տնտեսի նման:

Արդ, ով հավատարիմ է և խմաստուն, ինչպես Պողոսը, Պետրոսը և Նրանց նմանվողները, և ովքեր իրենց վարդապետության կերակուրը տալիս են արժանավորներին իր ժամանակին, այդպիսի ծառաներին, որոնց Քրիստոս կարգեց իր տան վրա աշխարհի, իր գաղտյան ժամանակ երանելիներ կղարձի:

*«Իսկ եթե չար ծառան իր մտքում ասի» (Մատթ. ԻԴ 48):*

Ապա եթե ծառան խմաստուն և հավատարիմ չէ, այլ չար ու հիմար և անուժ է չարություն ու հիմարություն, Տերը գալով երկուսի համար էլ կհատուցի նրան:

## ԺԲ

*«Այն ժամանակ երկնքի արքայությունը պիտի նմանեցվի տասը կույսերի» (Մատթ. ԻԵ 1):*

Տասը կույսերը մեր տասը զգայություններն են. հինգը հոգևոր և հինգը մարմնավոր: Եվ մարմնավորներն են՝ տեսանելիքը, լսելիքը, հոտոտելիքը, ճաշակելիքը և շոշափելիքը: Նույն օրինակով և հոգեղենը:

Արդ ասաց. «Ով ինձ տեսավ, տեսավ իմ Հորը» (Հովհ. ԺԴ 9): Մարմնավոր աչքերով նաև հրեաները տեսան Քրիստոսին, բայց Հորը չտեսան, ապա ուրեմն հոգու տեսողության [մասին] է ասում: Նույնպես և լսելը, հոտոտելը, ճաշակելը և շոշափելը:

Արդ, ով հոգու զգայություններով ծառայեցնում է մարմնական զգայությունները, ըստ խոսքի. «Տասնալար նվազարանով սողմոս պիտի երգեմ քեզ» (Մաղմ. ձԽԳ 9), այնպիսին խմաստուն է, քանի որ հինգ խմաստուն զգայություններով առաջնորդվեց, իսկ ով միայն մարմնավոր զգայություններով է [առաջնորդվում], այնպիսին հիմար է, քանզի ոչնչով չի գանազանվում անասուններից:

Սրանք էլ լամպեր ունեին, ինչպես խմաստունները, որովհետև ամեն-

քի հոգին հավասար է, ինչպես առաքյալները և այլ վարդապետների վարդապետությունը:

*«Հիմարներն առան իրենց լապտերները, բայց իրենց հետ ձեթ չվերցրին» (Մատթ. ԻԵ 3):*

Ձեթն առաքելական և մարգարեական խոսքն է: [Հիմարները] չունեին այսպիսի ձեթի առատություն՝ հեղված իրենց հոգիներում, և երբ փեսան ուշացավ, ամենքն էլ ննջեցին: Տակավին ներում է Քրիստոս և դանդաղում է մեզանից յուրաքանչյուրին դատել: Ննջում են, քանզի դեռևս աշխարհում են ու բողոքինն են:

*«Եվ կեպղիերին ձայն լսվեց՝ ա՛հա՛ փեսան գալիս է, եկե՛ք» (Մատթ. ԻԵ 6):*

Երբ բոլորը ննջեն, հրեշտակները բարձր ձայնով կգոչեն ննջեցյալներին, և բոլորը հարություն կառնեն: «Պատրաստները»՝ հոգեղեն զգայություններով ապրածները, Հիսուսի հետ կմտնեն արքայություն, իսկ հիմարներն արքայությունից կարտաքավեն:

*«Եվ խմաստունները պատասխանեցին և ասացին. «Գուցե ձեզ և մեզ բավական չի լինի» (Մատթ. ԻԵ 9):*

Երբ ժամանակն էր ուսանելու, չուսանեցինք: Արդ, վարդապետու՛թ ժամանակն անցել է, ոչ մենք [ուներնք հնարավորություն] ձեզ ուսուցանելու, և ոչ դուք՝ ուսանելու:

Սա նաև այսպես է հասկացվում. ծերության վերջին շրջանում կամ հիվանդության ժամանակ, եթե մեկը կամենա չառաջնորդվել մարմնավոր զգայություններով, չի կարողանալու: Անգամ եթե [վերջում] կամենա ուսանել և ասլրել ըստ հոգեղեն զգայությունների, [կարող է] հանկարծակի վրա հասնել վախճանը, ինչպես և առական է ցույց տալիս, թե ինչպես դուռ կփակվի նրա վրա:

*«Քանզի ինչպես մի մարդ, հեռու երկիր գնալիս, կանչեց իր ծառաներին և իր ունեցվածքը նրանց տվեց. մեկին տվեց հինգ քանջար, մյուսին՝ երկու և մի ուրիշին՝ մի» (Մատթ. ԻԵ 14-15):*


Տաղանդը կշռի միավոր է, ինչպես լիտրը, մնասը և այդպիսիները, որը առաջին թարգմանիչները թարգմանեցին քանջար: Մարդը, որ

տվեց քանքարը, Քրիստոսն է, ինչպես ուսուցանում է Աստվածային խոսքը. «Իմ արծաթը ընտիր ու փորձված է, յոթնապատիկ [մաքրված ու գտված] Հողից» (Հմմտ. Սաղմ. ԺԱ 7): «Եվ գնաց Հեռու երկիր»՝ երկրից [դեպի] երկինք:

Բայց ինչո՞ւ է ասվում Հինգ, երկու և մի: Ով Հինգը վերցրեց. ըստ Սողոմոնի, ճշմարտապես գիտակցեց աստվածային գրերի վեհագույն միտքը, Պողոսի ասած աստվածային Հինգ գագայություններով: [Արդ] կրթված գագայարաններով վերափոխվեցին այնտեղ տեսնելու աներևույթը, որը աշխարհի սկզբից ստեղծվածները միջոցով իմացվեց (Հմմտ. Հռոմ. Ա 20), նաև այլոց ամեն ինչ ուսուցանեցին աստվածային վարդապետությունը:

Իսկ ով երկուսը [ստացավ], սրան ոչ միայն գիր պարզեց, այլև աստվածային գրերի գորությունը, թեպետև ոչ այնպես կատարյալ, ինչպես նրան, ով Հինգը ստացավ: Այսպիսին նախ քննելով Աստծու արարածների տեսակները և նրանց նյութը, սրանցից վերանում է դեպի տեսակների ու նյութի Արարիչը՝ բոլոր արարածների Անդրանիկը, և ուսուցանելով նաև ուրիշներին՝ երկուսը կրկնապատկեց: Իսկ ով մեկն առավ, [այսինքն] միայն գիրը, ինչպես հրեաները, որոնցից գրվածի խմատը թաքնվեց, և այլոց [նույնպես] չտվորեցին, այլ թաքցրին իրենց սրտի խորքում, ինչը պետք էր սալ սեղանավորներին, Հմուտ վարդապետներին, ովքեր ունեին բարի վարդապետությունը, և նրանցից ուսանելով գրվածքի խմատը և ուրիշներին ուսուցանել: Արդ, քանի որ այն չարեց, ինչը պետք էր անել, ելնում է արտաքին խավարը:

Եվ եթե գարմանո՞ւմ ես, որ Աստծու խոսքը չուսուցանելու համար այսպիսի պատուհաս է [գինի], լսի՛ր Պողոսին. «Վա՛յ է ինձ, եթե չավետարանեմ» (Ա Կորնթ. Թ 16): Արտաքին խավարը [միջավայր] է, ուր Հոգին ամբողջապես խավարած է դառն տրտմությունը և չկա աստվածային լույսի այցելություն: Նաև Փիլոն Եբրայեցին, եթե քեզ ընդունելի այր է թվում, մովսիսական գրվածքները մեկնաբանելով՝ ասում է. «Խավարը, որ անդունդների վրա է, բոլոր աշխարհից դուրս է» (տե՛ս Ծննդ. Ա 2): Եվ տես, որ աշխարհի անարժանները արտաքավում են ամբողջ աշխարհից և ոչ միայն Աստծու դրախտից:



## ԺԳ

*«Այն ժամանակ Հիսուս նրանց Հեռ եկավ մի գյուղ, որի անունը Գեթսեմանի էր» (Մատթ. ԻԶ 36):*

Գեթսեմանի թարգմանվում է պարարտություն ձոր:

*«Այն ժամանակ նրանց ասաց. «Հողիս տրտում է մինչև ի մահ» (Մատթ. ԻԶ 38): Եվ քիչ Հետո ասում է: «Հա՛յր իմ, եթե կարելի է, այս բաժակը թող ինձնից Հեռու անցնի, բայց ոչ՝ ինչպես ես եմ կամենում, այլ՝ ինչպես դու» (Մատթ. ԻԶ 39):*

Սկսեց տրտմել, Հոգալ և աղոթել, որ եթե Հնարավոր է, բաժակը Հեռացվեր Իրենից: Ո՛վ Փրկիչ, Աստծու Միածին Որդի՛, նախապես ասացիր, թե Մարդու Որդին մատակերու է մեղավորների ձեռքը, խաչն է ելնելու և երրորդ օրը Հարություն է առնելու, և ինչպե՞ս կարելի է «բաժակը Հեռացնել» և սուտ Հանել խոսքերը: Այո, շատ, շարպես ճշմարիտ մարդ տրտմում, Հոգում և աղոթում եմ Իմ Հորը, և երկրորդ, քանզի գիտեմ, թե իմ արյան համար վրեժխնդրություն է լինելու՝ տաճարի կործանում և քաղաքի հրկիզում և բյուրավոր [մարդկանց] կոտորում. ոմանց՝ սովով, ոմանց՝ սրով և ուրիշներին՝ գերություն քշելով, որը եղավ Հռոմի Վեսպասիանոս կայսեր կողմից: Բայց ոչ թե Իմ կամքը լինի, այլ Հոր, որպեսզի նրանց անհավատությունը Հեթանոսներին փրկություն լինի, և Ի՛մ մահով ամենքը փրկվեն մահվանից:

*«Այն ժամանակ կատարվեց, ինչ ասվել էր Երեմիա մարգարեի բերանով. «Եվ առան երեսուն կտոր արծաթը՝ վաճառվածի գինը, որ նշանակվել էր խորայեղացիներից, և տրվեցի բրուտի ագարակի համար, ինչպես Տերը ինձ հրամայել էր» (Մատթ. ԻԷ 9-10):*

Եվ Երեմիայի [մարգարեությունում] ասվածը Հայտնապես չգտանք, իսկ Զաքարիայի [մարգարեությունում] այսպես է ասվում. «[Ես] նրանց ասացի. «Եթե ձեր [աչքին] հաճելի է թվում, ապա տվե՛ք իմ վարձը, իսկ եթե՛ ոչ ասացե՛ք»: Եվ նրանք կչուեցին իմ վարձը՝ երեսուն արծաթ»:

Տերն ինձ ասաց. «Դու բովի մեջ գցիր դա, քննի՛ր, թե այն փորձված է արդյոք այնպես, ինչպես ես, որ փորձվեցի նրանց կողմից իրենց համար»: Ես վերցրի երեսուն արծաթը և Տիրոջ տանը գցեցի բովի մեջ (Զաք. ԺԱ 12-13):

«Մերկացրին նրան և նրա վրա կարմիր վերնագգեստ գցեցին: Եվ փշերից պսակ պատրաստելով՝ դրեցին նրա գլխին» (Մատթ. Իհ 28):

Հանեցին և՛ անկար պատմուճանը, և՛ նրա հանդերձները, ինչպես և Հովհաննեսն է ասում. «Եվ նրան ծիրանի գգեստ հագցրին»՝ կարմիր քղամիւղ (Հովհ. ԺԹ 2): Քանզի վերնագգեստը արյան գույնով էր ներկված, դրա համար էլ հագցրին, թեպետև չգիտեին, թե աշխարհի արյունը կրեց մարդկանց փրկության համար: Եվ փշերից պսակ գործելով՝ դրեցին Նրա գլխին, Ով իր գլխով կրեց աշխարհի հոգան ու փուշը:

«Եղեզը տվեցին նրա աջ ձեռքին» (Մատթ. Իհ 29):

[«Եղեզը»] խորհրդանշում է տկարութունը, որը վերցնելով իր ձեռքը՝ վերցրեց մեր տկարութունը և մեզ պարզևեց իր արքայության գորության գավազանը:

«Եվ դուրս ելնելով՝ գտան կյուրենացի մի մարդ՝ Սիմոն անունով» (Մատթ. Իհ 32):

Եվ Մարկոսը, և՛ Ղուկասը ասում են, թե Սիմոն Կյուրենացին էր վերցրել Հիսուսի խաչը: Իսկ Հովհաննեսն ասաց՝ «Ոնաչափայտը Նա Ինքն էր վերցրել» (Հովհ. ԺԹ 17): Երկուսն էլ հնարավոր է, որ լինի. նախ Ինքն է վերցրում խաչը, իսկ հետո՝ Սիմոնը հայտնվելով Նրան ապաստվորում է, և ո՛չ պատահաբար, այլ Աստծու կամքով. որպեսզի ապաստվորի Քրիստոսի խաչին:

«Վեցերորդ ժամից խավար եղավ երկրի վրա մինչև իններորդ ժամը» (Մատթ. Իհ 45):

Մարկոսը նաև ժամն է ասում, թե երբ խաչվեց, և թե երբ խավար եղավ, այնպես ինչպես Մատթեոսը: Ղուկաս ժամը չի ասում, բայց խավար լինելն ասում է, իբրև արեգակի խավարում (հմմտ. Ամովս Ը 9):

Եվ ինչպե՞ս էր հնարավոր լուսնի լրման ժամանակ արեգակի խավարում, քանզի գատիկը լուսնի լրմանն էր լինում տասնչորսերորդ օրը, բայց թերևս Արարչի չարչարանքների պատճառով փառավոր հրաշք եղավ և արեգակը խավարեց բնական [օրենքներից] դուրս: Իսկ Հովհաննեսը ո՛չ խաչելության ժամն է ասում, ո՛չ էլ խավարի մասին է հիշում:

«Եվ իններորդ ժամին Հիսուս բարձր ձայնով գոչեց ու ասաց. «Էլի՛,

Էլի՛, լա՞մա սաքաթթանի», այսինքն՝ Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մատթ. Իհ 46):

Եվ ինչո՞ւ թողեց, կհարցնի մեկը: Բայց կարծեմ այսպես պետք է հավանալ:

Ձայնով գոչեց, թե Հայրը կամենում է ինձ թողնել, որպեսզի մարդարեններից հետո Նրա դեմ այսչափ մեղանչած ժողովուրդներն արժանապես մեկուսացվեն լույսից և լինեն խավարի մեջ, և Նրա պատվական արյունը հեղվի հեթանոսների համար:

«Եվ ննջեցյալ բազում սրբերի մարմիններ հարություն առան ու Նրա հարությունից հետո գերեզմաններից ելնելով՝ մտան սուրբ քաղաքը և շատերին երևացին» (Մատթ. Իհ 52-53):

«Սուրբ քաղաք» վերին Երուսաղեմն է անվանում, ինչպես բացատրեց նախկին մեկնիչներից մեկը: Բայց ասածի վերաբերյալ ինձ թվում է, թե «շատերին երևացին» ասելով՝ այս երկրավոր Երուսաղեմի [մասին] է ասում:

Բայց արդյոք ինչո՞ւ սուրբերը Նրա հարությունից հետո [միայն] մտան սուրբ քաղաքը և ոչ նույն ժամին: Որովհետև, նախ հարկ էր, որ մեռելներից Անդրանիկն երևա շատերին և ապա մյուսները, ովքեր կերպարանակից եղան Նրա մահվանն ու հարությանը:

## ԺԴ

«Շաբաթ օրվա երեկոյան, երբ կիրակին լուսանում էր, Մարիամ Մագդաղենացին և մյուս Մարիամը եկան գերեզմանը տեսնելու» (Մատթ. ԻԸ 1):

Հարության ժամի վերաբերյալ, թե ո՞ր ժամին հարություն առավ, ամենքին էլ անհայտ է: Մաթեոսն ասում է. «Շաբաթ երեկոյան, երբ կիրակին լուսանում էր», իսկ Հովհաննեսի ասելով՝ «Մարիամ Մագդաղենացին առավոտյան արշալույսին է [գերեզման] գալիս»: Ղուկասը հաստատապես [ասաց] «կիրակի օրը՝ առավոտյան շատ վաղ», իսկ Մարկոսը նույնը, ինչպես և Ղուկասը (տե՛ս Հովհ. Ի 1, Ղուկաս, ԻԴ 1, Մարկոս, ԺԶ 2):

Եվ ինչու էր, արդյոք ինչո՞ւ ավետարանիչները գանազան ժամեր ասացին. ուրիշ [մեկնիչներն] ինչ լինչ պատճառներ բերելով պատասխանեցին [այս հարցին], իսկ ես այսպես գիտեմ, թե համաձայն Քրիստոսի նախախնամության և մարդասիրության՝ իր ծառաների համար [այսպես արեց], քանզի եթե բոլորինն էլ նույնը լիներ, ապա հերձվածողներից

և Հեթանոսներից ոմանք կասեին, թե ամենքը միաբանվեցին, և այդ պատճառով նույնը Հայտնեցին: Թվում է՝ թե այս պատճառով ավետարանիչները [խոսքերը] մի փոքր զանազանվեցին: Արդ, նրանց զանազանութունը մի կողմ թողնելով՝ անցնենք առաջ:


*«Եվ ահա մեծ երկրաշարժ եղավ, որովհետև Տիրոջ Հրեշտակը, երկնքից իջնելով, դռնից վեժը մի կողմ գլորեց ու նստեց նրա վրա» (Մատթ. ԻԸ 2) և այլն:*

Գրված է, որ խաչելության ժամանակ երկրաշարժ եղավ (տե՛ս Մատթ. ԻԷ 51), բայց ոչ մեծ իսկ այժմ գրված է՝ մեծ երկրաշարժ, քանի որ Հարությունը մեծ և սքանչելագույն է, քան խաչելությունը:

*«Եվ ահա ես ձեզ Հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 20):*

Եվ ե՞րբ եղավ առաքյալների Հետ մինչև աշխարհի վախճանը, քանի որ այն ժամանակ բոլորը վախճանվեցին: Այս մասին պետք է ասել, որ [խոսքը] ոչ միայն առաքյալներին է ուղղված, այլև նրանց աշակերտած բոլոր քրիստոնյաներին:

Փառք Քրիստոսին մեր Աստծուն. ամեն:



## ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԺԵ

*«Հիսուս Քրիստոսի՝ Աստծու Որդու Ավետարանի սկիզբը: Ինչպես որ գրված է Եսայի մարգարեի գրքում» (Մարկ. Ա 1-2):*

Ըստ Մարկոսի այս ավետարանը ոչնչով չի զանազանվում Մատթեոսի [ավետարանից], այդ պատճառով այս մեկնությունը Համառոտ ենք ասում, քանի որ ավելորդ ենք Համարում մեկ անգամ ասվածները՝ նույնությամբ, կրկնել:

*«Եվ մի երիտասարդ գնում էր Հիսուսի ետևից՝ իր մերկ մարմնի վրա մի սավան գցած: Եվ երիտասարդները նրան բռնեցին, և նա թողնելով Հագի կտավները՝ մերկ փախավ» (Մարկ. ԺԴ 51):*

Ուրիշներն այլ կերպ [մտածելով] այս ճառի մեկնության վերաբերյալ՝ շեղվեցին, իսկ ես այնպես եմ ասում, ինչպես ժամանակագիրն է ասել. Մարկոսը Հանապազ մերկ էր գնում, միայն մի սավան վրան գցած: Հետագայում Քրիստոսի՝ դեպի խաչը գնալիս Հիսուսի ետևից գնում էր նաև նա, և Հրեաները, նրան գտնելով, ցանկանում էին բռնել, իսկ նա, թողնելով կտավները, մերկ փախավ նրանցից:



## ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

ԺԶ

«Քանի որ շատերը ձեռնարկեցին գրել պատմությունը» (Ղուկ. Ա 1):  
[Այնպես], ինչպես հնում [չատերն] էին խոստանում մարգարեութուն գրել. և ոմանք ճշմարտապես էին [գրում], իսկ ոմանք էլ՝ ստույթյամբ, ինչպես Անանիան՝ Ազարի որդին [ստույթյամբ մարգարեացավ] (տե՛ս Երեմ. ԻԸ 15-17), այնպես էլ ներկայումս շատերը ավետարան գրեցին, ոմանք՝ ստույթյամբ և ոմանք՝ ճշմարտապես:

«Ովքեր սկզբից խոսքի ականատեսներն ու սպասավորները եղան» (Ղուկ. Ա 2):

Բանի ականատեսները նրանք էին, ովքեր Քրիստոսի խոսքերն էին գրում, իսկ սպասավորներ՝ ովքեր Նրա գործերն էին գործում:

«Նա Եղիայի Հոգով և գորությամբ պիտի գնա Նրա առջևից» (Ղուկ. Ա 17):

Եղիա [նշանակում է] Համբարձված, Հովհաննես՝ Տիրոջ առջևից ընթացող: «Եղիայի շնորհով և գորությամբ», այսինքն՝ նույնպես Սուրբ Հոգով, և ո՛չ թե Եղիայի Հոգով, որպեսզի չկարծես, թե մարմնից մարմին մարդկանց Հոգիների փոխադրում կա, ինչպես ոմանք ցնորվեցին ասելով:

«Որպեսզի Հայրերի սրտերը որդիներին դարձնի» (Ղուկ. Ա 17):

Ո՞ր Հայրերի որդիներին է ասում: Հայր էր Աբրահամը, և նրա սիրտը դեռևս դարձած էր դեպի մեզ, իսկ երբ նրա և նրա նմանների գործերը կատարենք, այն ժամանակ [նրա սիրտը] կդառնա դեպի մեզ, և իրեն որդիներ կդարձնի:

«Եվ խնդրելով տախտակ՝ գրեց. «Թող դրա անունը Հովհաննես լինի» (Ղուկ. Ա 63):

Հովհաննես թարգմանվում է Աստծու շնորհ և Աստծու ձայն, իսկ Ջաքարիա՝ Աստծու հիշողություն, Եղիաբեթ՝ իմ Աստծու յոթներորդ: Արդ՝ Աստծու շնորհը ծնեց Հովհաննեսին Աստծու հիշողությունից, Հին Կտակարանի յոթնյակի ավարտին:

«Եվ քո իսկ Հոգու միջով սուր պիտի անցնի» (Ղուկ. Բ 35):

Մարգարեացավ Մարիամի գայթակղվելու մասին Քրիստոսի խաչվելու ժամանակ, ինչպես և առաքյալները, ովքեր թողեցին նրան ու փախան, գայթակղվելով [այն մտածումով], թե Նա Աստծու Որդին էր:

«Որպեսզի բազում սրտերի խորհուրդներ Հայտնի դառնան» (Ղուկ. Բ 35):

Որպեսզի չմնան գաղտնի, այլ Հայտնի դառնալով՝ կորչեն բոլոր գայթակղությունները:

«Իսկ մանուկն աճում և զորանում էր Հոգով և իմաստությամբ լցված» (Ղուկ. Բ 52):

Որպես մարդն է աճում ու զորանում Հոգով և իմաստությամբ լցված:

«Եվ ինքը Հիսուս շուրջ երեսուն տարեկան էր, և ինչպես կարծվում էր, որդին էր Հովսեփի, և աս՝ Հեղիի, [և աս] Մատթեի» (Ղուկ. Գ 23):

Մատթեոսը Հակոբին է անվանում Հովսեփի Հայր, իսկ Ղուկասը՝ Հեղիին: Արդ ասվում է, թե Հովսեփը երկուսին էլ որդի էր, Հակոբին՝ բնությամբ և Հեղիին՝ որդեգրությամբ:

Հեղին և Հակոբը եղբայրներ էին, ոչ թե մի Հորից, այլ մի մորից: Եվ Հեղիի անգավակ վախճանվելուց հետո Հեղիի կնոջն առավ Հակոբը, որպեսզի իր եղբորը գավակ հասցնի՝ ըստ Մովսեսի հրամանի: Արդ, Հակոբը, առնելով իր եղբոր՝ Հեղիի կնոջը, ծնեց Հովսեփին:

Արդ, Հովսեփը Հակոբի որդին է բնությամբ և Հեղիի՝ ըստ Մովսեսի հրամանի: Եվ Մատթեոսը ազգահամարի կարգը գրելիս, հոր [անունն] ասում է ըստ բնության, իսկ Ղուկասը՝ համաձայն Մովսեսի օրենքների: Եվ վերջից սկսելով՝ ազգաբանությունը հասցնում է Հովսեփին՝ մինչև Դավիթ, ապա Աբրահամից՝ Ադամին և Աստծուն:

«Եվ ինքն չըջում էր քաղաքներում և գյուղերում՝ քարոզելու և ավետարանելու Աստծու արքայությունը» (Ղուկ. Ը 1):

Գյուղերում չըջելը, քարոզելն ու ուսուցանելը ցույց են տալիս անտունների, արքատների և տառապյալների նկատմամբ [Նրա] մարդասիրությունը:

«Ո՛չ ոք ճրագը վառելով այն չի թաքցնի անոթի տակ կամ մահիճի տակ չի դնի, այլ աշտանակի վրա, որպեսզի ուղքեր մտնեն, լույսը տեսնեն» (Ղուկ. Ը 16):

Սա չի ասում տեսանելի ճրագի համար, այլ իմանալի՝ [ճրագի] Բանի ուղիղ վարդապետության մասին, որը չի թաքցվում որևէ անոթով, կամ մարմնի տակ, այլ [դրվում է] իր աշտանակի վրա: Տան անոթը հոգու գործություններն են, մահիճները՝ մարմինները: [Ներա] մտնողները, ճշմարիտ լույսի, Բանի վարդապետության լսողներն են:

«Ով որ ունի, նրան կտրվի, իսկ ով որ չունի և այն, ինչ որ նա կարծում է, թե ունի, նրանից կվերցվի» (Ղուկ. Ը 18):

Նա, ով որ ունի ճրագը և դնում է աշտանակի վրա, նրան կտրվի գաղտնիքն ու անհայտը, իսկ ով չի վառում և չի դնում աշտանակի վրա, թեպետև կարծում է թե ինչ-որ բան գիտի, հանդիմանվելով կզրկվի, որպեսզի ստությամբ չուսուցանի:

«Եվ պատմեցին նրան ու ասացին. «Քո մայրը և Քո եղբայրները կանգնել են դրսում» (Ղուկ. Ը 20):

Գուցե «մայրը և եղբայրները» խորհրդանշում են Հին կտակարանի ժողովարանը, ուղքեր չընդունեցին Քրիստոսի խոսքը: Իսկ եթե Մարիամի և եղբայրների՝ Հովսեփի որդիների մասին էր ասվածը, ինչն<sup>օ</sup> էլ ասում. «Իմ մայրը և եղբայրները նրանք են, ուղքեր լսում են Իմ խոսքը և կատարում»: Մի<sup>օ</sup> թե մայրը և եղբայրները չէին լսում ու կատարում Նրա խոսքը:

«Եվ նրանց ասաց. «Եկե՛ք ծովակի մյուս կողմն անցնենք» (Ղուկ. Ը 22) և այլն:

«Ծովակը» մեր կյանքի ակիքներն են, իսկ մրրիկը նրանք են, ուղքեր ակեղծվում են սուտանուն գիտության ամեն խոսքով:

## ԺԷ

«Եվ երբ աշխարհից Նրա վերանալու օրերը լրանում էին» (Ղուկ. Թ 51):

Նրա՝ իմաստությամբ, հասակով և շնորհով հասունանալու [հետ միասին] լրանում էին Նրա վերանալու օրերը:

«Եվ մինչդեռ նրանք գնում էին ճանապարհով, մեկը Նրան ասաց. «Տե՛ր, կգամ Քո ետևից, ուր էլ գնաս»: Հիսուս նրան ասաց. «Աղվեսները որջեր ունեն, և երկնքի թռչունները՝ բույն, բայց Մարդու Որդին գլուխը դնելու տեղ չունի» (Ղուկ. Թ 57):

Ինչպես Մատթեոսն է ասում, ասողը դպիրներից էր, թե. «Քո ետևից կգամ» (Մատթ. Ը 19), իսկ դպիրներին ասվեց. «Վա՛յ ձեզ, դպիրներից և փարիսեցիներից» (Մատթ. ԻԳ 13): Այդ իսկ պատճառով ասաց, թե [դպիրները] աներևույթ աղվեսների և թռչունների որջ և բնակավայր են. Մարդու Որդին քո և քեզ նմանների մոտ իր գլուխը դնելու տեղ չունի:

«Եվ Նա ասաց. «Թող ինձ նախ գնալ թաղել իմ հորը» (Ղուկ. Թ 59): [Այս մասին] ասվեց Մատթեոսի [ավետարանի] մեկնությունում, թե մեռյալ ասաց նրանց, ուղքեր մեղքերով են մեռած, թեպետ դեռևս հոգիները մարմիններից չեն ելել:

«Մեկ ուրիշն էլ նրան ասաց. «Քո ետևից կգամ, Տե՛ր, բայց նախ հրամայիր հրաժեշտ տամ իմ տանը»: Հիսուս նրան ասաց. «Ոչ ոք իր ձեռքը մածի վրա չի դնի և սպա ետ նայի, եթե շահեկան է երկնքի արքայությունը» (Ղուկ. Թ 61-62):

Ինչպես մեկը, ով կամենա վարել, թողնելով վարը [հեռանա], անպիտան է, որովհետև պտղին չի հասնում, այնպես էլ ով ատանում է առաքելության սկիզբը և [սպա] չըջվում է, [նա] անպիտան է և չի շահի երկնքի արքայությունը:

«Այնուհետև Տերը ընտրեց ուրիշ յոթանասուներկու հոգի ևս» (Ղուկ. Ժ 1):

Նախ տասներկուսին ընտրեց, որպեսզի դատավորներ լինեն՝ Իսրա-

յելի տասներկու ցեղերին դատելու համար: Եվ այնուհետ ընտրեց] յոթանասուներկուսին, որպեսզի դատեն հեթանոսների յոթանասուներկու ազգերը, որովհետև ջրհեղեղից հետո Նոյի որդիներից յոթանասուներկու ազգեր ավուվեցին բոլոր մայրցամաքների և կղզիների վրա:

*«Հունձը առատ է» (Ղուկ. Ժ 2):*

[Այս մասին արդեն] ասվել է Մատթեոսի [ավետարանի] մեկնությունում:

*«Ճանապարհին ոչ ոքի ողջույն մի՛ տվեք» (Ղուկ. Ժ 4):*

Ձեր քարոզություն ճանապարհին [ողջույն] մի՛ տվեք անպիտաններին և անարժաններին, այլ [ձեր ողջույնը] պահեք արժանավորներին ողջունելու և խաղաղություն [մաղթելու համար]:

*«Քաղաքը որ մտնեք և ձեզ չընդունեն, երբ դուրս գաք նրա հրապարակները, ասացե՛ք. «Ձեր քաղաքից մեր ոտքերին կպած փոշին անգամ թոթափում ենք ձեզ վրա» (Ղուկ. Ժ 10-11):*

Մատթեոսը այլ կերպ է ասում. «Քաղաքից ելնելիս ձեր ոտքերի փոշին թոթափեցեք» (Մատթ. Ժ 14), իսկ Ղուկասն ասում է. «Նրա հրապարակներում ասացեք. ձեր քաղաքից մեր ոտքերին կպած փոշին թոթափում ենք ձեր վրա», որովհետև չընդունեցիք մեր քարոզությունը: Արդ, անպարտ ենք: Ձեր վրա եղած փոշին՝ ձեր քաղաքի վարդապետներից [եղած] մեղքն ու անիրավությունը, մեզանից թոթափում ենք ձեզ վրա:

Իսկ ըստ Մատթեոսի, ինձ թվում է, թե հետևյալ նշանակությունը [ունի]. ոտքը հողու վերջին և ամենատար գործությունն է, ուստի և Քրիստոս աշակերտների ոտքերն էր լվանում և ոչ ձեռքերը և գլուխը: Հետևաբար ասում է, երբ ելնեք քաղաքից, ուր ձեզ չընդունեցին, նրանց աղտը, որ կպել է ձեր ամենավատթար և տկար անդամներին՝ [ոտքերին], թոթափեցեք նրանց վրա. և [զերծ մնացեք նրանց] կերակուրներից և հակառակություն ու տրտմություն ուրիշ գործերից, որպեսզի ամբողջովին սրբված ելնեք, և նրանք որպես անարժաններ չօգտվեն:

*«Ամեն ինչ ինձ տրվեց իմ Հորից. և ոչ ոք չգիտե, թե ո՛վ է Որդին, եթե ոչ՝ Հայրը, և թե ո՛վ է Հայրը, եթե ոչ՝ Որդին» (Ղուկ. Ժ 22):*

Այստեղ հանդիմանում է Մարկոսին, ով ասաց. «Երկու երկինքները [պատկանում են] միայն Որդուն և ոչ՝ Հորը»: Սակայն եթե չէին պատկանում Հորը, ինչպես տրվեց Որդուն, ըստ խոսքի. «Տրվեց ինձ իմ Հորից»: Ուստի ոմանք Աստծու մասին կարծեցին, թե Արարիչն է Տիրոջ ու Դատավորի, և ո՛չ Հայր՝ Որդուն: Այդ իսկ պատճառով մերժելով նրանց կարծիքը՝ ասաց. «Ամեն ինչ ինձ տրվեց իմ Հորից. և ոչ ոք չգիտի, թե ո՛վ է Որդին, բայց միայն Հայրը, և ում Հայրը կհայտնի, և ոչ ոք չգիտի Հորը, բայց միայն Որդին, և ում Որդին կկամենա հայտնել»:

*«Հիսուս պատասխանելով ասաց. «Մի մարդ Երուսաղեմից Երիքով էր իջնում և ընկավ ավազակների ձեռքը» (Ղուկ. Ժ 30) և այլն:*

Մարդը, որ իջնում էր Երուսաղեմից Երիքով, Ադամն է և նրա նման հանցանք [գործած] բոլոր մեղավորները: Իսկ Երուսաղեմը դրախտն է, որից արտաքսվեցին: Երիքովը աշխարհն է, ուր ելան դրախտից: Ավազակները սատանան է և նրա գնդերը: Մերկությունը՝ փառքից և անմահությունից զրկվելն է, վերքերը՝ մեղքն ու բոլոր հանցանքները: «Թողելով կիսամահ»՝ քանզի մեռավ մեղքերով վերավորված:

«Կիսամահ»՝ նրա համար, որպեսզի «սամարացու», այսինքն՝ Փրկչի, գալստյան ակնկալությունը վերստին կենդանացներ: Քահանան և դևտացին մարգարեներն են, ինչպես թվում է ինձ, և վարդապետները, որոնք Քրիստոսից առաջ էին: «Սամարացին» Քրիստոսն է: «Սամարացի կոչվեց և դիվանար, շատում է Գրիգորը, ղեկավարեց նրան, ով իջնում էր Երուսաղեմից Երիքով և ընկավ ավազակների ձեռքը»: «Ձեթը» ողորմություն է, որն արեց նրա վրա: «Գինին» ուրախություն է, որը ընծայվեց [ի նշան] ավազակներից փրկվելու:

«Գրաստը», որի վրա դրեց [սոչտանգվածին], Իր մարմինն է, որով վերացրեց աշխարհի մեղքերը: «Պանդոկն» Աստծու Եկեղեցին է, իսկ «պանդոկապետն» առաքյալներն են և նրանց նմանները՝ Եկեղեցու վարդապետները: «Երկու դահեկանները» Հին ու Նոր Կտակարաններն են: Սամարացու «երկրորդ անգամ դարձը» Քրիստոսի երկրորդ գալուստն է, երբ յուրաքանչյուրին պիտի հատուցի ըստ իր գործերի. առաքյալներին և այլ վարդապետներին՝ արքայություն պատկառելու, քանզի ջանացին և վաստակած ճգնությունը Ադամի որդիներին դարձրին ղեկի բարեպաշտություն:

«Եվ մինչ նրանք գալիս էին, Հիսուս մտավ մի գյուղ, և Մարթա անունով մի կին՝ Նրան ընդունեց իր տան մեջ: Նրա քույր Մարիամը նստեց Հիսուսի ոտքերի առաջ և լսում էր Նրա վարդապետությունը. իսկ Մարթան սպասավորելու պատճառով խիստ գբաղված էր» (Ղուկ. Ժ 38-40):

Մարթան խորհրդանշան է գործնական և տեսական իմաստություն, իսկ Մարիամը՝ բանական: Եվ երկուսն էլ հետևում են միմյանց: Այսօրինակ՝ բանականը կատարյալ է առանց գործնականի, և ոչ էլ գործնականը՝ առանց բանականի: Այդ իսկ պատճառով Ղուկաս ավետարանիչը Գործք Առաքելոցում ասում է. «Սկսեց Հիսուս գործել և ուսուցանել» (Գործք Ա 1): Մարթան խորհրդանշում է այնպիսիին, որն իր տան՝ հոգու մեջ, ընդունում է Քրիստոսին նյութապես և մարմնապես, իսկ Մարիամը՝ նրանց, ովքեր հոգեպես են ընդունում Քրիստոսին իրենց հոգու և տան մեջ:

Հնարավոր է նաև Մարթայով հրեա ժողովրդին խորհրդանշել, որը այժմ էլ ճգնում է տառի վրա, որը սպանում է, իսկ Հոգին, որ սպրեցնում է, չի ընդունում և խնդրում: Իսկ Մարիամը հեթանոսաց Եկեղեցու [խորհրդանշան է], որ թողնելով և արհամարհելով աստվածային գրքերի տերևը՝ [տառը], (տե՛ս Մատթ. ԻԱ 19) ընտրում է պտուղը՝ գեղեցիկ բաժինը, ըստ խոսքի. «Ինչո՞ւ ես հոգ տանում և աշխատում շատ բաների վրա, [մինչդեռ] մե՛կ բան է պետք» (Ղուկ. Ժ 41): Այսինքն՝ ինչո՞ւ ես ջանում և աշխատում բազում օրենքների և պատվիրանների վրա, [մինչդեռ] մե՛կ բան է պետք, որից կախված են և [որով] կատարվում են բոլոր օրենքներն ու պատվիրանները (տե՛ս Մատթ. ԻԲ 40). «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով» (Հմմտ. Ղուկ. Ժ 27):

[Նաև] կարելի է [այսպես] իմանալ. Մարթան այնպիսիներն են, ովքեր Քրիստոսին ընդունեցին իրենց տանը՝ իրենց հոգիների մեջ, սակայն դեռևս հրեաբար ապրում են հին խմորից չձեբբազատված, իսկ Մարիամը, որ գաղտնի հրեան է, վերինն է խնդրում և ոչ երկրայինը:

«Եվ Հիսուս նրանց ասաց. «Ձեզնից ո՞վ է, որ բարեկամ ունենա, գնա նրա մոտ կեղիչներին և ասի նրան. սիրելի՛, ինձ երեք հաց փոխ տո՛ւր, որովհետև իմ սիրելին ճանապարհորդությունից եկավ ինձ մոտ» (Ղուկ. ԺԱ 5-6):

Հիսուսի աշակերտների սիրելին ու բարեկամը Հայր Աստված է և Քրիստոս՝ Աստծու Որդին: «Կեղիչները»՝ կարճ կյանքի [ընթացքը], որի ժամանակ մտնում է ոչնչացնողը (Հմմտ. Ելք ԺԲ 23), քննելով կենաց խոսքը...:

...Այսպիսի գորությունները թեպետև անարգվում են անպիտաններից և վաճառվում երկու դահեկանի՝ Հիմարությունք և լրբությունք, սակայն նրանցից ոչ մեկը Աստծուց մոռացված չէ:

«Նայեցե՛ք ազուավներին, որոնք ո՛չ սերմանում են և ո՛չ հնձում» (Ղուկ. ԺԲ 24):

Հարյուր քառասունվեցերորդ Սաղմոսում ասվեց. «[Նա], որ ուտելիք է տալիս բոլոր անասուններին, ազուավի ձագերին, որոնք դիմում են իրեն», (Սաղմ. ՃԽՁ 9) նաև Հոբի [գրքում է ասվում] «Ո՞վ է ազուավների համար կերակուր պատրաստել» (Հոբ. ԼԸ 41):

Ազուավի ձագերի մասին պատմությունը հետևյալն է. երբ ձագերը դուրս են գալիս ձվերից, հայրն ու մայրը հեռանում են մոռանալով ձագերին: Ծնողների մոռանալու և նրանց չկերակրելու ժամանակ Աստծու բազում ինամակալությունք [ձագերի] կտուցի շուրջբոլորը խոնավություն է գոյանում, որից որդեր են ծնվում ու հավաքվում նեխած խոնավության մեջ, Նաև այլ շնչավորների՝ ճանճեր, մժեղներ ու բազում այսպիսիներ: Եվ բոլոր [ձագերն էլ] ճանճերով են կերակրվում, մինչև կարողանան թռչել և որսալ իրենց կերակուրը:

Այսքանը՝ այդ պատմության մասին: Ազուավ և ազուավի ձագեր [ասելով] ակնարկում է [այն] մեղավորներին, ովքեր իրենց ամբողջ սրտով գոչում են Տիրոջը, և [Տերը] տալիս է նրանց հոգու կերակուրը:

«Եվ թող ձեր մեջքները լինեն գոտեպնդված, և ճրագներդ վառված՝ ձեր ձեռքերում» (Ղուկ. ԺԲ 35):

Ովքեր սրբությունք և զգաստությունք են ապրում, նրանց մեջքերը «գոտեպնդված» են: Ու քանի որ այս կյանքը գիչեր է և ճրագ է անհրաժեշտ, ապա «ճրագը» [մեր] միտքն է՝ հոգու աչքը:

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ նա գոտի կկապի մեջքին, սեղան կնստեցնի նրանց» (Ղուկ. ԺԲ 37):



Համաձայն ասվածի՝ «Ձորություն հագավ Տերն ու գոռեովեց» (Սաղմ. ՂԲ 1), նաև՝ «Իր մեջքը գոռեորելով արդարությամբ» (Եսայի ԺԱ 5), որով յուրաքանչյուրին ըստ արժանիքների կ'նստեցնի և ըստ արժանիքների կ'սպասավորի:

«Եվ կանցնի, շատում է, - նրանց սպասավորելու» (Ղուկ. ԺԲ 37): Տերը, զանց առնելով տեսանելի [արթնությունը], սպասավորում է այնպիսիներին, որոնք հոգևոր արթնության մեջ են:

«Եթե երկրորդ կամ երրորդ պահին դա» (Ղուկ. ԺԲ 38):

Մարդու [կյանքի] առաջին և երկրորդ պահը մանկության և երիտասարդության հասակն է, երրորդը՝ ծերությունը: Արդ, հրամայում է արթուն լինել ամեն հասակում, որպեսզի արժանանան նստել և սպասավորվել Տիրոջ կողմից:

«Եվ Տերն ասաց. «Ո՞վ է այն հավատարիմ և իմաստուն տնտեսը, որին իր Տերը իր ծառաների վրա վերակացու կարգեց» (Ղուկ. ԺԲ 42):

Սրբի պաշտամունքն ու հնազանդությունն այն է, որ սպասավորի և ծառայի Աստծուն, ինչպես և Մովսեսն է ասվում Աստծու ծառա և պաշտոնյա: Այլև Աստված տեսնում է իր ծառաներին:

«Նրան, ում շատ է տրված, նրանից շատ էլ կպահանջվի, և ում շատ է ավանդված, նրանից ավելին կպահանջվի» (Ղուկ. ԺԲ 48):

Բոլորին հավասար չի տրված և բոլորին հավասարապես չի ավանդված: Քրիստոսից տրվեց և ավանդվեց Պետրոսին ու Ղուկասին, բայց ոչ հավասարապես, ուստի և ավելին կպահանջվի Պետրոսից:

«Երկրի վրա կրակ գցելու եկա. և ինչքան եմ կամենում, որ արդեն իսկ բորբոքված լինի: Եվ մի մկրտություն ունեմ մկրտելու և ինչպե՛ս եմ շտապում, որ կատարվի: Կարծում եք, թե երկրին խաղաղությո՞ւն տալու եկա» (Ղուկ. ԺԲ 49):

[Սա այն] խաղաղությունն է, որն ունի հոգին մարմնում: [Տերը] հուր է գցում մարմինների մեջ՝ [այն] անվանելով երկիր, որպեսզի մոխրացնի մարմնի խորհուրդները և ոչնչացնի խոտը, փայտը և եղեգը՝ մարմնի վատթար խորհուրդներն ու մտքերը, քանզի ասում է՝ «Աստված

ոչնչացնող կրակ է» (Թ Օր. Դ 24): Այս հուրը ներգործելով մեզ վրա՝ մեր ճրագները վառվում են, և մեր լավատերերը չեն հանգչում:

«Որովեսու մեկ տան մեջ այսուհետև հինգ հոգի իրարից բաժանված պիտի լինեն, երեքը՝ երկուսից, և երկուսը՝ երեքից» (Ղուկ. ԺԲ 52):

Մեկ տան՝ յուրաքանչյուր մարմնի մեջ, հինգ զգայարաններ կան: Եվ քանի դեռ [այդ] հինգ զգայարանները չեն ընկալել վարդապետության խոսքը, միաբան են, իսկ երբ ընդունեն, այնժամ կ'մեկուսանան տեսողությունն ու լսողությունը մյուս երեքից՝ հոտոտելիքից, ճաշակելիքից և շոշափելիքից:

Երբ զգայարանները ընդունեն վարդապետի խոսքը, այնժամ երկու զգայարանները՝ տեսողությունն ու լսողությունը, որոնք իմաստասիրական են և բանական, կբաժանվեն երեք մարմնականներից. քանզի հոտոտելիքը, ճաշակելիքը և շոշափելիքը՝ ուսումնասիրության համար իմաստասիրապես ոչնչով օգտակար չեն կարող լինել, այլ միայն՝ մարմնի կազմվածքի և հաստատության համար են:

Իսկ երկուսը՝ տեսողությունն ու լսողությունը, բաժանված են սրանցից և օգտակար են ոչ միայն [պարզապես] ապրելու, այլև իմաստասիրապես ապրելու համար: Քանի որ տեսողությամբ գիտենալով երկինքը, աստղերի դիրքն ու դրանց կարգը և ամբողջ աշխարհը, զարմանում ենք Արարչի [գործերի] վրա: Նույնպես և լսողությամբ ուսանում ենք ուղիղ վարդապետության խոսքը և ուսանելով ուրիշներին ենք ուսուցանում:

«Հայրը պիտի բաժանվի որդուց, և որդին հորից» (Ղուկ. ԺԲ 53):

Սա առանձին կարգա սկզբից՝ ոչնչով չկապելով նախորդի հետ: Սա այն է, որ ուսուցանում է հավատի բաժանումը անհավատությունից. «Հայրը բաժանվում է որդուց», բարի միտքը [բաժանվում] է վատթար խորհուրդից՝ նրան չհավանելով: «Եվ որդին՝ հորից», որ չի թաղում մեռած հորը (տե՛ս Մատթ. Ը 21-22): «Մայրը՝ աղջկանից», չընդունելով հետին ու անպիտան իր պտուղը: «Աղջիկը՝ մորից» նյութից, որին չի միավորվում հոգին: «Սկեսուրը իր հարսից», որ մարդու՝ հոգու հանդեպ անօրեն է գտնվել, որ նման է մորը: «Հարսը իր սկեսրոջից». ժողովուրդը, որ հանցանքների պատճառով զրկվեց հոգուց:

ԺԸ

«Եվ Հիսուս ասաց. «Մի մարդ մեծ ընթրիք պատրաստեց, և Հրավիրեց շատերին: Ընթրիքի ժամին իր ծառաներին ուղարկեց կանչելու Հրավիրվածներին» (Ղուկ ԺԴ 16-17):

«Ծառան» Քրիստոսն է, որովհետև բոլորին Հրավիրելու և փրկելու Համար ծառայի կերպարանք առնելով՝ ծառայեց Հորը, ու չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու (Մարկ. Ժ 45): Եվ ասաց՝ «Ես ձեր մեջ չեմ բազմած, այլ սպասավոր եմ» (Հմմտ. Ղուկ. ԻԲ 27): Իսկ «ընթրիքի ժամը» առաջին գալուստն է:

«Առաջինն ասաց. «Ազարակ գնեցի...» (Ղուկ. ԺԴ 18):

Չկամեցան գալ ընթրիքի նրանք, ովքեր գնեցին ազարակ, [այսինքն] սովորեցին աստվածաշունչի օտար աղանդի [ուսմունքը]: Այդպիսին կարիք ունի բարձրանալու և տեսնելու ազարակը, այսինքն՝ փորձելու և քննելու հավատի աղանդը, որը ձեռք բերեց:

«Եվ մյուսն ասաց. «Հինգ գույգ եզներ գնեցի, և գնում եմ դրանք փորձելու» (Ղուկ. ԺԴ 19):

Հինգ գույգ ասվեց, որ թողած իմանալի և մտավոր զգայությունները, միայն մարմնեղեն Հինգ զգայություններով է իմաստասիրում:

«Իսկ մյուսն ասաց. «Կին եմ առել, դրա Համար էլ չեմ կարող գալ» (Ղուկ. ԺԴ 20):

Ասաց կին եմ առել, [այսինքն] ո՛չ թե իմանալի և հոգևոր իմաստություն, այլ մարմնավոր, նաև այս աշխարհի զբաղմունքներն ու ցանկությունները:

«Եվ ծառան գալով այն պատմեց իր տիրոջը» (Ղուկ. ԺԴ 21):

Նա պատմում է Քրիստոսի ընթրիքից նրանց Հրաժարումը և աստվածային փրկության հեռացումը հրեաներից:

«Իսկույն դո՛ւրս եկ քաղաքի Հրապարակներն ու փողոցները» (Ղուկ. ԺԴ 21):

Սրանք բոլոր հեթանոսներն են: Ովքեր «նստած» են, նրանք են, որ ընդարձակ ճանապարհով էին գնում, և իրենց կյանքը վարում էին առանց վարդապետության և հավատի: «Ու փողոցները», ովքեր երբեմն արդար էին կարծում իրենց չար ընթացքը:

«Քաղաքը» երկրային աշխարհն է: «Աղքատները, խեղանդամները, կաղերը, կույրերը» այս աշխարհի հիմարներն են: «Աղքատներն» աստվածաշունչից աղքատացածներն են:

Նույն օրինակով իմացիր «խեղանդամների, կույրերի և կաղերի» վերաբերյալ. սրանք չէին տեսնում և չէին ընթանում ըստ ճշմարիտ իմաստության:

«Եվ Տերը ծառային ասաց. «Դո՛ւրս եկ ճանապարհների ու ցանկապատների առաջ և մարդկանց այստեղ մտցրո՛ւ» (Ղուկ. ԺԴ 23):

Ընթրիքի կանչվեցին նրանք, ովքեր քաղաքի փողոցներում և Հրապարակներում էին նստած: [Ապա Տերը] Հրամայեց կանչել նաև նրանց, ովքեր քաղաքից դուրս էին:

Եթե «քաղաք» անվանեցին երկրավոր աշխարհը, [սալա] ովքե՞ր էին քաղաքից դուրս [գտնվողները], որոնց Հրամայեց կանչել. կարծում եմ, թե սրբերի հոգիներն էին, ովքեր դժոխքում արգելված էին, և որոնց ազատեց Քրիստոս՝ Իր դժոխք իջնելով (Հմմտ. Ա Պետ. Գ 19):

«Եվ դառնալով նրանց ասաց. «Եթե մեկը ինձ մոտ գա և չատի իր հորը և մորը...» (Ղուկ. ԺԴ 26):

Եվ ինչպե՞ս է որ, Նա, Ով Հրամայեց սիրել թշնամիներին, Հրամայում է ատել Հորն ու մորը, եղբորն ու քրոջը, կնոջն ու որդիներին, այլև իր անձն իսկ:

Արդ, ինչպես ինձ թվում է, և ինչպես Մատթեոսն էլ է ասում, այս է Հորդորում. «Եթե մեկը [իր] հորը կամ մորը ինձնից ավելի է սիրում, ինձ արժանի չէ...» (Մատթ. Ժ 37), այլ [արժանի է նա՛, ով] առավելագույն սիրով և անքակտելի Հաստատությանը ինձ կսիրի և սպա իր հորը, մորը, եղբայրներին, կնոջը և որդիներին:

Քանզի նրանց սերը իմ սիրո Հանդեպ այնչափ մեղմագույն պիտի երևա, որ մինչև իսկ ատելություն թվա:

**ԺԹ**

*«Զեզնից ով է այն մարդը, որ, երբ Հարյուր ոչխար ունենա, և կորցնելով նրանցից մեկը, արոտավայրում չի<sup>օ</sup> թողնի իննսուներիննին և չի<sup>օ</sup> գնա կորուսյալի ետևից» (Ղուկ. ԺԵ 3-4):*

«Հարյուրը», որ կատարյալ թիվ է, մարդկային կատարյալ Հոգու խորհրդանիշն է: Իսկ «կորուսյալ ոչխարը» նա է, ով մեղքերով ու անօրենսություններով է կորուսյալ և որին Մարդու Որդին եկավ որոնելու և ապրեցնելու, կրելով իր ուսերի վրա, քանզի մեր անօրենսությունները և մեղքերը կրեց մարմնով՝ իր ուսերով, որոնց վրա խաչը կրելով՝ գնում էր դեպի չարչարանքները:

*«Կամ ո՞վ է այն կինը, որ երբ տասը դրամ ունենա, և մի դրամ կորցնի, ճրագ չի վառի և չի սրբի տունը փութով ու չի փնտրի» (Ղուկ. ԺԵ 8):*

Կինը խորհրդանշում է մարդու Հոգին: Նրա ունեցած տասը դրամները կատարյալ առաքինություններն են՝ միաբանությունը Հինգ Հոգեդեն և Հինգ մարմնեղեն գազյությունների, որոնցից եթե մի առաքինություն կորցնի, «կվառի ճրագը»՝ աստվածային խոսքը, որից աստվածային պատվիրանների հիշեցում է լինում. «Մի՛ շնացիր, մի՛ սպանիր, մի՛ գողացիր և քեզ օտար աստվածներ թո՛ղ չլինեն» (տե՛ս Ելք Ի 3-15): «Կավլի իր տունը»՝ մարմինը կարբի չարությունից, որը առաջացավ պատվիրանագանցությունից, «կկանչի իր բարեկամներին և Հարևաններին»՝ Համախառ և Հավատակից մարդկանց, «և նրանց կասի. «Ուրախացե՛ք ինձ Հետ, որով Հետև գտա իմ կորսված առաքինությունը»:

*«Եվ ասաց. «Մի մարդ երկու որդի ուներ. նրանցից կրտսերը Հորն ասաց. «Հայր, տո՛ւր քո ունեցվածքից ինձ Հասնող բաժինը»: Եվ նա ունեցվածքը բաժանեց նրանց» (Ղուկ. ԺԵ 11):*

Ինչպես որ առաջին երկու առակներում, այնպես էլ այս, մեղավորներին Հորդորում են ապաշխարություն: Իսկ ավագ և կրտսեր որդի [ասելով] պետք է գատորոշել բանական Հոգիների երկու տեսակները: Տակավին անմեղներին [խորհրդանշում է] երեց որդին, իսկ կրտսեր որդին՝ մեղավորներին, ովքեր զրկվեցին Աստծու փառքից:

Ոմանք ասացին՝ երեց որդին խրախուսյալ ժողովուրդն է, իսկ կրտսեր որդին՝ Հեթանոս ժողովուրդը: Բայց այս ինձ թվում է ոչ ճշմարիտ, քանզի որդեսեր Հայրը երեց որդուն ասաց, թե «Որդյակ, [դու] միշտ ինձ Հետ ես, և ամեն ինչ, որ իմն է, քոնն է» (Ղուկ. ԺԵ 31), իսկ խրախուսյալները բազում անգամ Հանցանք գործելով՝ միշտ Հոր Հետ չեղան: Իսկ Հեթանոս ժողովուրդը երբեք Հորից մաս չէր առել ու կորցրել:

Այլ ինչպես ասացին, երեց որդին խորհրդանշում է այն անձերին, ովքեր չեն մեղանչել, իսկ կրտսերը՝ այն անձերին, ովքեր մեղանչում են և ապաշխարում:

Սակայն մեկը կհարցնի՝ ի՞նչ պատճառով անառակ մարդիկ կրտսեր ասվեցին, իսկ արդարները՝ երեց. այս մասին պիտի ասեմ, թե առաքինություններից բաժանվելու և անառակության պատճառով կրտսեր կոչվեց իր եղբոր նկատմամբ, այլ ոչ ըստ ժամանակի և ոչ այնպես, ինչպես որևէ մեկը կխորհի ասել կարծելով, թե Հայրը, այժմ Փրկիչն է, որ աշակերտներին ասաց. «Իմ որդյակներ» (Հովհ. ԺԳ 33), և դառնալով՝ «Քաջակերվիլը դ՛ուստր, քո Հավատքը քեզ փրկեց» (Մատթ. Թ 22):

*«Գնաց Հեռու երկիր» (Ղուկ. ԺԵ 13):*

Արդարությունից և երկնային կյանքից [Հեռանալով՝ գնաց] դեպի այս խավար աշխարհի երկրային ցանկություններն ու զբաղմունքները:

*«Եվ վատնեց իր բոլոր ունեցվածքը՝ անառակ վարքով ապրելով» (Ղուկ. ԺԵ 13):*

Հայրը նրան ավանդեց առաքինության ինչքերը, իսկ նա, Հոր Հրամանը գանց առնելով, կորցրեց բոլոր առաքինությունները, ինչպես որ և ես, շարագրողս Քրիստոսից և նրա աշակերտներից ուսանելով աստվածային առաքինության բոլոր գործերը, Հեռացա անառակ գործեր վարելով:

*«Եվ այն քաղաքում սաստիկ սով եղավ» (Ղուկ. ԺԵ 14):*

Աստծու խնամակալության և Տիրոջ խոսքը լսելու սով եղավ, որպեսզի աղքատանալով ու չքավոր դառնալով ցանկանա Հոր մարդասեր Հեղությունը և վերադառնա յուրայիններին՝ Հոր մոտ:

**«Եվ նա սկսեց չքավորել» (Ղուկ. ԺԵ 14):**

Այսինքն թե՛ հասավ իր ցանկության մոռանալուն:

**«Եվ գնալով դիմեց այդ երկրի քաղաքացիներից մեկին» (Ղուկ. ԺԵ 15):**

Քաղաքացիներն այն «գավառի», որը հեռու է երկնային գավառից, սատանան և նրա դաշնակիցներն են:

**«Եվ նա ուղարկեց նրան իր ագարակը՝ խոզեր արածեցնելու» (Ղուկ. ԺԵ 15):**

Սատանայի արտը և ագարակը [այն վայրն է], ուր կան տնկիներ, որոնք չտնկեց երկնավոր Հայրը, և [ուր կան] խոզեր, որոնք տրորում են մարգարիտը և անցնում: Նա խոզեր էր արարածեցնում, [այսինքն՝ այն-պիսիներին], ովքեր մարմնական ցանկություններն են կատարում և թափափվում են մարդկային ախտի ժանտահոտության մեջ, նաև այնպիսիներին, ովքեր պիղծ հոգով են լցված և սերմանում են մարմինը, բայց ոչ հոգին:

**«Եվ ցանկանում էր հազենալ եղջերենու պտղով, որը խոզերն էին ուտում» (Ղուկ. ԺԵ 16):**

Բանական հոգին ցանկանում է վարդապետութուն, թեկուզև ոչ բարի խոսքից, միայն թե լինի վարդապետական խոսք: Այդ եղջերենի պտուղը քաղցր է և պարարտացնում է մարմինը, թեպետև աղիքների խցանում է առաջացնում, որը խորհրդանշում է նյութասերների և մարմնասերների խոսքերը, ովքեր ըստ իրենց լսած բարբաջանքների՝ մարմնական ցանկությունները բարի են ասում:

**«Եվ ոչ ոք [այդ] նրան չէր տալիս» (Ղուկ. ԺԵ 16):**

Հետինները խախտված ուսմունքը չեն ավանդում բարին փնտրողներին, որպեսզի չհանդիմանվեն:

**«Եվ խելքի գալով ասաց» (Ղուկ. ԺԵ 17):**

Որպես թմրած և թմրությունը թոթափած՝ Հիշում է Հոր երանելությունը: Վարձկան է կոչվում նա, ով ծառայում է մեկին՝ կա՛մ Ասածուն և կա՛մ այլ մեկին, և ծառայում է ոչ թե նրան սիրելու պատճառով, այլ

որ ծառայության փոխարեն վարձատրվելու ակնկալություն ունի:

**«Եվ կասեմ նրան. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի և քո առաջ» (Ղուկ. ԺԵ 18):**

«Մեղանչեցի երկնավորների առաջ», որովհետև թողած երկնավորների գործերը, երկրավորների [կողմը] բռնեցի: «Քո առաջ». որովհետև քո պատվիրանը զանց առնելով սատանային հարեցի:

**«Եվ վեր կացավ գնաց իր հոր մոտ» (Ղուկ. ԺԵ 20):**

Խոսքն ասելուն պես գործերն էլ կատարեց՝ վերջինները մոռանալով և առաջինների կողմը ձգտելով:

**«Եվ դեռևս նա հեռվից գալիս էր, հայրը տեսավ նրան և գթաց, ընդառաջ գնալով ընկավ նրա պարանոցով և համբուրեց նրան» (Ղուկ. ԺԵ 20):**

Տակավին հեռու էր, որովհետև հանցանքներից դեռ չէր ձերբազատվել: Եվ որովհետև գղջալով շտապում էր հոր մոտ, [հայրը] տեսնում է նրան և ընկնում նրա պարանոցով, որովհետև նա ազատվել էր սատանայի լծից, և նրան տալիս է համբուր՝ խորհրդանշելով որդու հետ միավորությունը:

**«Հայրն իր ծառաներին ասաց. «Անմիջապես հանեցե՛ք նրա նախկին պատմուճանը և հագցրե՛ք նրան, մատանին նրա մատը դրե՛ք և նրա ոտքերին կոշիկներ» (Ղուկ. ԺԵ 22):**

«Առաջին պատմուճանը» հոգու առաջին զարդն է, որով զարդարում և ուրախացնում է ապաշխարողներին և հանցանքների տրտմական անզարդությունը թոթափողներին: «Մատանին» նկարագրվել է, որ զարդարում է գործունյա մարդուն: «Կոշիկները» ո՛չ թե եզրիտացիներինն է, որ հրամայվում էր հանել [նրանց, ովքեր] ելնում ու քայլում էին սուրբ երկրի վրա (տե՛ս Ելք Գ 5), այլ այն, որ [հրամայվեց] հագնել սուրբ ավետարանի քարոզչության համար (տե՛ս Եփես. 2 15):

**«Եվ բերե՛ք պարարտ եզր, մորթեցե՛ք, որպեսզի ուտելով ուրախանաք» (Ղուկ. ԺԵ 23):**

«Պարարտ եզը» ողջախոհ վարդապետութեան խոսքն է, կամ Ինքն իսկ Քրիստոս՝ Աստծու Նոսքն ու Իմաստութեանը (Հմմտ. Ա Կորնթ. Ա 24), ինչպէս և Սողոմոնն է ասում. «Իմաստութեանը շինեց իր տունը և կանգնեցրեց յոթը սյուներ, մորթեց իր մասցուները...» (Առակ. Թ 1-2):

«Իսկ նրա ավագ որդին ագարակում էր» (Ղուկ. ԺԵ 25):

Ավագ որդին, ինչպէս և ասվեց, այն բանական բնութեանն է, որ մեղք չի գործել, այլ եղել է մշակ բարի ու պարարտ անդաստանում, հակառակ այն անդաստանին, ուր խոզեր կային:

«Եվ մինչ գալիս էր և տանը մոտեցավ, լսեց երգերի և պարերի ձայնը» (Ղուկ. ԺԵ 25):

Երաժշտական երգերը լինում են համաձայն (միաձայն) և կրկնաձայն (բազմաձայն): Արդ պարտ էր, որ որդու՝ Հոր մոտ վերադառնալիս և ապաշխարելիս համաձայն երգեր լսվեին և ոչ հակառակ ձայնով: Եվ համաձայն երգերն են աստվածաբանութեանները, գովեստները, օրհնութեանները և այլ այսպիսի զանազան երգերը, որոնք կատարվում են Աստծու փառքի համար:

«Ահա այսքան տարի ծառայեցի քեզ և երբեք քո հրամանները զանց չարեցի, և ինձ երբեք մի ուլ չտվեցիր» (Ղուկ. ԺԵ 29):

Իմացիր, որ սուրբ մարդկանց կյանքը անգործ և ավարդյուն չի [անցնում], այլ իրենց հոթեանը պատշաճող ծառայութեան ունեն:

«Ինձ մի ուլ իսկ չտվեցիր», քանի որ ուլ մորթելը բանական Հոգու համար է, որպեսզի բարձրացնի մեղավորին և հասցնի դեպի սուրբ կենդանութեան: Եվ չտվեց այն պատճառով, որ մեղավոր չէր ավագ որդին, դրա համար էլ կարիք չունեւ ուլ մորթելու և գոհելու:

«Երբ եկավ քո այս որդին, որ քո ունեցվածքը կերավ պոռնիկների հետ, ընդունեցիր» (Ղուկ. ԺԵ 30):

Նոսքերս վստահութեան արժանի են հետագա խորհականութեան համար: «Պոռնիկները» նյութական և մարմնական կյանքի զանազան չարութեաններն են:

«Որդյա՛կ, դու միշտ ինձ հետ ես» (Ղուկ. ԺԵ 31):

Հոր վկայութեանն է, թե երբեք չմեկուսացավ բարուց:

«Պետք էր ուրախանալ և ցնծալ, որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց» (Ղուկ. ԺԵ 32):

«Մեռած», քանի որ անառակութեամբ ավրելով վատնեց կենդանաբար գոյացութեանը: «Կորած», քանի որ կորստյան տանող «լայն և ընդարձակ ճանապարհով» էր գնում: Իսկ մտադրվելով Հոր մոտ գալ՝ կենդանացավ ու գտնվեց, թոթափելով մեռելութեանն ու կորուստը:

## Ի

«Ասաց աշակերտներին. «Մի մեծահարուստ մարդ տնտես ուներ, և նրա մասին ամբաստանութեան եղավ, իբրև թե վատնում է տիրոջ ունեցվածքը» (Ղուկ. ԺԶ 1):

Անիրավ տնտեսը խորհրդանշում է [այն] բոլոր մեղավորներին, ովքեր ներում են իրենց պարտապանների պարտքերը և առատապէս բաշխում են իրենց սիրելի մամոնային՝ Հարստութեան ու մեծութեան ինչքերը, կամ էլ ներելով պարտքերը իրենց սիրելիներ են դարձնում Հրեշտակներին ու արդարներին:

«Մի մեծահարուստ մարդ կար, որ բեհեզ ու ծիրանի էր հագնում» (Ղուկ. ԺԶ 19):

Ակնարկում է բոլոր [այն] մեծատուններին, ովքեր միայն մարմնական են Հոգում և զբաղված են երկրային գործերով: «Եվ մի աղքատ». ամեն մի Հոգով աղքատ, որոնց համար ասվեց. «Երանի՛ Հոգով աղքատների, որովհետև նրանցն է երկնքի արքայութեանը» (Մատթ. Ե 3):

«Եվ այս բոլորից բացի, մեծ վիճ կա մեր և ձեր միջև ընկած» (Ղուկ ԺԶ 26):

Ինչպէս գործերով միմյանցից մեկուսացած են արդարներն ու մեղավորները, այնպէս էլ կայաններով և տեղերով: Նաև այս իմացիր, որ առակը Հարստութեան է խորհրդանշում և ծանուցում է հանդերձյալ [կյանքի] մասին:

«Փարիսեցիների կողմից Հարցվեց, թե ե՞րբ պիտի գա Աստծու արքայութիւնը» (Ղուկ. ԺԷ 20): Եվ քիչ հետո ասաց. «Աստծու արքայութիւնը ձեր ներսում է» (Ղուկ. ԺԷ 21):

Հոգու ներգործութիւնները մեր մեջ և մեր ներսի գործութիւններում են, ինչպէս և ասում է, «Օրհնի՛ր Տիրոջը, ո՛վ իմ անձ, և իմ բոլոր ներքը թող օրհնի սուրբ անունը Նրա» (Հմմտ. Սաղմ. ձԲ 1): Արդ նրանց, որոնց մեջ ներգործութեամբ առկա է Քրիստոս, նրանց ներսում է Աստծու արքայութիւնը, իսկ որոնց մեջ ոչ թե ներգործութեամբ, այլ կարողութեամբ, նրանց մեջ ևս կարող է լինել Աստծու արքայութիւնը, թեկուզև դեռևս ներգործութեամբ չէ:

Նմանապէս և փարիսեցիների մեջ էր Աստծու արքայութիւնը, թեպէտև նրանք չէին գիտակցում, բայց եթէ Հավատային Քրիստոսին, թէ Աստծու Միածին Որդի է, ապա և ներգործութեամբ իրենցում կունենային Աստծու արքայութիւնը, ինչպէս որ Պողոս երանելին:

«Ասում եմ ձեզ, այն գիշեր, եթէ երկու Հոգի լինեն մի մահճի մեջ...» (Ղուկ. ԺԷ 34):

Այս և ինչ որ գրված է, մեկնվեց Մատթեոսի ավետարանում:

## ԻԱ

«Մի առակ էլ ասաց նրանց այն մասին, թե նրանք ամեն ժամ պետք է աղոթեն ու չձանձրանան: Ասաց. «Մի քաղաքում մի դատավոր կար. Աստուծոց չէր վախենում և մարդկանցից չէր ամաչում» (Ղուկ. ԺԸ 1):

Ոմանք Քրիստոսին վերագրեցին այս առակը, քանզի որպէս Աստված՝ Աստուծոց չի երկնում և մարդկանցից չի ամաչում, որովհետև անարգ ոչինչ չի գործել: Արդ, եթէ Քրիստոս արդարութեան Դատավորն է, և Նրա բոլոր ճանապարհները արդար են, և [իրոք դա] այդպէս է, Հետևաբար՝ ըստ ոմանց մեկնութեան՝ Քրիստոս անիրավ դատավոր է լինում, քանզի ավետարանիչը քիչ հետո ավելացնում է. «Լսեցե՛ք, թե ինչ էր ասում անիրավ դատավորը» (Ղուկ. ԺԸ 6): Եվ քանի որ այդպէս Հասկանալը Հետին Հիմարութիւնն է, և Հակառակ են միմյանց արդար ու անիրավը դատավորները, ապա պետք է մեկնել այսպէս:

Երկուսի՝ անիրավի և չարի մասին այստեղ պետք է Հասկանանք, որ

մեկն անիրավ դատավորն է, իսկ մյուսը՝ այրու ոտիւր, որ անիրավ դատավորի իշխանութեան տակ է: Եվ չարերի մեջ էլ է Հնարավոր, որ մեկն իշխի, իսկ մյուսը՝ ենթարկվի, ինչպէս և Բեդգբուրդը դեւերի իշխան կոչվեց:

Արդ, անիրավ դատավորը չերկնչեց Աստուծոց, քանզի Նրա Որդուն մատնեց խաչելու, իսկ Նրա մարգարեներին ու առաքյալներին՝ սպանելու, և մինչև այժմ իսկ քրիստոնյաների վրա Հալածանքներ է Հարուցում՝ Աստծու թույլտվութեամբ: Նա ամբարտաձան ու ամբարհաված դատավոր է և մարդկանցից էլ չի ամաչում՝ արհամարհելով մարդկային ցեղը:

Իսկ քաղաքի այրին մարդու Հոգին է, այրիացած Քրիստոսից, Ով էլ եկեղեցական Հոգու Փեսան է:

Այս այրին, թողած Քրիստոսին, ապավինում էր անիրավ դատավորին՝ Հալածված ոտիւրից՝ դեւից, իրավունք էր խնդրում [մեկ այլ] դեւից, որպեսզի ձերբազատվի ոտիւր բռնութեանից: Այս ոտիւր, ինչպէս ասացի, կա՛մ դե է, որ ճնշում էր, կա՛մ էլ սատանային Հնազանդված մարդ: Իսկ անիրավ դատավորը այրուց Հոգնելով կատարեց այն, ինչը խնդրվում էր:

Այս առակը խրատում է, որ պետք է անձանձրուցի աղոթել Աստուծուն: Քանզի եթէ անիրավ դատավորը, որ ոչ Աստուծոց է երկնում և ոչ էլ մարդկանցից ամաչում, այրու տեսապէս Հաճախելու և թախանձելու պատճառով նրա դատը տեսավ, որչափ ևս առավել Քրիստոս՝ արդարութեան Արեգակը և Դատավորը, պիտի լսի նրանց աղաչանքներն ու պաղատանքները, ովքեր ամեն օր աղաչում և պաղատում են Նրան:

## ԻԲ

«Հիսուս ասաց. «Այսօր այս տան Համար փրկութիւնն եղավ, քանի որ սա ևս Աբրահամի որդի է» (Ղուկ. ԺԹ 9):

Աբրահամի որդի նա՛ է, ով կատարում է Աբրահամի գործերը: Արդ, քանի որ Զաքեոսը Աբրահամի գործերը գործեց, Քրիստոսից Աբրահամի որդի անվանվեց:

«Եվ ասաց. «Մի ազնվական մարդ գնաց Հեռու աշխարհ՝ իր թագաւորութիւնը ստանալու և վերադառնալու Համար» (Ղուկ. ԺԹ 12):

Ազնվական մարդը Քրիստոսն է, որ գալով այս Հեռու աշխարհ՝

երկնավորներից երկրավորների մոտ, թագավորեց և երկինք Համբարձվեց, և դարձյալ գալու է մեռյալներին և կենդանիներին դատելու:

*«Եվ կանչելով իր ծառաներին՝ նրանց տասը մնաս տվեց» (Ղուկ. ԺԹ 13):*

Նույն առակն է, ինչ որ Մատթեոսի [ավետարանում, սակայն այնտեղ նրա տվածը] տաղանդ և քանքար անվանվեց: Մեկնվում է նույն կերպ, բայց միայն զանազանում է [նրանով], որ [Մատթեոսի ավետարանում] ութ քանքար ասվեց, իսկ այստեղ՝ տասն՝ այդ կատարյալ թիվը:

*«Ուղարկեց իր աշակերտներից երկուսին և ասաց. «Գնացե՛ք այն գյուղը, որ մեր դիմացն է. երբ այնտեղ մտնեք կգտնեք կապված մի ավանակ, որի վրա ոչ մի մարդ երբեք չի նստել» (Ղուկ. ԺԹ 29-30):*

*«Կապված ավանակը»* ժողովուրդն է, որի մեջ երբեք չի եղել Քրիստոսի վարդապետության խոսքը: Ավանակին կապանքներից արձակում են Քրիստոսի երկու աշակերտները, [որոնք], ինչպես կարծում եմ, Հին ու Նոր Կտակարաններն են և նրանց վարդապետներն ու մեկնիչները:

*«Եվ մինչ ավանակը արձակում էին, նրա տերերը ասացին նրանց. «Ավանակն ինչո՞ւ էք արձակում» (Ղուկ. ԺԹ 33):*

Նախքան Քրիստոսի՝ ավանակին տիրելը և թագավորելը, ավանակը բազում տերեր ուներ, և այդ այդպես է: Եվ այն, ինչ մեկնաբանելի է ըստ կարգի, [արդեն] կա Մատթեոսի Ավետարանի [բացատրության մեջ]:

*«Եվ իրենց Հանդերձները նրա վրա գցելով...» (Ղուկ. ԺԹ 35):*

Աշակերտներն անքան ավանակի վրա գցում են իրենց Հանդերձները՝ մարգարեական և առաքելական վարդապետության խոսքերը: Մատթեոսն ասում է. «Կապված էչ և նրա Հետ ավանակ» (Մատթ. ԻԱ 5)՝ Հայտնելով երկու ժողովուրդների՝ Հրեաների և Հեթանոսների մասին, իսկ Ղուկասը՝ միայն ավանակ [է ասում]:

*«Եվ երբ նա մոտեցավ Զիթենյաց լեռան գառիվայրին, աշակերտների մեջ ամբողջ բազմությունը ուրախություն բերեց օրհնել Աստծուն» (Ղուկ. ԺԹ 37):*

Ըստ Մատթեոսի՝ «Բազմության ամբողջը, որ Նրա առջևից և Հետևից

էր գնում, աղաղակում էր» (Մատթ. ԻԱ 9): Գուցե ամբողջ ամբողջը, որ աղաղակում էր, աշակերտների բազմությունն էր, [որ] այնտեղ օրհնեց [Աստծուն]. նրանք, ովքեր խոստովանեցին Նրան Քրիստոս՝ ասելով. «Օրհնյալ է, որ եկավ և գալու է Տիրոջ անունով» (Հմմտ.Ղուկ. ԺԹ 38):

*«Գոնե այս օրերին գիտենայիր դու քո խաղաղությունը. բայց այժմ ծածկվեց քո տեսողությունից» (Ղուկ. ԺԹ 42):*

Իսրայելի վրա մի փոքր կուրուծյուն իջավ, Երուսաղեմի տեսողությունից ծածկվեց այն, ինչ նրա խաղաղությունն էր, որովհետև նա չիմացավ Քրիստոսի գալստյան օրը:

ԻԳ

*«Մի մարդ այգի տնկեց և այն Հանձնեց մշակներին, իսկ ինքը երկար ժամանակով ճանապարհորդության գնաց» (Ղուկ. Ի 9):*

«Այգին» աստվածային, մարգարեական և առաքելական վարդապետությունն է, իսկ ում տրվեց այգին, որպեսզի պտղաբերի, Հրեա ժողովուրդն է: «Մառաններ» Մովսեսը և այլ մարգարեներն են: «Որդին», Ում սպանեցին, Քրիստոսն է՝ Աստու Միածին Որդին:

*«Այն ժամանակ նրանք, որ Հրեաստանում են, թող փախչեն լեռները» (Ղուկ. ԻԱ 21):*

Այս և ինչ որ գրված է, մեկնվեց Մատթեոսի ավետարանում:

*«Ասում եմ ձեզ, այլևս չեմ ուտելու սրանից, մինչև որ պատեքը կատարվի Աստծու արքայության մեջ» (Ղուկ. ԻԲ 16):*

Իմանալու է, թե ինչպե՞ս է կատարվում գառիվը Աստծու արքայությունում, եթե երբեմն երկնայինների մեջ չի կատարվում, որի սովերը կատարվում է ժողովրդի մեջ:

*«Ես ձեր մեջ եմ իբրև սպասավոր: Եվ դուք եք, որ իմ փորձության մեջ ինձ Հետ էիք մնում մինչև այժմ » (Ղուկ. ԻԲ 27-28):*

Աշակերտների փորձություններ են ասվում Քրիստոսի փորձությունները: Իսկ երբ Համբերելով Հաղթահարում ենք փորձությունները՝ այն

Ժամանակ Հայրը Նրան է ավանդում արքայությունը: Այն ժամանակ և Որդին էլ մեզ կավանդի, որպեսզի Հոգեպես ուտենք և արբենք Նրա սեղանի շուրջ, որպեսզի նստելով ավոուի վրա՝ դատենք Իսրայելի տասներկու ցեղերին (Հմմտ. Ղուկ. ԻԲ 30):

*«Եվ Հիսուս նրան ասաց. «Հուզա՛, Համբուրելո՞վ ես մատնում Մարդու Որդուն» (Ղուկ. ԻԲ 48):*

Մարդկանցից շատերն են պատմում Քրիստոսի Հանդեպ տածած մեծ սիրո մասին, և ոմանք պատվելով բարեհամբավում են, թե կնոջից չծնվեց, և ուրիշներն էլ, թե երևութապես երևաց մարդկանց, ոմանք էլ այլ աղանդներով՝ կամենալով նրան պատիվ մատուցել, չեղվեցին Հավատքից:

Այդ, և ինչ որ գրված է մինչև Հարությունը, մեկնվեց Մատթեոսի ավետարանում:

*«Եվ ահա նույն օրը աշակերտներից երկուսը գնում էին մի գյուղ, որի անունն էմմավուս էր, և որը Երուսաղեմից Հեռու էր Հարյուր վաթսուն ասպարեզով» (Ղուկ. ԻԴ 13):*

Էմմավուսը Երուսաղեմից Հեռու է Հարյուր քսան ասպարեզով, և ինչո՞ւ է գրված Հարյուր վաթսուն ասպարեզ: Արդ, սա որևէ նշանակություն չունի, եթե գրված չէ Հարյուր քսան ասպարեզ:

Այստեղից մինչև [Ղուկասի] ավետարանի ավարտը, այլ ավետարանիչներից ոչ ոք չպատմեց:



## ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ

ԻԴ

Հովհաննեսը՝ տասներկուսից մեկը, [այն] աշակերտն է, ում սիրում էր Հիսուս, ով և Նրա կրծքովն ընկավ այն գիշերվա ընթրիքի ժամանակ, երբ մատնվելու էր Քրիստոս: Սա ո՛չ ազգաբանությունը գրեց և ո՛չ էլ աստանայից փորձվելը: Ազգաբանությունը չգրեց այն պատճառով, որ սկիզբը ոչ թե մարդկային ծննդից, այլ աստվածային ծննդից սկսեց, ուստի անագգ էր՝ ըստ մարգարեի խոսքի. «Նրա ազգատոհմը ո՞վ պիտի պատմի» (Եսայի ԾԳ 8): Իսկ Հովհաննեսը Աստվածությունից սկսեց սկիզբը, և պատմելով ասում է, որ Աստծու Միածին Որդու ծնունդը առաջ էր, քան բոլոր Հավիտյանները:

*«Սկզբից էր Բանը, և Բանն Աստծու մոտ էր, և Բանն Աստված էր» (Հովհ. Ա 1):*

Աստծու Միածին Որդին կոչվում է Բան, որովհետև մեր բոլոր անբանությունները վերացրեց և մեզ բանական դարձրեց: Նա ի սկզբանե Հոր մոտ էր և չստեղծվեց, ինչպես Հերձվածողներից ոմանք ցնորվեցին՝ ասելով. «Կար ժամանակ, երբ չկար Որդին»: Արդ, եթե Միածին Որդին ի սկզբանե Հոր Խոսքն է, ու եթե մեկն ասի. «Կար ժամանակ, երբ չկար Որդին», ապա անբան է ասում Հորը՝ սկիզբ ունեցող, առանց գորության և իմաստության: Առաքյալն ասում է. «Քանզի Քրիստոս Աստծու գորությունն ու Աստծու իմաստությունն է» (Ա Կորնթ. Ա 24)\*:

\* Ձեռագրում այս խոսքերին Հաջորդում է Հետևյալը, որը մեր կարծիքով Հետագայի Հավելագրում է, քանի որ իր բովանդակությամբ անհասկանալի է ու անընդունելի: Բացի դրանից ձեռագրի լուսանցքում այս Հարցի վերաբերյալ որոշ ծանոթագրություն է սրված, որից ենթադրում ենք, որ այն ժամանակին ևս քննարկման Հարց է եղել. «Եվ Բանը սկզբից Հոր [մոտ] էր, իսկ կենդանությունը մշտապես Բանի [հետ] չէր, այլ եղավ, որովհետև եթե կենդանությունը լույս էր մարդկանց Համար, ապա երբ եղան մարդիկ, ա՛յն ժամանակ կենդանությունը եղավ մարդկանց լույսը»:



**«Եվ առանց նրա չեղավ ոչինչ» (Հովհ. Ա 3):**

Ամեն ինչ, որ ունի գոյացություն, Քրիստոսով եղավ. իսկ չարությունը՝ ո՛չ, քանզի գոյացություն չունի, այլ բարու պակասությունն ու անտեսումն է, ինչպես պոռնկությունը, շնությունը և դրանց նմանները, որոնք Քրիստոսով չեն եղել, այլ բանաարկուի խարդավանքներով: Այս պատճառով չի ասվում լինել Քրիստոսից, քանզի այն, ինչ որ եղավ Նրանով, կյանք էր, և կյանքը մարդկանց լույսն է (տե՛ս Հովհ. Ա 4): Իսկ այդպիսիները մարդկանց համար ո՛չ կենդանություն են և ո՛չ էլ լույս, այլ մարդկանց հոգիներին՝ մահ և խավար:

**«Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չնվաճեց» (Հովհ. Ա 5):**

Խավար էր մարդկային կյանքը, և բովանդակ երկրային աշխարհը, որ խախտեց Աստծու հրամանը: Եվ այն խավար աշխարհի իշխանը, որ անդուհնդների վրա էր, նվաճեց ամեն մարդու, բացի Քրիստոսից, ըստ խոսքի. «Գալիս է, այս աշխարհի իշխանը և իմ վրա ոչ մի իշխանություն չունի» (Հովհ. ԺԴ 30):

**«Կար մի մարդ՝ Աստծուց ուղարկված, նրա անունը Հովհաննես էր» (Հովհ. Ա 6):**

Հովհաննեսը Աստծուց առաքվեց, ոչ ինչպես Եսային կամ Երեմիան կամ այլ մարգարեներից մեկը Իսրայելի ժողովրդի մոտ՝ մեղքերի հանդիմանության համար, այլ առաքվեց Աստծուց իբրև հրեշտակ՝ մարդկանց վկայելու Լույսի մասին և Նրա ճանապարհը պատրաստելու համար: Ահա ես առաքում եմ, շատում է, չիմ պատգամաբերին քո առջևից՝ քո ճանապարհները պատրաստելու համար (հմմտ. Եսայի Խ 3, Մաղ. Գ 1):

**«Ինքը լույսը չէր, այլ եկել էր, որ վկայի լույսի մասին» (Հովհ. Ա 8):**

Սա այլաբանությունն է, ինչպես կկարծի մեկը, քանզի սրա վերաբերյալ ասվեց. «Սա եկավ որպես վկա, որպեսզի վկայի լույսի մասին» (Հովհ. Ա 7). որովհետև երկու և երեք վկաների բերանով հաստատվում է ամեն ինչ, և երկու մարդկանց վկայությունը ճշմարիտ է (տե՛ս Բ Օր. ԺԹ 15): Հովհաննեսը մարդ էր և ճրագ, դրա համար կրկնակի ասվեց, որպեսզի վկայի իբրև մարդ և ճրագ:

**«Այդ լույսն էր ճշմարիտ Լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, որ գալու է աշխարհ» (Հովհ. Ա 9):**

Ճշմարիտ Լույս է, [բայց] ո՛չ տեսանելի, այլ խմանալի, որ հավածում է հոգիների անգիտության խավարը: Լուսավորվեցե՛ք, ասում է, գիտության Լույսով (հմմտ. Ովսե Ժ 12), և մեր երեսները Լույսը Տեր Քրիստոսն է:

**«Իսկ ովքեր նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց լինելու Աստծու որդիներ» (Հովհ. Ա 12):**

Ինչպես մեկը իշխանություն ունի Աստծու Որդի լինելու, նույնպես և ունի իշխանություն սատանայի որդի լինելու: Նույն ավետարանիչը իր թղթում ասում է. «Ով ճանաչում է, թե Հիսուսն է Քրիստոս, Աստծուց է ծնված» (հմմտ. Ա Հովհ. Ե 1), [իսկ ով] չի ճանաչում, Աստծուց չէ ծնված: Եվ սրանով հայտնի են լինում սատանայի և Աստծու որդիները:

**«Նրանք ոչ արյունից, ոչ մարմնի կամքից և ոչ էլ մարդու կամքից, այլ Աստծուց ծնվեցին» (Հովհ. Ա 13):**

Ովքեր հավատացին Քրիստոս Աստծուն և ընդունեցին Նրան, իշխանությամբ Աստծու որդիներ եղան. [ապա] իրավացիորեն ասվում է՝ ո՛չ արյունից, և ո՛չ մարմնի կամքից, այլ Աստծու կամքից եղած:

**«Եվ Բանը մարմին եղավ և բնակվեց մեր մեջ» (Հովհ. Ա 14):**

Ոչ թե Աստծու Բանի բնության փոփոխում եղավ դեպի մարմնի բնություն և կամ այլալուծյուն, ինչպես ասում են սառած ջուրի [համար], այլ Բանը մարմին եղավ, այսինքն՝ մարդ եղավ՝ վերցնելով մարդու մարմին, հոգի և մարդուն [հատուկ] ամեն ինչ: Ուստի և Աստվածաձայնը վրա բերեց, թե բնակվեց «մեր»՝ մարդկային բնության մեջ:

**«Եվ տեսանք նրա փառքը, նման այն փառքի, որ Հայրն է տալիս Միածնին՝ լի շնորհով և ճշմարտությամբ» (Հովհ. Ա 14):**

Որովհետև Բանն Աստված Աստծու Որդի լինելու իշխանությունը ժամանակի մեջ չստացավ, դրա համար էլ [ասվում է, որ] տեսան Նրա փառքը Հորից՝ Աստվածության աղբյուրից [որպես] Միածնի և միայն ճշմարիտ Աստծու: Նաև մյուս աշակերտները, [տեսան] այն սքանչելիքները, որոնք Նա անում էր՝ իբրև Աստված, առավել ևս Որոտման որ-

գիները և Պետրոսը [ինչպես օրինակ], այլակերպությունը լեռան վրա:

*«Լի շնորհներով և ճշմարտությունով»:* *«Շնորհներով»*, քանի որ նրանք, ովքեր կանչվում են նրանից և կանչվեցին, շնորհներով փրկվեցին և ո՛չ գործերով, իսկ «ճշմարտությունով», որովհետև ամեն ինչում ճշմարիտ է Նրա վարդապետությունը:

*«Հովհաննեսը վկայում է նրա մասին, աղաղակում և ասում է. «Սա է, որի մասին ասացին» (Հովհ. Ա 15):*

Հովհաննեսի առաջին վկայությունը սկիզբ է առնում [այսպես]. «Նա, որ իմ ետևից էր գալիս, ինձանից առաջ եղավ» (Հովհ. Ա 15), և ավարտվում է հետևյալ խոսքով. «Նա ինձ հայտնեց» (տե՛ս Հովհ. Ա 18), դրանից իմանում եմ, որ Նա առաջ էր, քան ես, որպես Անդրանիկն ու ամենապատվականը բոլոր արարածների, քանզի Նրա լրումից ես և այլ մարգարեները ստացանք աստվածային և մարգարեական շնորհը. «Եվ շնորհներ՝ շնորհների փոխարեն» (Հովհ. Ա 16): Օրենքի շնորհները, որ ճշմարտության ատվերներ էին, Մովսեսի միջոցով տրվեցին, իսկ կատարումը և իրական շնորհն ու ճշմարտությունը, Հիսուս Քրիստոսի միջոցով եղան:

*«Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել, բացի միայն Միածին Որդուց, որ Հոր ծոցում է, Նա պատմեց մեզ» (Հովհ. Ա 18):*

Քանզի անմարմին է Աստված և վեր է, քան բոլոր զգալի և տեսանելի բնությունները, ապա ուրեմն անտեսանելի է մարմնական աչքերին, իսկ իմանալի տեսությունով տեսանելի է և՛ Միածին Որդուն, և՛ նրանց, որոնց Որդին կհայտնի, որոնք «սրտով սուրբ» են (Մատթ. Ե 8) և Աստծուց ծնվեցին:

## ԻԵ

*«Եվ Հարցրին Նրան ու ասացին. «Եղիա՞ն ես դու, և ասաց՝ ոչ. իսկ մարգարե՞ս ես դու, և պատասխան տվեց, թե ոչ. իսկ ասա՛ մեզ, դու ո՞վ ես և ի՞նչ պատասխան տանք մեզ առաքողներին» (Հովհ. Ա 21-22):*

Քանզի Հրեաները ակնկալում էին Եղիայի, Քրիստոսի կամ մարգարե-

րեի գալուն, որի համար ասվում է. «Տեր Աստված ձեր եղբայրներից ձե՛զ համար մարգարե առաջ կբերի, նրան լսեցեք» (Թ Օրենք ԺԸ 15), դրա համար Հրեաներից ուղարկվածները իրար ետևից հարցնում էին Նրան. արդյո՞ք Քրիստոսն է կամ Եղիան, կամ էլ՝ [այդ] մարգարեն: Եվ Նա պատասխանեց, թե նրանցից չեմ:

Թվում է, թե պատասխանը ճշմարիտ չէ, քանզի Քրիստոս Հովհաննեսի մասին ասաց, թե նա՛ է Եղիան: Այս մասին պետք է ասել, թե Հովհաննեսը այն Եղիան չէր, որ վերացավ երկինք Հրեղեն կառքով և ձիերով, որի մասին նրանք ասում էին: Այլ որովհետև Հովհաննեսը եկավ Եղիայի հոգով և գորությունով, [դրա համար էլ] Քրիստոսից Եղիա կոչվեց:

*«Ի՞նչ ես ասում քո մասին: Նա ասաց. «Ես անապատում կանչողի ձայնն եմ, Հարթեցեք Տիրոջ ճանապարհը, ինչպես ասաց Եսայի մարգարեն» (Հովհ. Ա 22-23):*

Ես Քրիստոսի՝ Աստծու Որդու, նախընթաց խոսքը բարբառողի և գոչողի ձայնն եմ անապատում՝ երկրային աշխարհում, որ դեռևս գուրկ էր աստվածաչառությունից: Եվ այս է խորհրդանշական, քանզի Եսային այսպես է ասում ըստ Յոթանասնից թարգմանիչների. «Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը և Հարթեցե՛ք մեր Աստծու շավիղները» (Եսայի Խ 3), իսկ ավետարանիչն ասում է. «Ուղղեցե՛ք Տիրոջ ճանապարհները»: Կարծում եմ ըստ երբայրների շարադրվեց մարգարեի վկայությունը: Եվ արդ՝ երկու կերպով էլ պատրաստվում և ուղղվում է Տիրոջ շավիղները՝ աստվածաբանական գիտությունով և առաքիլի գործերով:

*«Եվ Հարցնելով նրան՝ ասում են. «Եվ ինչո՞ւ ես մկրտում, եթե դու չես Քրիստոս և ո՛չ Եղիան, և ո՛չ էլ մարգարեն» (Հովհ. Ա 25):*

Ջէին գիտակցում, որ մկրտեց ոչ թե մարգարեն, որ Քրիստոսն է, այլ նրա աշակերտները, և ո՛չ Եղիան, և ո՛չ էլ մարգարեներից մեկը [երբևէ չի մկրտել]:

*«Ես ձեզ մկրտում եմ ջրով, ձեր մեջ կա մեկը, որին դուք չեք ճանաչում» (Հովհ. Ա 26):*

Իմ մկրտությունը մարմնական է, բայց Քրիստոս, Ով ձեր մեջ է,

աշխարհի մեջ և կամ գործընթացը յուրաքանչյուրիդ հոգու մեջ, Ով գալիս է իմ ետևից ըստ մեր մարդկային բնութեան, ինձանից առաջ եղավ՝ հավիտյաններից առաջ անճառապես ծնվելով Հորից:

Արդ, թե «ձեր մեջ կա» ասվեց ոչ տեսանելի և մարմնական իմաստով, ուստի և «իմ ետևից է գալու» [խոսքը նույնպես մարմնական իմաստով չասվեց]: Նաև՝ «անապատում կանչողի ձայնը» գգայական ձայնի [իմաստով] չի ասում, [այլ] հոգիներում, որ անապատ են Աստծուց, հրամայում է պատրաստել Նրա ճանապարհները:

*«Ում կոչիկները արժանի չեմ հանել» (Մատթ 9 11):*

Այս ասվեց Մատթեոսի ավետարանի մեկնության ժամանակ, և երկու կոչիկները մեկնվում է որպես Աստծու Որդու մարմնանալը և դժոխք իջնել: Մեկը եթե իմանա այս խոսքի գործընթացը, այնպիսին կհասնի [կոչիկները], և հանելը առավել է, քան արձակելը, [ինչպես] որ Քրիստոսի պատմության վերաբերյալ [ասվեց], որը անկար էր և վերևից ներքև հյուսված:

Իսկ այս ավետարանիչն ասում է. «Որի կոչիկները կապերը արձակելու արժանի չեմ» (Հովհ. Ա 27): «Կոչիկի» վերաբերյալ արդյո՞ք խոսք ասել է որևէ [մեկնիչ], ով Քրիստոսի մարդանալու մասին արժանացավ ուսանել և իմանալ: Նախկին [մեկնիչներն] այս մասին խոսք չեն ասում: Ուստի և հարցնում է. «Դո՞ւ ես, որ գալու էիր» (Մատթ. ԺԱ 3):

Իսկ այլ մեկնիչ ասում է՝ «կոչիկները» Քրիստոսի գործերն են, ընթացքը և Աստվածութեան խոսքը, ինչը մարդուն անհնարին է իմանալ, ուստի և կանանցից ծնվածների մեջ մեծագույնը իրեն արժանի չհամարեց [այն մեկնել]:

*«Այս բանը պատահեց Բեթաբերիայում, Հորդանանի մյուս կողմում, ուր գտնվում էր Հովհաննեսը և մկրտում» (Հովհ. Ա 28):*

Բեթաբերիա թարգմանվում է պատրաստության տուն, իսկ Հորդանան՝ նրա ջրերից: Արդ, ով առաքվեց պատրաստել Տիրոջ ճանապարհը, բնակվում է պարարտության տանը, մտահոգված մեր համար երկնքից Բանի իջնելու կապակցությամբ:

Այս Հորդանանը անցան խրաչելացիները՝ լվացվելով եգիպտացիների նախատինքներից (տե՛ս Հեսու Ե 9): Իսկ Եղիան [գետը] անցնելով

[երկինք] վերացավ (տե՛ս Դ Թագ. Բ 11): Անցավ և Եղիան՝ արժանանալով վարդապետական կրկնակի շնորհների (տե՛ս Դ Թագ. Բ 15): Սրանում սրբվեց Նեեման ասորին (տե՛ս Դ Թագ. Ե 14). և սրանում երևաց Սուրբ Հոգին՝ աղավնակերպ (տե՛ս Հովհ. Ա 32):

*«Հետևյալ օրը այնտեղ տեսավ Հիսուսին, որ գալիս էր դեպի իրեն ու ասաց. «Ահա՛ Գառն Աստծու, որ վերցնում է աշխարհի մեղքը» (Հովհ. Ա 29):*

Հիսուս, Ով նախապես ճանաչվեց [բազմութեան] մեջ կանգնած, Հովհաննեսի վկայությունից երեք օր հետո՝ երևաց [բազմութեանը]: Իսկ հետևյալ օրը գալիս է Հովհաննեսի մոտ: «Հետևյալ օրը» ծագելու և լուսավորության խորհրդանիշն է: Հովհաննեսը լինելով մարդ, Քրիստոսին մատնանշում է իբրև Աստված, և լինելով ձայն՝ ակնարկում է Բանը:

Բազում կենդանիներ էին մատուցվում սեղանի վրա, չորքոտանիներ և թռչուններ, հորթ, ոչխար, այծ և եգ, խոյ, նոխազ, գառ, ուլ և [սրանցից] միայն գառը հիշվեց, որովհետև հաճախ էր մատուցվում սեղանի վրա [որպես] պատարագ: Նույնպես և Քրիստոս իր անձը պատարագ մատուցեց Հորը, և ոչ թե մի կամ բազում ժամանակների համար, այլ մինչև աշխարհի վախճանը [Իր վրա] վերցնելով մեղավորների մեղքերը, որի համար ասվեց. «Որ [Իր վրա] է վերցնում աշխարհի մեղքը» (Հովհ. Ա 29), և ոչ թե վեցրեց կամ վերցնելու է:

*«Սա է նա, որի մասին ես ասում էի՝ իմ ետևից գալիս է մեկը, որ ինձնից առաջ եղավ, քանզի նախկինում իսկ կար» (Հովհ. Ա 30):*

«Իմ ետևից է գալիս», այսինքն՝ իմ երևալուց հետո, հայտնվելու է այս այլմարդը, Ում մասին ասացի: Նախապես Հովհաննեսը Նրան չասաց այդ, Ով իրենից հետո էր գալու, իսկ այժմ ասում է. «Որ ասվեց՝ ա՛յս այրն է», որպեսզի Քրիստոսին ցույց տա [իբրև] կատարյալ այր և մարդ:

*«Եվ ես չէի ճանաչում նրան. այլ Նա, Ով առաքեց ինձ ջրով մկրտելու, Նա ինձ ասաց. «Ում վրա տեսնես, որ Հոգին իջնում և մնում է, Նա՛ է, որ մկրտում է Սուրբ Հոգով» (Հովհ. Ա 33):*

Եվ ինչպես չգիտեր, եթե կույսի՝ Քրիստոսի մոր՝ Եղիաբեթին հանդիպելու և ողջունելու ժամանակ խայտայտ մոր որովայնում: Արդարև

գիտեր, թե Նա է Քրիստոս, բայց չգիտեր, թե Նա՛ է, Ով Հոգով և կրակով է մկրտում. «Որի վրա տեսնես Հոգին, որ իջնում է և մնում, նրա վրա...» (Հովհ. Ա. 33): Իջավ Հոգին նաև մարգարեների և առաքյալների վրա, բայց մշտապես չմնաց, իսկ Հիսուսի վրա իջավ և մնաց:

*«Հետևյալ օրը դարձյալ այնտեղ կանգնած էր Հովհաննեսը, նաև իր աշակերտներից երկուսը» (Հովհ. Ա. 35):*

Այս օրը երրորդն է այն օրվանից հետո, երբ փարիսեցիներն առաքվեցին նրա մոտ հարցնելու, թե ո՛վ է [ինքը]:

*«Եվ ասում է նրանց. Ամեն, ամեն ասում եմ ձեզ...» (Հովհ. Ա. 51):*

Այդ «ամեն» բառը Յոթանասնից [Թարգմանիչները] եբրայերենից Թարգմանեցին «եղիցի», իսկ Ակյուղաբար Թարգմանեց «հավատալ»:

*«Այսուհետև պիտի տեսնեք երկինքը բացված և Աստուհը հրեշտակներին՝ բարձրանալիս և իջնելիս Մարդու Որդու վրա» (Հովհ. Ա. 51):*

Պարզապես ուսուցանում է Քրիստոսի հրաշալի գալուստը, երբ հրեշտակները այլևս չեն առաքվում այնպիսիների սպասավորություն համար, որոնք ժառանգելու են արքայությունը, այլ իջնելու են Քրիստոսի հետ և ելնելու են Նրա հետ, և այս [լինելու է] պարզորեն:

Իսկ ավելի խորհրդաբար այսպես է մեկնվում. բացվում է երկինքը, որտեղ կան իմաստություն գանձեր ու գաղտնիքներ, և այն է ճշմարիտ գիտությունը: Եվ խրաչելացիները պիտի գիտենան, որ Նրանում չկա հրեշտակների բնություն նենգությունը և [Նա] կարիք չունի սպասավորության:

Ովքեր ելնում են, շահելու [համար] են ելնում. իսկ իջնողները, որպեսզի շահեցնեն՝ նմանվելով Նրան՝ Աստուհ Որդուն, որ մեր փրկության համար իջավ երկնքից և պատարագվեց: Եվ «երկինքը բացվում է» Քրիստոսով, այսինքն [բացվում են] Աստուհ գիտություն և իմաստության բոլոր գանձերը, որը մեզ [ավելի] ցանկալի է, քան երկնքի բացվելը:

## ԻԶ

*«Եվ երրորդ օրը գալիլիացիների Կանայում հարսանիք կար, և Հիսուսի մայրը այնտեղ էր: Հարսանիքի հրավիրվեցին նաև Հիսուս և իր*

*աշակերտները» (Հովհ. Բ. 1-2):*

Երրորդ օրը, երբ ելավ Գալիլիա, որը վեցերորդն է այն օրվանից [հետո], երբ Հովհաննեսի առաջին վկայությունը եղավ: [Արդ] առաջին օրը ելնում է Գալիլիա, երկրորդ օրը կատարվում է Նաթանայելի մասին նախախնամությունը, երրորդ օրը՝ Հարսանիքը, որի ժամանակ ուրախացնում էր կանչվածներին:

Երրորդ օրը ելավ և Աբրահամն [այն] տեղը, որը նրան Աստված ասաց, և նայելով տեսավ այն (տե՛ս Ծննդ. ԻԲ 4): Երրորդ օրը Իսրայելի որդիները շարժվելով Հասան Մարա, ուր դառը ջուրը քաղցրացավ (տե՛ս Ելք ԺԵ 22-25): Երեք օր Աստված հրամայեց ժողովրդին մեկուսանալ կանանցից՝ լսողներին տալով տաճարայնա պատվիրանները (տե՛ս Ելք ԺԹ 15): Նաև Ովսե մարգարեն է ասում. «Երկու օրից հետո՝ երրորդ օրը, կկենդանանաք» (Հմմտ. Ովսե Զ 3):

Նաև Հովնանը երրորդ օրը [կետի բերանից] ցամաք նետվեց (տե՛ս Հովնան Բ 1,11): Եվ Փրկիչը երրորդ օրը մեռելներից անդրանիկ հարույնություն առնողը եղավ:

Եվ ինձ թվում է՝ պատմությունը ճշմարիտ է, [այսինքն] մարդկային հարսանիք էր, փեսան ու հարսը տեսանելի էին, [ապա և] Հիսուսին ու աշակերտներին կանչելը ճշմարիտ էր:

Իսկ ոմանք մեկնաբանեցին այսպես. Կանա Թարգմանվում է ստացվածք, իսկ Գալիլիա՝ թավալում և շարժում, հասկացվում է նաև փոփոխվող բնակատեղի: Արդ, ես, եթե հնարավոր է, [ոմի եմ բերում] այդ բոլոր ասված մտքերը, որ շարժումից դեպի ճշմարտություն և հաստատություն փոփոխվենք՝ [իրեն] ճշմարիտ հարս՝ [եկեղեցու] Հոգին է կոչվում, որին իր Փեսան է առնում, Աստուհ Բանն՝ Քրիստոս, իսկ աշակերտներն աստվածային գորություններն են:

Եվ դարձյալ կտեսնես, թե փեսան մովսիսական օրենքն է, իսկ հարսը՝ Հոգին, որ Մովսեսի օրենքների տակ է: Այն հարսանիքը Կանայում, որին կանչված էին Հիսուս և աշակերտները, տակավին գտնվում էր հրեական օրենքների տակ: Այն, որոնց ստացավ Աստված և որոնց համար ասաց թե օրենքի տակ են, ասվում է. «Սա ինքը չէ՝ քո հայրը, որ ստացավ քեզ» (Բ Օր. ԼԲ 6): Արդ, եթե փեսա նշանակում է մովսիսական օրենքը, և հարսը՝ սովորություններին ընդունակ Հոգին, [ապա] Քրիստոսի մայրը՝ Սուրբ Հոգին, իրավացիորեն ասաց. «Գինի չունեն»,

քանզի օրենքն ու մարգարեությունը մինչև Հովհաննես էր. և ապա պակասեց մարգարեական ուրախությունը:

Եվ կամ այս է նշանակում, որ թեպետ [իբրև] փեսա ունեին օրենքը, և [իբրև] հարս՝ հոգի ասվածը, բայց չունեին օրենքների ճշմարիտ մտքերը, որոնք ուրախացնում և ապրեցնում են: Իսկ Քրիստոսի գալով՝ ջուրը, [այսինքն] «գիրը», որ սպանում էր, գինու փոխարկվեց: Բայց արդյոք ո՞ւմ է խորհրդանշում սեղանապետը. վարդապետական հոգուն, նրան ով կարող է խմանալ օրենքների և մարգարեների միտքն ու գործությունը:

*«Հիսուս նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում ինձնից, ո՛վ կին, իմ ժամանակը դեռ չի հասել» (Հովհ. Բ 4):*

Թվում է, [թե] մայրը հայտնում է աստվածային շնորհների համեմուտ ժամանակը, իսկ Հիսուս կարծեցյալ ցամաքում ասում է, թե դեռևս չի հասել ժամանակը, սակայն կանչվածների համար կհատուցեմ շնորհներ՝ շնորհների փոխարեն:

*«Այնտեղ կային քարե վեց թակույկներ հրեաների սովորությունների համաձայն մաքրելու համար, որոնք տանում էին երկու կամ երեք չափ» (Հովհ. Բ 6):*

Վեցը կատարյալ թիվը է, որովհետև իրենում [պարունակում է] իր մասերին հավասար մասեր. երեք՝ երկու [հատ]. մի երեքը [վեցի] կեսն է, երկու՝ [երեք հատ, որը վեցի] երրորդ մասն է և մեկ՝ [վեց հատ, որը վեցի] վեցերորդ մասն է: Երեքը, երկուսը և մեկը գումարելով՝ կազմում են այդ վեց թիվը: Որի համար էլ պատմվում է, որ վեց օրում է երևելի աշխարհը ստեղծվել՝ ցույց տալով արարածների կատարելությունը:

Ասում է «քարեղեն վեց թակույկներ». քարը, երբեմն հասկացվում է, [որպես] հետին իր, ինչպես ասվեց. «Եթե հաց խնդրի, մի՞թե քար կտա նրան» (Մատթ. Է 9), և դարձյալ՝ «ասա՛, որ այս քարերը հաց դառնան» (Մատթ. Դ 3): Երբեմն [էլ] ասվում է [որպես] բարի իր, ինչպես՝ «[Այն] քարը, որ կառուցողները անարգեցին նա է, որ եղավ անկյունաքար» (Մատթ. ԻԱ 42): Նաև [այս դեպքում] «Ահա Սիոնի մեջ զնում եմ գայթակղություն քար» (Հուով. Թ 33):

Այս այսպես է համաձայն մեկնիչների: Այժմ պետք է քարը բարի

իրերի շարքում դասել՝ Քրիստոսի կրկնակի բարեգործություն համար:

Վեց թակույկների նշանակությունը նախնիներից մեկն [այսպես] մեկնեց. դրանք հինգ զգայություններն են ու [մի] մտածությունը, որ կառավարում և կարգավորում է դրանց: Նախկին որովայնում<sup>3</sup> զգայություն և մտածություն համար ունայն էին զգայարանները և սիրտը: Եվ հետագայում լցվեցին ջրով՝ փոքրագույն և տկարագույն զգայություններով ու խորհուրդներով, այնուհետև երեք [չափ] գինով՝ աստվածային վարդապետությամբ, որ ուրախացնում է մարդկանց հոգիները:

*«Հրեաների սրբություն համար, որ տանում էին երկու կամ երեք չափ» (Հովհ. Բ 6):*

Ըստ օրենքի սահմանման սրբությունը [ինում] է երկրային ու մարմնական և երկնային ու հոգևոր: Ովքեր վեհագույն են, ընտրում են միայն երկուսը՝ հոգևորն ու երկնայինը, իսկ մարմնականը բաց են թողնում՝ անհնարին համարելով երինջների և նոխազների արյունով մեղքերից սրբվելը: Իսկ ոմանք նաև մարմնականն են ընդունում որպես սրբություն, այսպիսիները երեք չափ տարողություն ունեն, իսկ առաջինները, որ մարմնականները չընդունեցին՝ երկու չափ:

*«Հիսուս նրանց ասաց. «Լցրեք դրանք ջրով» (Հովհ. Բ 7):*

Ջուրը նվազագույն և խոնարհագույն օրենքների վարդապետություն է, իսկ գինին՝ վեհագույն և մեծագույն վարդապետությունը, որ ուրախացնում է հոգիներին (տե՛ս Ժող. Ժ 19): Այսպիսով՝ փոքրիչատե ասացի Հարանքավորների՝ փեսայի ու հարսի, ջրի, գինու և տաճարապետի վերաբերյալ: Նաև այս պիտի գիտենա, թե ոմանք սեղանապետին, ով ընտանի, մերձավոր և հավատարիմ էր փեսային, Հովհաննեսի հետ նույնացրին:

ԻՉ

*«Հրեաների Ձատիկը մոտ էր, և Հիսուս Երուսաղեմ ելավ: Եվ տաճարի մեջ գտավ նրանց, որ վաճառում էին արջառներ, ոչխարներ և աղավնիներ» (Հովհ. Բ 13-14):*

Հովհաննես ավետարանիչը [իբրև] Հիսուսի երկրորդ գործ՝ այս է

պատմում, իսկ մյուս ավետարանիչները այս պատմեցին վերջում: Եվ թվում է, թե [Հիսուս] այս արեց երկու անգամ. առաջինը, որ պատմում է Հովհաննեսը, և երկրորդը՝ երեք ավետարանիչները:

«Արջառը» խորհրդանշում է երկրայիններին, և նրանց, որ միայն երկրայինի մասին են խորհում ու խոկում: «Ոչխարը» խորհրդանշում է անմիտ հոգիներին, ովքեր կեղծավոր են և թվացյալ հեզություն են [ցույց տալիս], սակայն [այդպիսին] չեն: «Աղավնին» նա է, ով թեթևամտորեն ու դյուրությամբ շրջվում է [ճշմարիտ] վարդապետությունից դեպի այլ վարդապետություններ: Լուսնայավաճառները և պղնձավաճառները նրանք են, ովքեր սրտով սուրբ չեն:

«Եվ չվանից եռահյուս խարազան պատրաստելով...» (Հովհ. Բ 15):

Խարազանը պատրաստում էր չվանից և ոչ կաշվե նյութից՝ ցույց տալով իր քաղցրությունը և մարդասեր վարդապետությունը: Բայց «եռահյուսը» արդյոք ի՞նչի խորհրդանիշն է: Սողոմոնը ասում է՝ դու այդ երեք անգամ գրիր քո խորհրդագիտության և իմացության մեջ: Եվ ինչպես ցույց է տալիս աստվածային գիրքը, այս խոսքն ունի և՛ ճշմարիտ բովանդակություն, և՛ այլաբանական:

Իսկ առակի այլաբանությունը երկակի է. մեկը՝ մեղմագույն, մյուսը՝ բարձրագույն և մեծագույն, ինչպես՝ «մի՛ պոռնկացիր» և «մի՛ շնացիր» [խոսքերից] հայտնի է դառնում, որ հրամայում է մարմնական ցանկություններից մեկուսանալ:

Իսկ այլաբանորեն՝ առաջինը վերաբերում է դեերի սպասավորությանը (տե՛ս Ելք ԼԴ 15). ըստ մարգարեի խոսքի. «Պոռնկությամբ երկիրը պղծում էին քարի ու փայտի հետ շնանալով» (Հմմտ. Երեմ. Գ 9):

Եվ երկրորդ՝ շնանալ և պոռնկանալ է ասում նրանց [համար], ովքեր ուղղափառ վարդապետությունից և Եկեղեցուց այլ աղանդի մեջ են խոտորվում:

Արդ որովհետև Քրիստոս չվանե խարազանով՝ իր քաղցրիկ վարդապետությամբ էր ուսուցանում, վերոհիշյալ արջառավաճառներին, ոչխարավաճառներին, աղավնավաճառներին ու սրանց նմաններին, և ուսուցանում էր խոսքի բովանդակությունն ու խոսքի երկակի նշանակությունը, այդ իսկ պատճառով, ինչպես ինձ է թվում, «եռահյուս խարազան» վերցնել է ասում:

«Հիշեցին նրա աշակերտները, թե գրված է. «Քո տան նախանձախնդրությունը ինձ պիտի ուտի» (Հովհ. Բ 17):

Վաթսուհութեորդ սաղմոսում գրված է. «Քո տան նախանձախնդրությունը ինձ պիտի ուտի» (Սաղմ. ԿԸ 10): Նախանձախնդիր Քրիստոսը Որդին է նախանձոտ Հոր: Ես եմ, -ասում է, -նախանձոտ Տեր Աստվածը, իմ փառքը չեմ տա ուրիշներին և իմ առաքինությունները՝ կուռքերին (Հմմտ. Ելք Ի 5):

«Հրեաները ասում էին՝ քառասունվեց տարում կառուցվեց այս տաճարը» (Հովհ. Բ 20):

Այն, որը շինեց Սողոմոնը, հրկիզվեց Նաբուգոդոնոսորի օրոք. սպա [վերատին] շինվեց քառասունվեց տարում, որը քանդեց Անտիոքոսը: Սրանից հետո դարձյալ շինվեց, որը Հերովդեսը քանդելով շինեց առաջվա նման, ինչպես Հովսեփոսն է պատմում<sup>46</sup>:

«Եվ հավատացին գրին և այն խոսքին, որ Հիսուս ասել էր: Եվ երբ Հիսուս Ձատիկի տոնին...» (Հովհ. Բ 22-23):

Քանի դեռ ոմանք չեն հավատում, Ձատիկը տոն չի ասվում, այլ Հրեաների գատիկ, իսկ այժմ որովհետև հավատացին խոսքին ու գրին, Ձատիկը տոն ասվեց:

«Բայց ինքը Հիսուս անձամբ վատահություն չուներ նրանց նկատմամբ» (Հովհ. Բ 24):

Քանի որ չէին հավատում Նրան, այլ՝ Նրա անվանը:

«Հիսուս պատասխան տվեց. «Ով որ ըմպի այս ջրից, դարձյալ կձարավի» (Հովհ. Դ 13):

Նույն օրինակով և ասում են Հրեականների մասին. ամեն ոք, ով մկրտվի ըստ Մովսեսի օրենքների, պետք կունենա այլ՝ վերնագույն մկրտություն: Եվ ամեն ոք, ով պատարագ է մատուցում իր անձի համար, պետք ունի այլ պատարագի, և ամեն ոք, ով թլպատվի ըստ մովսեսական օրենքի, պետք ունի Քրիստոսից հոգևոր թլպատություն, և ամեն ոք, ով տոնում է ըստ Մովսեսի [օրենքի], պետք է տոնի նաև քրիստոսյան լավագույն տոնը:

«Հիսուս նրան ասաց. «Ո՛վ կին, հավատա՛ ինձ, որ կգա ժամանակ, երբ ո՛չ այս լեռան վրա և ո՛չ էլ Երուսաղեմում կերկրապաշտեն Հորը» (Հովհ. Դ 21):

Ո՛չ Երուսաղեմում և ո՛չ էլ ասամարացիների լեռան վրա են երկրպագում Աստծուն, այլ ամեն տեղ, ուր լինում է Քրիստոսի գործածության գալուստը: Նաև գիտակցելով, թե Աստված Հոգի է և ոչ մարմին, Նրան երկրպագում են Հոգով ու ճշմարտությամբ (Հովհ. Դ 24) և ոչ մարմնական վայրերով:

Ովքեր երկրպագում են Նրան, ճշմարիտ երկրպագուներ են, և ոչ թե նրանք, ովքեր օրինակով և սովորով են երկրպագում Աստծուն, այլ նրանք, [որ երկրպագում են] Հոգով ու ճշմարտությամբ:

«Կինն ասաց նրան. «Գիտենք, որ Մեսիան՝ Քրիստոս կոչվածը, կգա. երբ Նա գա, մեզ ամեն ինչ կպատմի» (Հովհ. Դ 25):

Իմացիր, որ տկարներն ու նվազները օրենքներով ու մարգարեներով էին ակնկալում Քրիստոսի գալուստյան Հույսը:

«Բարձրացրե՛ք ձեր աչքերը և տեսե՛ք արտերը, որ սպիտակել են և հասել Հնձի Համար» (Հովհ. Դ 35):

Կամ առաքյալների մասին ասաց, ովքեր երկրագործվեցին ու Հնձվեցին երկրային աշխարհից, և կամ այնպիսիների մասին, ովքեր առաջ, քան առաքյալները պատրաստվեցին, խակ առաքյալները Հնձելով՝ եկան Քրիստոսի կալը, որովհետև սերմանվեց օրենք, և Հնձվեց խոսք, որի մեջ է կատարելությունը:

## Ի՛հ

«Այնուհետև Հիսուս նրան գտավ տաճարում և ասաց. «Ահավասիկ առողջացար, այլևս մի՛ մեղանչիր, որպեսզի մի չար բան չպատահի քեզ» (Հովհ. Ե 14):

Սրանից իմացիր, որ ախտը դելավում է մարմիններին մեղքերի ու Հանցանքների պատճառով:

«Հիսուս պատասխանեց նրանց. «Իմ Հայրը մինչև այժմ գործում է, ուրեմն ես ևս գործում եմ» (Հովհ. Ե 17):

Աստված երբեք չի դադարում բոլորին բարեգործելուց և ամենքին խնամելուց, նույնպես և Որդին՝ Բանն Աստված:

«Մարդու Որդին ինքն իրենից ոչինչ չի կարող անել, եթե չտեսնի Հորը, որ կատարում է» (Հովհ. Ե 19):

Որդին ոչինչ չի անում, որ գանազանվի Հոր գործերից ու կամքից:

«Քանի որ Հայրը սիրում է Որդուն և այն ամենը, ինչ ինքն է անում, ցույց է տալիս նրան. և նրան ցույց կտա սրանից շատ ավելի մեծ գործեր. ինչպես Հայրը Հարություն է տալիս մեռյալներին, նույնպես և Որդին կենդանացնում է՝ ում կամենա» (Հովհ. Ե 20-21):

Եվ պատվում է Հորը՝ նրանից վերցնելով դատաստանը, որ չդատի ոչ մեկին, քանզի «Հայրը չի դատում ոչ մեկին, այլ ամեն դատաստան ավել է Իր Որդուն» (Հովհ. Ե 22): Հայրը Հարություն ավելց մեռյալին Եղիայի միջոցով և ոմանց էլ՝ ուրիշներով: Նույնպես և Որդին Հարություն ավելց այրու որդուն, քահանայապետի դստերը և [Իր] բարեկամ Ղազարոսին: Նաև Հարություն պիտի տա բոլոր մեռյալներին:

«Կգա ժամանակ, երբ մեռյալները կլսեն Աստծու Որդու ձայնը և լսելով կկենդանանան» (Հովհ. Ե 25):

[Կենդանանան] կյանքի և դատաստանի Համար: Եվ ինչո՞ւ է ասում, թե Հայրը ոչ մեկին չի դատում, քանզի մարգարեն ասում է. «Տերն է դատում իր ժողովրդին» (Սաղմ. 9), նաև «Դատի՛ր ինձ, Տե՛ր, ըստ քո արդարության» (Սաղմ. ԼԴ 24): Սա ոմանք Հոր մասին կարծեցին ասված, որովհետև եբրայական [բնագրում] Ռայ գիրը, որ նշանակում է ասում՝ Հայրը վրեժխնդիր է լինում նրանց Համար, ովքեր աղաղակում են Իրեն: Վրեժխնդրություն է անում նաև դատաստանը, ինչպես Պողոսն է ասում. «Անքնին են նրա դատաստանները» (Հռոմ ԺԱ 33):

Այս մասին պետք է Համառոտ ասել, թե քանի որ Որդին ըստ Հոր կամքի ու ազդեցության է դատում, այդ պատճառով էլ ասվում է, թե Հայրն է դատում: Եվ դատաստանը ավելց Որդուն, որպեսզի պատվեն Որդուն ահեղ դատաստանի Համար, ինչպես պատվում են Հորը (տե՛ս Հովհ. Ե 22-23):

*«Ով Որդուն չի պատվում, չի պատվում և Հորը» (Հովհ. Ե 23):*

Որդին Հոր Արդարությունը, Զորությունը և Իմաստությունն է: Արդ, ով չի պատվում Հոր Արդարությունը, Զորությունը և Իմաստությունը, Հորն ասում է՝ առանց Արդարության, Զորության և Իմաստության:

*«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ, ով իմ խոսքը լսում է ու Հավատում է Նրան, ով Ինձ առաքեց, ընդունում է Հավիտենական կյանքը և չի դատապարտվում» (Հովհ. Ե 24):*

«Դատաստան» [ասելով], այժմ պետք է Հասկանալ դատապարտություն: Ով Հավատում է Հորը և լսում Քրիստոսի խոսքը նա չի դատապարտվի, այլ արդեն իսկ մահվանից փոխվեց դեպի Հավիտենական կյանք:

*«Ես ինքս ինձնից ոչինչ անել չեմ կարող» (Հովհ. Ե 30):*

Նաև դատելու ժամանակ, որովհետև ըստ [Հոր] կամքի է դատում, դրա համար ասում է՝ ոչինչ Ինձնից չեմ անում և իմանում:

*«Եվ իմ դատաստանը ճշմարիտ է» (Հովհ. Ե 30):*

Քանզի ըստ Հոր կամքի եմ դատում:

*«Եվ եթե ես վկայեմ իմ մասին, իմ վկայությունը ճշմարիտ չէ» (Հովհ. Ե 31):*

[Ոմանք] դրանք միմյանց Հակառակ կարծեցին, բայց դա այդպես չէ. այժմ ասաց, թե իմ վկայությունը, որ իմ մասին է, ձեզ ճշմարիտ չի թվում, որովհետև մարդկանցից և ոչ մեկի վկայությունը իր անձի մասին, ճշմարիտ չի թվում:

Իսկ քիչ Հետո, որ ասաց. «Ես վկայում եմ իմ մասին» (Հովհ. Ը 18), սա ցույց է տալիս դեպքերի Հաստատությունն ու ճշմարտությունը, թեպետև այն մարդկանց կարող է ճշմարիտ չթվալ:

*«Հովհաննեսն էր վառվող և լուսավորող ճրագը» (Հովհ. Ե 35):*

Քրիստոս [ասվեց] Լույս, իսկ Հովհաննեսը՝ ճրագ: [Լույս] ասվեցին նաև առաքյալները. «Դուք եք աշխարհի լույսը» (Մատթ. Ե 14), որովհետև լուսավորեցին մարդկային ազգը՝ Հավածելով ամբարշտության խավարը այն մարդկանց միջից, ովքեր Հավատացին և Հավատում են

նրանց քարոզության խոսքին:

*«Եվ Հայրը, որ առաքեց ինձ, նա վկայեց իմ մասին» (Հովհ. Ե 37):*

Թեպետև Հովհաննեսը վկայեց իմ մասին, սակայն Ես մարդկանցից վկայություն չեմ առնում (Հմմտ. Հովհ. Ե 41). քանզի մեծ է Հոր վկայությունը, որ առաքեց ինձ:

*«Քննեցե՛ք գրքերը, քանի որ կարծում եք, թե նրանցով Հավիտենական կյանք կունենաք» (Հովհ. Ե 39):*

Գրքերը քննում է նա, ով չի մնում միայն գրի վրա, որը սպանում է, այլ փնտրում է Հոգու միտքն ու գործությունը, որը ապրեցնում է: Նա, ով չի քննում գրքերը, ի՛նչը պատմում է Քրիստոսի մասին, այնպիսին չի կարող վկայել Նրա մասին:

*«Ձեք կամենում դեպի ինձ գալ, որպեսզի կյանք ունենաք» (Հովհ. Ե 40):*

Գնացեք Հիսուսի մոտ, ոչ տեսանելի վայրը, այլ մտքերի միավորությամբ՝ Նրա կամքին Հասնելու համար:

*«Ես մարդկանցից փառք չեմ առնում» (Հովհ. Ե 41):*

Սաղմոսաց գրքում գրված է. «Տիրջը փառք ու պատիվ մատուցեք» (Սաղմ. ԻԸ 2): Ոչ թե Աստծուն պետք են մեր բարիքներն ու [մատուցած] փառքը, այլ որպեսզի մենք փառավորվենք ու պատվի [արժանանաք] Նրան փառավորելով ու պատիվ մատուցելով, և [այսպիսով] աստվածպաշտներ լինենք:

*«Բայց ճանաչեցի ձեզ, որ Աստծու Հանդեպ կատարյալ սերը չունեք ձեր մեջ» (Հովհ. Ե 42):*

Աստծու սերը Նրա խոսքն է ու Հրամանը: Արդ, որովհետև Աստծու Հրամանը ու Նրա խոսքը չէին կատարում, դրա համար ասաց՝ ձեր անձերում չունեք Աստծու սերը, այլ սուտանուն գիտություն:

*«Ես եկա իմ Հոր անունով և ինձ չեք ընդունում» (Հովհ. Ե 43):*

Հոր անունով եկավ, որովհետև չէր փնտրում իր փառքը, այլ Նրա փառքը, Ով առաքեց Նրան: Եվ ոչ ոքի չէր ասում բարի, բայց միայն իր Հայր Աստծուն, Ում և ասաց՝ մեծ է, քան Ինքը. «Իմ Հայրը մեծ է,



քան Ես» (Հովհ. ԺԴ 28):

Հասկացվում է նաև պարզապես. Իմ Հոր անունով, ա՛յն անունով, որ տրվեց Նրան Հրեշտակից, ըստ խոսքի. «Պիտի ծնվի որդի, և կկոչես Նրա անունը Հիսուս, քանի որ նա պիտի փրկի Իր ժողովրդին մեղքե-րից» (Մատթ. Ա 21): Եվ Հիսուս եբրայերենից թարգմանվում է Փրկիչ:

«Եթե ուրիշ մեկը գա Իր անունով, նրան կը նդունե՞ք» (Հովհ. Ե 43):

Նեոը՝ Քրիստոսի Հակառակը, գալու է իր անունով, որին ընդու-նելու են Հրեաները: Եվ [արդեն իսկ] նրա սպասավորներին ընդունել են, որի համար ասվեց, թե արդեն իսկ բազում նեոեր են եկել:

### ԻԸ

«Ես եմ կենաց Հացը, ով դեպի ինձ գա, չի քաղցի» (Հովհ. Զ 35):

Կենդանի Հացը Բանն Աստվածն է, Ով գորացնում է մարդու սիրտը, Հոգին և կենդանություն է տալիս նրանց, ովքեր լսում և ուսանում են խորախորհուրդ գիտությունը, որ ո՛չ միայն կերակրում, այլև փափկացնում է [նրանց սրտերը] Տիրոջ հանդեպ:

«Ամեն ոք, որ լսում է Հորից և ուսանում է, գալիս է դեպի ինձ» (Հովհ. Զ 45):

Նրան, ում Հայրը հայտնում է, ինչպես և Պետրոսին, նա սովորում է երկնավոր Հորից և մոտենում Քրիստոսին ու միավորվում Նրա հետ:

«Ոչ ոք Հորը չի տեսել, այլ միայն Նա, որ Ասածուց է, Նա՛ է տեսել» (Հովհ. Զ 46):

Բնությունամբ անտեսանելիին ինչպե՞ս կարող է մեկը տեսնել: Իսկ որ ասվեց, թե Հրեշտակները հանապազ տեսնում են Իմ Հոր երեսը, որ երկնքում է (տե՛ս Մատթ. ԺԸ 10), [այդ մասին] ըստ կարողությունս ասվեց Մատթեոսի ավետարանի [մեկնությունում]:

«Ես եմ երկնքից իջած կենդանի Հացը, եթե մեկը այս Հացից ուտի, հավիտենապես կապրի» (Հովհ. Զ 51-52):

Ով լսում է Քրիստոսի վարդապետական խոսքը, և գործում է ըստ [Նրա] խոսքի, այնպիսին Հոգեպես չի մեռնում, թեպետև մարմինն առ

ժամանակ ապականվում է:

«Ով ուտում է Իմ մարմինը և ըմպում Իմ արյունը, կբնակվի Իմ մեջ, և Ես՝ նրա մեջ» (Հովհ. Զ 57):

Մեկը, ով արժանավորապես է ուտում և ըմպում, Նրա մեջ է բնակ-վում Ասածու խոսքը, իսկ ովքեր ուտում են և խմում անարժանորեն, իրենց իսկ դատաստանն են ընդունում, քանի որ չեն զատորոշում Տիրոջ մարմինը և արյունը, ինչպես ասում է երանելի Պողոս առաքյալը (տե՛ս Ա Կորնթ. ԺԱ 29):

«Հիսուս պատասխան տվեց և ասաց. «Մի գործ արեցի, և ամենքդ զարմացել եք» (Հովհ. Է 21):

Մի գործ է անվանում [այն], որ առողջացրեց նրան, ով երեսունութ տարի հիվանդություն մեջ էր:

«Աչքներիդ երևացածի պես մի՛ դատեք» (Հովհ. Է 24):

Ով երեսին է նայում ու դատում աչքի տեսածով, նա չի կարող ար-դարություն դատել, քանզի ասված է, թե մարդը տեսնում է երեսը, իսկ Աստված՝ սիրտը (Հմմտ. Մարկ. ԺԲ 14):

«Մեծ տոնի վերջին օրը Հիսուս կանգնած էր և աղաղակում էր ասելով» (Հովհ. Է 37):

Չատիկն անվանում է մեծ տոն, իսկ «վերջին օր» [տոնի] յոթերորդ օրը, քանզի յոթ օրում էին այն տոնում:

Կանգնած էր Բանն Աստված, քարոզում էր Իր մեծ ու բարձր վարդապետությունը, և այդ էր, որի համար ասվում է՝ «աղաղակում էր», սակայն չէր գոչում մեր այս ձայնով, ինչը և այդպես կարծելն իսկ հիմարություն է:

«Ինչպես ասում է գիրքը. «Նրա որովայնից գետեր կբխեն» (Հովհ. Է 38):

Արդյոք ո՞ր գիրքն է ասում. պետք է փնտրել:

«Հիսուս ասաց. «Երբ Մարդու Որդուն բարձրացնեք, այն ժամանակ պիտի իմանաք, թե Ես եմ...» (Հովհ. Ը 28):

«Բարձրանալ»՝ չի ասում խաչի չարչարանքների համար, քանզի ուլ-քեր խաչեցին, այն ժամանակ չիմացան Նրան, այլ «բարձրացնելը» [այնպես] հասկացիր, ինչպես մարգարեն է ասում. «Կբարձրացնեմ քեզ, Տե՛ր, քանզի ընդունեցիր ինձ» (Սաղմ. ԻԹ 1): Եվ միասին կբարձրաց-նենք Նրա անունը: Արդ, ուլքեր այդպես կբարձրացնեն Մարդու Որդուն, նրանք կարող են իմանալ, որ Քրիստոս է՝ Աստծու Որդին, և չար աղանդների խոսքերից չեն խաբվի:

«Նա ի սկզբանե մարդասպան էր, և ճշմարտության մեջ չմնաց» (Հովհ. Ը 44):

Աշխարհի արարչության սկզբից Ադամին հրապուրելով՝ սպանեց, նույնպես և Կայենին՝ սովորեցրեց սպանել եղբորը:

«Աբրահամը՝ ձեր հայրը, ցանկացավ տեսնել Իմ աշխարհ գալու օրը, տեսավ և ուրախացավ» (Հովհ. Ը 56):

Աբրահամ հայրապետը և նրա նմանները՝ Մովսեսը և մարգարենե-րը, նախապես հոգևոր աչքերով տեսան Քրիստոսի մարմնանալու օրը և խաչի բովանդակ խորհուրդը, որ կատարվեց իր ժամանակին, տեսան և ուրախացան, քանի որ փրկվեցին դժոխքից և մահվանից:

ԻԹ

«Եվ անցնելիս տեսավ ի ծնե կույր մի մարդու: Աշակերտները հարցրին նրան և ասացին. «Վարդապետ, մեղքն ո՞ւմն է, որ կույր է ծնվել. սրա՞նն է, թե՞ իր հորն ու մորը» (Հովհ. Թ 1):

Առաջին իմաստասերներից [առաջացած] աղանդ կա, ուլքեր ասում են, թե մարդկանց հոգիները ավելի վաղ ստեղծվեցին, քան մարմիննե-րը, և [նրանք] նախապես՝ մարմնի մեջ մտնելուց առաջ, հանցանքներ գործեցին, ինչպես մենք ասում ենք աստանայի [համար, թե] մեղանչեց Աստծու հանդեպ: Եվ յուրաքանչյուր անձ ըստ իր [գործած] հանցանք-ների մտնում է [համապատասխան] մարմինների մեջ և տանջվում: Ուլ-քեր սաստիկ մեղանչեցին, խեղանդամի, արատավորի, ցավազարի [մարմ-նի] մեջ է մտնում, որպեսզի առավելագույնս տանջվեն, իսկ ուլքեր չա-փավոր հանցանք գործեցին, առողջ և անարատ մարմինների մեջ [մտան],

որպեսզի չափավորապես տանջվեն: Արտաքին [իմաստասերներն] ասում են, թե այս է պատճառը մարմինների կուրություն, ցավի և այլ արատ-ների: Այսպես ասացին հեթանոսների մանկամիտ իմաստասերները, մա-նավանդ հիմարները, որոնք ցնորվեցին՝ խաբվելով աստանայից:

Իսկ հրեաները, քանի որ միայն գրին են ծառայում, որը սպանում է, համաձայն Մովսեսի խոսքի. «Ես եմ Աստվածը, որ ծնողների մեղքե-րը հատուցում է որդիներին, մինչև նրանց երրորդ սերունդը, ուլքեր ատում են ինձ» (Հմմտ. Ելք Ի 5), կարծում են, թե որդիները տանջ-վում են հայրերի հանցանքների պատճառով:

Այս պատճառով աշակերտները հարցրին Քրիստոսին, թե սա՞ մե-ղանչեց, այսինքն՝ սրա հոգի՞ն մեղանչեց, որ մտավ այսպիսի մարմնի մեջ, թե՞ սրա ծնողները մեղանչեցին, որից սա տանջվում է. համաձայն հրեաների միայն գիրն իմանալուն, թե հայրերի մեղքերն անցնում են որդիներին (Հմմտ. Սաղմ. ՃԸ 14):

Ինչպես սաղմոսերգուն է ասում, ում մեջ հանգչում էր աշակերտը՝ ուսանած լինելով Քրիստոսի գաղտնի գիտություն ու իմաստություն խորհուրդները:

«Հիսուս ասաց. «Մարդու Որդին փառավորվեց, և Աստված փառավորվեց նրանում» (Հովհ. ԺԳ 31):

Քրիստոսին նմանվողները փառավորում են Աստծուն իրենցում, իսկ Աստված փառավորվելով նրանցում՝ փառավորում է նրանց: Արդ, քանի որ Քրիստոս փառավորեց Աստծուն՝ Իր Հորը, [նույնպես] և նրանից փառավորվեց Քրիստոս Աստված՝ Հոր Միածին Որդին:

«Հիսուս ասաց. «Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, Փիլիպպո՛ս, և ինձ չճանաչեցի՞ր, ով ինձ տեսավ, տեսավ Հորը» (Հովհ. ԺԴ 9):

Երևացող մարմնով տեսան նաև հրեաները, քահանայապետներն ու փարիսեցիները, և նրանք, ուլքեր խաչեցին Նրան, բայց Հորը չտեսան: Իսկ ով կարողացավ իմանալ, թե Հիսուսն է Բանն Աստված և Աստծու իմաստությունն ու Զորությունը, ձանապարհը, ճշմարտությունը, Կյանքն ու Դուռը, և այն ամենը, ինչը Քրիստոսի մասին ասվեց սուրբ գրքերում, այնպիսին տեսավ Հորը:

«Եվ ես պիտի աղաչեմ Հորը և նա մի այլ Մխիթարիչ պիտի տա ձեզ, որպեսզի Հավիտյան ձեզ Հետ բնակվի. Ճշմարտության Հոգին» (Հովհ. ԺԴ 16):

Առաջին Մխիթարիչը Քրիստոսն է, երկրորդ Մխիթարիչը՝ ճշմարտության Հոգին: Նույնն է ասում նաև Հովհաննեսը Ընդհանրական Թղթում. «Եթե մեկը մեղանչի, Հոր մոտ Մխիթարիչ ունենք Հիսուս Քրիստոսին՝ մեր Տիրոջը» (Հմմտ. Ա Հովհ. Բ 1):

«Եթե ես եկած և նրանց Հետ խոսած չլինեի, նրանք որևէ մեղք ունեցած չէին լինի» (Հովհ. ԺԵ 22):

Արդյոք ինչպե՞ս իմանանք, [Թե] չէին ունենա մեղք [նրանք], որոնց [Հետ] չխոսեց Քրիստոս կամ Քրիստոսի աշակերտները. և եթե այդպես է, ամենքն էլ, որ Քրիստոսից առաջ ծնվեցին մարմնով, մեղք չունեն, նույնպես և նրանք, որոնց չպատմվեց Նրա մասին:

Արդ, կարծում եմ այսպես է պետք իմանալ, թե միայն Հրեաների վերաբերյալ ասվեց, որոնց [մոտ] եկավ, ուսուցանեց ու Հրաչքներ գործեց, ասկայն նրանք չհավատացին:

Իսկ մեկն էլ ասում է, թե ովքեր չունեն բանականություն, ինչպես մանկիկներն ու Հիմարները, և որովհետև սրանք ոչինչ չգիտեն, [ուստի] և մեղք չունեն, մինչդեռ որոնց Աստված Քրիստոսի միջոցով բանականություն պարգևեց, և բնությամբ գիտեն բարին ու չարն ընտրելը, և արհամարելով բարին՝ գործում են չարը, այսպիսիները բոլորն էլ մեղք ունեն:

## Լ

«Եվ Նրա այս խոսքի վրա, սպասավորներից մեկը մոտենալով ապտակ տվեց Հիսուսին. և Հիսուս ասաց. «Եթե չար խոսեցի, վկայի՛ր, իսկ եթե բարի, ինչո՞ւ ես խփում ինձ» (Հովհ. ԺԸ 22-23):

Կատարվեց մարգարեի միջոցով ասվածը. «Իմ ծնոտներս ապտակի տվեցի և իմ երեսը չգարձրի թքից» (Նաայի Մ 6):

«Այս պատահեց, որպեսզի կատարվի գրվածը, թե՛ նրա ոսկորը չպիտի փշրվի» (Հովհ. ԺԹ 36):

Օրենքի գրքում Քրիստոսի օրինակի՝ գառան Համար, ասվեց. «Նրա ոսկորը մի՛ փշրեք» (Ելք ԺԲ 10):

«Եվ դարձյալ մեկ այլ գիր ասում է. «Պիտի նայեն [նրան, ում խոցեցին» (Հովհ. ԺԹ 37):

Ինչպես Թարգմանեցին Յոթանասնից [Թարգմանիչները], Չաքարիան ասում է. «Պիտի նայեն ինձ, փոխանակ ինձ ծաղրելու կամ իմ առջև պարելու», իսկ եբրայերեն [տարբերակում] «Պիտի նայեն ինձ, որին խոցեցին»: Ավետարանիչն էլ սրանց Համաձայն բերեց այն վկայությունը, որը գրված էր եբրայերենում:

«Ինձ մի՛ մոտեցիր, քանի որ դեռ Հորս մոտ չեմ բարձրացել» (Հովհ. Ի 17):

Քանի դեռ չէր ելել բարձունքների վրա և գերել գերությունը, դրա Համար ասաց. «Մի՛ մոտեցիր ինձ», որպեսզի ունայնաբար մոտեցած չլինես:

Քրիստոսի Համբարձվելուց Հետո ոմանք այսպես մոտենում են Նրա մարմնին, առաքինությունով ու գիտությունով Հոգու աղտը դուրս գցելով և ապա մոտենալով ճանաչում են Նրան [որպես] Աստված՝ Հավասար Հորը և Ամենասուրբ Հոգուն, Դատավոր՝ կենդանիների և մեռելների:

Փառք ամենասուրբ Երրորդությանը, Հավիտյանս. ամեն:



## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ստեփանոսի՝ այս գիրքը գրողի անձի մասին է:

Ո՛վ պատվական քահանայապետ (Դավիթ Արամոնեցի), Հրաման անելով Ձեր Քրիստոսասեր Հայրությունից՝ ըստ կարողության շարադրեցի այն, ինչ ընտրեցի նախկին մեկնիչների չորս ավետարանների [մեկնություններից] և այն, ինչ մեզ դժվար թվաց մեկնության համար:

Մատթեոսի ավետարանը մեկնվեց ըստ կարգի, իսկ մյուս ավետարանների [պարագային] այն, ինչ տարբերվում էր Մատթեոսի ավետարանից: Այս [ամենին] ձեռնամուխ եղա Ձեր Հրամանին հնազանդվելով և մաղթելով աղաչում եմ, որ Ձեր քրիստոսը նկալ աղոթքներում հիշեք և ինձ՝ անարժանիս, որ թերևս արժանի դառնամ մի փոքր մաս ունենալու Ձեր մեծագործություններից: